ԱՊԱՐԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ՆԻԳ - ԱՊԱՐԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ ԲԱՐՁՐ ԴԱՍԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՊԱՐԱՆ

2009թ.

«Նիգ-Ապարան» ուսումնական ձեռնարկը տպագրվում է Ապարանի ավագ դպրոցի մանկխորհրդի որոշմամբ և «ԿՀԿԶ» հիմնադրամի աջակցությամբ:

Խմբագրական-հրատարակչական հանձնախումբ՝
Լիլիկ Քոչարյան (խմբագիր),
Արտակ Դավթյան,Նարինե Հովհաննիսյան, Արմենուհի Հովհաննիսյան,
Լարիսա Գալստյան, Նվարդ Բարսեղյան, Լուսինե Թովմասյան, Չինար Հայրապետյան,
Աննա Փարվանյան, Հայկուհի Քոչարյան
Համակարգչային ձևավորումը՝ Լիլիթ Թադևոսյանի

Ուսումնական ձեռնարկը ներկայացնում է ամփոփ տեղեկություններ Ապարանի տարածաշրջանի՝ պատմական Նիգ-Ապարան գավառի պատմության, աշխարհագրության, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև բանահյուսության, գրականության և պատմամշակութային հուշարձանների մասին:

2009

Առաջաբան

Սիրելի՛ ընթերցող,

Սիգ-Վպարան գավառի մասին գոյություն ունեն բազմաթիվ հիշատակություններ, փաստեր ու տեղեկություններ տարբեր գրքերում ու ձեռնարկներում, սակայն «Կրթություն հանուն կայուն զարգացման» հիմնադրամի առաջարկությամբ և աջակցությամբ Վպարանի ավագ դպրոցը նպատակահարմար գտավ ի մի բերել գոյություն ունեցող փաստական նյութը,համակարգել և ստեղծել մի ուսումնական ձեռնարկ, որը կօգնի քեզ անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերել Վպարան աշխարհի պատմության, աշխարհագրության, մշակույթի մասին:

Հուսով ենք, որ այս ձեռնարկը կօգնի քեզ՝ մոտիկից ճանաչելու ու սիրելու պատմական Հայաստանի մեկ պատառիկ «...փոքրագույն գավառաց Վրարատայ եւ սակաւայուշ ի պատմութենէ Սիգ կամ Նգատուն» գավառի պատմությունը:

Ձեռնարկը նախատեսվում է որպես լրացուցիչ ուսումնական նյութ պատմության դասընթացի համար:

Հայոց լեզվի և գրականության
ուսուցչուհի Լ.Ղոչարյան

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ԱՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Ապարանը, որը նշանակում է պալատ(նախկին Քասաղը այս անունը ստացել է Մոկաց Ապարանք գյուղի մոտ գտնվող «Ապարանից Ս. Խաչ» վանքի մասունքն այս շրջանը փոխադրելու պատճառով), հնում կոչվել է Քասաղ: Առաջին անգամ հիշատակում է Պտղոմեոսը (II դ) Կասալա (Casala) ձևով:

Ապարանի տարածքում կատարած պեղումները ցույց են տալիս, որ այստեղ մարդիկ ապրել են դեռևս 4-5 հազար տարի առաջ : 1957թ. և 1962թ. 1978-1983թթ. 1983թ. Ապարանում կատարված պեղումների ժամանակ հայտնաբերել են խեցեղեն իրեր, պղնձե առարկաներ,ապարանջաններ, ականջօղեր և այլն, որոնցից հնագույնները վերագրվում են մոտավորապես Քա III – I հազարամյակներին Ապարանի բերդի մնացորդների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ պատերի հաստությունը 6-7մետր է, իսկ ճակատային մասը 1.5-2 մետր հաստություն է ունեցել: Դեպի մուտք տանող ճանապարհը դժվարացնելու նպատակով, մուտքից 20-30 մետր հեռավորության վրա, կառուցված են եղել 1.5-2 մետր հաստության կրկնակի պարիսպներ, որից միայն հետքեր են մնացել: Բերդը Քա III հազարամյակի վերջի կամ Քա I հազարամյակի սկզբի կառույց է: I դարում այստեղ գոյություն ուներ մեծ քաղաք, ահա այս քաղաքն էր, որ Տրդատ Ա-ն նվիրեց Գնթունիների տոհմին:

Հունարեն արձանագրության համաձայն՝ քաղաքը կոչվել է Արտա...ա: Արձանագրություն կրող քարը սկզբում եղել է միջնաբերդում, այնուհետև գյուղացիները իջեցրել են ներքև, որտեղ էլ 1908թ. հայտնաբերել է Գարեգին Հովսեփյանցը. ինչը այժմ գտնվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում:

Այսպիսով, ի դեմս Գնթունիների, .I դարում Նիգ-Ապարանում ժառանգական իրավունքով հաստատվեց իշխանական մի տոհմ, որը անփոփոխ իշխեց մինչև X դարի առաջին քառորդը: IV դարում Գնթունիները Նիգ-Ապարանում կառուցում են Քասախի բազիլիկ եկեղեցին, որը կանգուն է մինչև այժմ:

Ապարանի Սուրբ Խաչ եկեղեցին
Քասախի Բազիլիկ տաճարը IV դ.սկզբ:
Միջնադարում կորցրել է իր ծածքը:Կրկին ծածկի տակ է առնվել 1877թ. Մշեցի գաղ - թականների կողմից:Գործել է ըդհուպ XX դ. 40-ականները: 40-ականների վերջին Օգտագործվել է որպես կոլտնտեսության պահեստ,բայց շուտով՝1956թ-ից վերա - դարձվել է բնակավայրի ծխական համայնքին:
1962թ-ին կրկին դադարեցվում է գործունեությունը՝ վերակառուցման պատրվակով՝ քանդվում իջեցվում է գերանածածկը:
1981թ. սկսվում է վերանորոգման աշխատանքները,1996թ.տաճարը վերաբացվում է: ***

«Գահնամակի» համաձայն՝ Գնթունիները զբաղեցրել են 21-րդ գահը, իսկ «Զորանամակի» համաձայն՝ նրանք կարող էին մարտադաշտ դուրս բերել 300 հեծյալ զինվոր:



V դ-ից. հայտնի է նաև Գնթունյաց տան նահապետ Տաճատ Գնթունին:, 451թ. նա իր գնդով, որի մեջ մեծ թիվ էին կազմում ապարանցիների, հետ) մասնակցել է Ավարայրի ճակատամարտին : Քաջ զորականը երրորդ գնդի հրամանատար Թաթուլ Վանանդեցու օգնականն էր: Ավարայրում Տաճատը հերոսաբար ընկել է իր19 քաջ զինակից ապարանցիների հետ:

Եղիշեն ընկածների թվում նշել է. «Յազգեն Գնթունեաց Զարմանալին Տաճատ իննևտասն արամբք»:

IX դարի վերջին քառորդում Գնթունիները բարձր դիրք էին գրավում Բագրատունիների արքունիքում :Վասակ և Աշոտ Գնթունիները ապստամբում են Աշոտ Երկաթի դեմ՝ փորձելով անկախանալ,սակայն 922թ. Աշոտ Երկաթը ջախջախում է նրանց զորագունդը: Վասակը փակվում է Շամշուլդե բերդում,որը Աշոտ Երկաթը չի կարողանում գրավել: Նրանք երկրորդ անգամ են ապստամբում վրաց Գուրգեն իշխանի օգնությամբ: Այս անգամ Աշոտ Երկաթը հաղթում է նրանց և դաժանորեն պատժում: Հավանաբար Աշոտ Երկաթը նրանցից վերցրել հայրենի Նիգ-Ապարանը և հանձնել Բջնիի բերդի տերերին՝ Պահլավունիներին:Այստեղ էլ ավարտվում Գնթունիների իշխանական տան պատմությունը:1021թ.Հայաստան են արշավում Ատրպատականի Ռավվադյանները ու Գանձակի Շադդադյանները: Պատմիչ Մատթեոս Ուռհայեցին իր

«Ժամանակագրության» մեջ գրում է . «... դելմիկների թագավորը, զորահավաք անելով գալիս հասնում է հայոց Նիգ գավառը»: Այդ ժամանակ Վասակ Պահլավունին հանգստանում էր Բջնիի բերդում, երբ նրան հայտնում են լուրը,
նա շտապում է Նիգ : Ոռհայեցին հաղորդում է. «... ճանապարհին նրանք հանդիպեցին մի գյուղի և ականատես եղան , թե ինչպես այլազգիները գլխովին կոտորել էին գյուղի բնակչությանը, ինչպես նրանք շրջապատել էին եկեղեցին և անխնա կոտորում էին ներսում պատսպարվածներին: Քաջ Վասակը, տեսնելով դա, առյուծի պես մռնչաց և հարձակվեց այլազգիների զորքի վրա և կոտորեց 300 հոգի. »
XII դ. սկզբին Հայաստանի այլ գավառների թվում թուրք-սելջուկները գրավում են նաև Նիգ-Ապարանը: Նույն դարի վերջին ու XIII դարի սկզբին Զաքարյան եղբայրները սելջուկ-թուքերից ազատագրեցին Հայաստանի մեծ մասը : Նվաճած հողերը նրանք ժառանգական իրավունքով հանձնեցին իրենց հավատարմորեն ծառայած զորականներին և հին տոհմերի շառավիղներին :
Զաքարե ամիրսպասալարը Նիգ-Ապարանը և Աշտարակի մի մասը հանձնում է Վաչուտյաններին: Վաչե Վաչուտյանն այդ հողերը ստացել է 1206-1208թթ.
XIV դարի 50-ական թվականներին Չոբանյան Մելիք Աշրաֆի ասպատակությունների հետևանքով Վաչուտյանները, կորցնելով իրենց հողերը, հեռանում են պատմության թատերաբեմից:
Արևելյան Հայաստանն ընդգրկված էր Չուխուր-Սա՝դի, Ղարաբաղի, և Շիրվանի բեկլարբեկությունների մեջ:
XVI դարում թուրք-իրանական նոր սահմանի հաստատումից հետո, Չուխուր-Սա՝դի վիլայեթի մեջ որպես նահիանե կամ մահալ իրենց նոր անուններով մտան Նիգը (Ապարան) և այլ գավառները:
Ընդունված է այն կարծիքը, որ XVII դարի սկզբներին պարսկա-թուրքական պատերազմների հետևանքով Ապարանը հիմնովին ավերվեց, ամայացավ և զրկվեց հայ բնակչությունից (շուրջ երկու դար): Սակայն իրականում Շահ-Աբասի բռնագաղթից հետո Նիգ-Ապարանում դարձյալ ապրել ու ստեղծագործել են հայեր: Այդ են վկայում Մելիքգյուղ, Զովունի, Մռավյան, Աստվածընկալ, Քասաղ գյուղերի գերեզմանոցներում 1620-ական թվականներից հետո կատարված թաղումները:
Նիգ- Ապարանը պարսկական լծի տակ մնաց մինչև XIX դարի 20-ական թվականների վերջը, մինչև ռուսական զորքերի կողմից Արևելյան Հայաստանի ազատագրումը:
1826թ. ամառը Նիգ-Ապարանի պատմության ամենաողբերգական ժամանակաշրջաններից էր: Այդ ժամանակ իր շքախմբով ու զինվորներով Ապարան էր եկել Երևանի սարդարի փոքր եղբայր Հասան խանը, որ ծրագրում էր Փամբակի վրայով հարձակվել Թիֆլիսի վրա: Հասան խանը Շահ Աբասի նման չտեղահանեց գավառի բնակիչներին, այլ սկսեց դաժանորեն ոչնչացնել բոլորին: Ապարանը մի կարճ ժամանակաշրջանում զրկվեց հայ բնակչությունից:
Ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներից հետո՝ 1828-1831թվականներին, Արևմտյան Հայաստանից Արևելյան Հայաստան գաղթեցին շուրջ 140 հազար հայեր, որոնցից 8000 մարդ հաստատվեցին Նիգ-Ապարանում:
Ողբերգական և միաժամանակ հերոսական էր 20-րդ դարասկիզբը հայ ժողովրդի համար: Օգտվելով 1-ին համաշխարհային պատերազմի ընձեռած պատեհ առիթից՝



Թուրքիան իրագործեց իր վաղեմի ծրագիրը. հայաթափեց ողջ Արևմտյան Հայաստանը: Դրանով չբավարարվելով՝ նա ցանկացավ հայազրկել նաև Արևելյան Հայաստանը՝ վերջնականապես լուծելով հայկական հարցը: Թվում էր՝ ոչինչ չի կարող խանգարել նրան իր զազրելի ծրագրերի իրագործման գործում, բայց կատարվեց անհնարինը. նորից պոռթկաց հայ ազատատենչ ոգին, փայլատակեց Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի ճակատամարտերում:

Բաշ-Ապարանի ճակատամարտ (1918թ. մայիսի 22-29)

Թուրքական հրամանատարությունը, իր զորքերը բաժանելով չորս զորախմբերի, հարձակումը զարգացնում է հետևյալ ուղղություններով.

Առաջին զորախումբը (Մյուրսել բեյի գլխավորած 5-րդ դիվիզիան), նպատակ ունենալով գրավելու Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսը, հարձակվելու էր Վորոնցովկայի ուղղությամբ դեպի Բոլնիս-Խաչեն, Բորչալու, ուր պետք է միանար Ղազախից դեպի Թիֆլիս շարժվող թուրքական զորքերին:

Երկրորդ զորախումբը (Ջամիլ-Ջավադ բեյի գլխավորած 11-րդ դիվիզիան) պետք է հար-ձակում գործեր Ջաջուռ-Համամլու-Ղարաքիլիսա-Ղազախ-Ելիզավետապոլ ուղղությամբ և միանալով այդ շրջանների թուրք զինյալ խմբերին՝ շարժվեր դեպի Բաքու:

Երրորդ զորախումբը (Էսադ փաշայի 9-րդ դիվիզիա)հարձակվելու էր Ալեքսանդրապոլ-Համամլու-Բաշ -Ապարան ուղղությամբ: Այդ զորախմբի նպատակն էր արագորեն անցնել Ապարան-Աշտարակ կամ Ապարան-Եղվարդ գիծը և մոտենալով Երևանին՝շրջափակման մեջ վերցնել երևանյան զորախումբն ու անհրաժեշտության դեպքում փակել Հրազդան և Սևան ձգվող նահանջի ուղիները:

Արսեն Տեր-Պողոսյան
Ռաֆֆու «Խենթի» հերոս
Ս.Տեր-Պետրոսյանի որդին

Չորրորդ զորախումբը (36-րդ դիվիզիա) Ալեքսանդրապոլից հարձակվելու էր դեպի Սարդարապատ*:

Ապարանի հերոսամարտը սկսվել է 1918թ. մայիսի 22-ի երեկոյան, երբ Էսադ փաշայի դիվիզիան և Քյազիմ փաշայի գնդերը մտել են Ապարանի սահմանը, իսկ առաջապահ ջոկատները երևացել են Միրաքի կամրջի դիմաց, և թնդացել է նրանց վրա արձակված աշխարհազորայինների հրացանազարկը:

Ինքնապաշտպանության հրամանատարությունն իրենց վրա են վերցրել Սեդրակ Ջալալյանը ու Արսեն Տեր-Պողոսյանը, ստեղծվել է պաշտպանության խորհուրդ Հովհաննես քահանա Տեր-Մինասյանի նախագահությամբ:

Սեդրակ Ջալալյանն ու Արսեն Տեր- Պողոսյանն ուսումնասիրելով տեղանքը, որոշել են պաշտպանության 1-ին գիծը հաստատել Նիգավան Միրաք գյուղերի միջև ձգվող բարձունքներում:

Մայիսի 22-ին պաշտպանության 1-ին, ինչպես նաև ուղղակի Ապարան գյուղի մոտ ձևավորվող 2-րդ գծում աշխարհազորայինների թիվը հասել է 2500-ի: Բոլորն էլ զինված են եղել հրացաններով:

Թուրքերը, որ ոչ մի դիմադրություն չէին սպասում, առաջապահ ջոկատների գնդակոծությունից շփոթվել և մեծ կորուստներ տալով՝ հետ են քաշվել՝ սպասելով մայիսի 23-ի լուսաբացին:

«... Իրիկվա դեմ միրաքցի Մստոն մտավ օդեն, թե՝ տղեք, թուրքը լցվավ Միրաք. առավոտ էստեղ կհասնի: Հելանք 8-10 տղամարդ դբա Էրևան՝ կառավարությունից օգնական զորք ուզելու: Ալի-Քուչակ չհասած՝ սպիտակ ձիավորը դեմից մի խումբ տեսանք:

-ՈՒ՞ր եք գնում,- հարցրեց սպիտակ ձիավորը /գերեզմանիդ ղուրբան, Արսեն աղա. մեկ կա հազար արժի, հազար կա՝ մեկ չարժի/: Պատմեցինք: «Ետ դարձեք, - ասաց,- կառավարությունը օգնական զորք չունի. Սարդարապատում կռիվ ա: Ետ դարձեք, հույսը մենք ու մեկ էլ՝ Աստված: Իջավ ձիուց, քարին նստած թղթեր գրեց-ուղարկեց գյուղրանք, հեծավ ձին, գնացինք... գերեզմանիդ ղուրբան Արսեն աղա...չուրի Ալի-Քուչակից հասանք Ապարան, գյուղրանքից տղեքը լցվան...Քահանան դուրսը սեղան սարքեց, պատարագեց, սուրբ նշխարք առանք, ելանք դիրք բռնելու...»



ԴՐՈ

ԴՐԱՍՏԱՄԱՏ ԿԱՆԱՅԱՆ
1883–1956

/ականատեսի պատմածը/:

Սարդարապատի հաղթանակի լուրը հոգեբանական մեծ ազդեցություն ունեցավ այդ նույն ժամանակ Բաշ-Ապարանում ու Ղարաքիլիսայում կռվող հայկական զորքերի վրա. արդեն սկսված նահանջը անմիջապես դադարեց:

Գանձակեցի Ջեմլյակ

Թուրքական զորքերի դեմ պաշտպանական մարտերն սկսել են Քուլուջա (Վարդենիս) գյուղում հավաքված աշխարհազորայինները՝ Դ. Մելիքսեթյանի և

Մ. Հովհաննիսյանի գլխավորությամբ: Շուտով նրանց օգնության են եկել Սարդարապատից:

Սեդրակ Սարգիսի Ջալալյան

Բաշ-Ապարանը թողնելով՝ Դրոյի մարտական ջոկատը քաշվեց հարավ՝ դեպի Ալի Քուչակ, իսկ այնուհետև դիրքեր գրավեց Ղազնաֆար և Ղարաքիլիսա գյուղերում: Մայիսի 24-ին Դրոն ստանում է համալրում, որն առանձնացվել էր Սարդարապատի խմբավորումից (6-րդ հրաձգային գունդը՝ գնդապետ Դոլուխանյանի, պարտիզանական հեծյալ գունդը՝ Ջալինսկու և սահմանապահ գումարտակը՝ գնդապետ Սիլինի գլխավորությամբ): Նրանց մարտական առաջադրանքն էր՝ ուժեղ հակագրոհով հետ շպրտել թշնամուն Բաշ-Ապարանից: Կռվողներին իրենց խմբերով միացել են նաև Արսեն Տեր-Պողոսյանը, Սեթոն (Սեդրակ Ջալալյան), բուլանըխցի Մուրադը, բաշգյառնեցի Մակեդոնը, ինչպես նաև եզդիները (մոտ 1500 հեծյալ և հետևակ) Ջհանգիր աղայի գլխավորությամբ: Ամբողջը միասին հաշվվում էր 5000 մարդ: Մայիսի 25-ին թուրքերին հետ են շպրտում Բաշ-Ապարանից: Երեք օր տևած մարտերից հետո հակառակորդը քաշվում է Չինգիլդաղի ու Քուլուջայի բարձունքները: Այս կռիվներում ընկավ հերոս պարտիզան Զեմլյակը (Նանումյան), որի հեծյալները Ղոնդաղսազ գյուղի մոտ սրակոտոր էին արել 30 ասքյար և մեկ սպա: Ինչպես Սարդարապատում, այստեղ ևս հոգևորականությունն իր մասնակցությունը բերեց: Տեր Գևորգ Հայրապետյանը հավաքել էր իր գյուղի՝ Փամբիի ծխականներին, որոնց միացել էին հարևան գյուղերի բնակիչները: Նրանք Բաշ-Ապարանի հերոսամարտում իրենց դրսևորեցին խիզախորեն:Մայիսի 29-ին ջախջախված թուրքերը փախչում էին Համամլուից (Սպիտակ): Երևանը թուրքական 9-րդ դիվիզիայի կողմից աքցանի մեջ առնելու սպառնալիքը վերացվում է:

Մակեդոն Հակոբջանյան

Ըստ խմբապետ Մարտիրոս Աբրահամյան-Բաշգառնեցու՝ մեր ուժերն էին. պարտիզան հեծյալ գունդը-չորս հարիւրակ-շուրջ 650 սուր, գնդապետ Ջալինեանի գնդից՝ 100 սուր, Արամի մօտ եղած ձիաւորները, Աբարանցի Մատթէոսի գլխաւորութեամբ՝ 20 սուր, հետեւակ 6-րդ գնդից մէկ գումարտակ, շուրջ 300 սւին, Աբարանցի Սէթոյի տեղացի ձիաւորները՝ 30-35 սուր... մօտաւորապէս 800 սուր եւ 300 սւին, չհաշուած տեղացիներից կազմակերպւած 1000 հոգինոց հետեւակազօրը:

Խմբապետ Մարտիրոս Բաշգառնեցի

հակառակորդն ունէր 6 թնդանօթ՝2 դաշտային եւ 4 լեռնային, մինչդեռ մենք ունէինք 2 լեռնային թնդանօթ (մէկը փչացած): Բաշ-Աբարանում կենտրոնացւած էր թշնամու զօրասիւն՝ 9-10 հազար հոգուց բաղկացած...:

Գլխավոր շտաբի հաղորդագրությունը.

«Բաշ-Ապարանի ուղղությամբ հակառակորդը, ետ շպրտելով Ղազնաֆարի (Արագած) ու Ղարաքիլիսայի (Հարթավան) համար մղված մարտերում, մայիսի 29-ի երեկոյան ջախջախվեց՝ դաշտում թողնելով 200 սպանված, երկու գնդացիր, երկուհարյուրից ավելի հրացան և զինամթերք: Մեր կորուստներն աննշան են: Զորքի ոգին գերազանց է»:

Մայիսի 29: Թուրքական դիվիզիայի արյունաքամ մնացորդները սպիտակ դրոշ են պարզել:

Ապարանի ինքնապաշտպանական հերոսամարտն ավարտվել է փառահեղ հաղթանակով:

...Մեծ է Ապարանի ինքնապաշտպանական հերոսամարտի պատմական նշանակությունը: Այն համազոր է Սարդարապատին:

Անմահ է վասն հայրենյաց ընկած ապարանցի և հարևան գավառներից օգնության եկած աշխարհազորայինների, զինվորների հիշատակը:

ԲԱՇ-ԱՊԱՐԱՆԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԱՊԱՐԱՆՑԻՆԵՐԸ

Փանոս
Գևո

Մուրադյան Գրիգոր
ինքնաշարժիկ

Տեր-Տաճատ
Սարգիս Ղազարյան

Թառնգրյան
Ռուբեն

Սահակյան
Ստեփան

Ավետյան
Սդրակ

Մարտիրոսյան
Մեծր

Փարվանյան
Աշոտուր

Ավետյան
Վարդան

Գևորգյան
Դավիթ

Սամսարյան զոհված

Միրզոյան
Նախշուն

Վարդանյան
Կարապետ

Սոսե Սինամը
Սինամ Ավետյան

Ավետյան
Արամ

Ջամալյան
Նախշուն

1941-1945թթ.

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԸ

1941թ.հունիսի 22-ին ֆաշիստական Գերմանիան հարձակվեց ԽՍՀՄ-ի վրա:

Պատերազմի հենց առաջին օրերից, բոլորի հետ ուս-ուսի տված, թշնամու դեմ ոտքի են ելել հազարավոր ապարանցիներ: Ապարանցիները մարտնչել են Լենինգրադում, Մոսկվայի մատույցներում, Ստալինգրադում, Կովկասյան լեռներում, Թամանում, Օրյոլ-Կուրսկում, Օդերի ափին, Բեռլինում, Պորտ Արտուրում:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել են 6151 ապարանցիներ, նրանցից 2650-ը արժանացել են Խորհրդային Միության շքանշանների ու մեդալների, իսկ 2541 ապարանցիներ զոհվել են: 1941 թ. վերջին, ԽՍՀՄ պաշտպանության պետական կոմիտեի որոշմամբ կազմակերպվել են ազգային զորամիավորումներ: Կազմակերպվել են Հայկական 89-րդ, 309-րդ, 408-րդ, 409-րդ հրաձգային դիվիզիաները: Այդ դիվիզիաներում ևս մեծ թիվ էին կազմում ապարանցիները:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱԶԻԶ

1941թ.նշանակվել է 89-րդ հրաձգայինդիվիզիայի քաղբաժնիպետ:1942թ. նշանակվելէ 1350-րդ զենիթա-հրետանային գնդի հրամա-նատարի քաղգծով տեղակալ: Այդ գնդի կազմում կռվել է Հյուսիսային Կովկասում, Կրասնոդարի երկրամասում, Ղրիմում, Ուկրաինայում, Բոլոռուսիայում, Լեհաստանում և հասել Բեռլին: Պարգևատրվել է Լենինի,Մարտական կարմիր դրոշի երկու, Հայրենական պատերազմի 1-ին և 2-րդ աստիճանի,Կարմիր աստղի շքանշաններով, մարտական 13 մեդալներով:

ՀԱԿՈԲՅԱՆՅԱՆ ՄՈՎՍԵՍ

Նրա անմիջական մաս-նակցությամբ Միքայել Մուրադյանի գումարտակի զինվորները գրավել են Դոլգայա լեռը: արժանացել է Մարտական կարմիր դրոշի, Հայրենական պատերազմի 1-ին և 2-րդ աստիճանի,Կարմիր աստղի երկու շքանշանների:: Նա Ռայխստագի պատին թողել է «Ապարան-Բեռլին: Մայոր Մովսես Հակոբյան» մակագ-ությամբ

89-րդ դիվիզիայի քաղբաժնի առաջին պետ է եղել գնդապետ , Ազիզ Կիրակոսյանը (Արայի): 400-րդ գնդի քաղղեկն էր

կապիտան Մովսես Հակոբյանը (Երնջատափ), նույն գնդի մատակարարման բաժնի պետն էր Գևորգ Սիրունյանը (Քուչակ), 400-րդ գնդի հրետանու պետն էր Լենինգրադի պաշտպանության մասնակից կապիտան Գրիգոր Հովհաննիսյանը (Արայի), նույն գնդի գումարտակի շտաբի պետն էր Հովհաննես Հայրապետյանը (Քուչակ), դասակի հրամանատար էր Սամվել Մալխասյանը (Լուսագյուղ):

89-րդ դիվիզիան մարտի մեջ է մտել 1942թ. սեպտեմբերի 25-ին : Առաջին մարտից առաջ, ԽՍՀՄ Պաշտպանության պետական կոմիտեի հրամանով, լավագույն սերժանտներից և զինվորներից ստեղծվել է ապարանցիների հարվածային վաշտ, որի մարտական գործողությունները ղեկավարել է Ազիզ Կիրակոսյանը: 89-րդ հրաձգային դիվիզիայում մեծ թիվ են կազմել շարքային ապարանցիները: Ապարանցի Եղիշե Սարգսյանն իր հուշերում գրել է, որ ջոկեր ու դասակներ կային , որոնք կազմված էին հիմնականում ապարանցիներից : Նրա հետ նույն ջոկում էին ապարանցիներ Ալեքը, Ջանոն, Սարգիս Մարգարյանը, Անդրանիկ Գրիգորյանը, Գոդե Աբրահամյանը: Եղիշե Սարգսյանը գրել է, որ վերջին երկուսը Կերչում զոհվել են:

ՎԱՍԻԼՅԱՆ ԲԵԳԼԱՐ

Պարգևատրվել է Հայրենական պատերազմի1-ին,Փառքի 2-րդ, 3-րդաստիճանի շքանշաններով, մեդալներով:

Քսանամյա Բեգլար Վասիլյանը (Լուսագյուղ) մասնակցել է 1942թ. Գրոզնի քաղաքի շրջակայքում մղված ահեղ մարտերին, 89-րդ դիվիզիայի առանձին սակրավորական գումարտակի կազմում հասել է Բեռլին: Նա Ռայխստագի պատին թողել է.«Ապարան-Բեռլին Վասիլյան Բեգլար» հայտնի մակագրությունը:

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ

Հայկական 390-րդ դիվիզիայի առանձին գնդացրային վաշտում է ծառայել Բագրատ Խաչատրյանը (Մուլքի): Նովոռոսիյսկի մոտ, գտնվող Իմբեշևկա ավանի ազատագրման մարտերում ցուցաբերած խիզախության համար արժանացել է Կարմիր աստղ շքանշանի:

Վարդենիսցի Սերգեյ Մնացականյանը եղել է հետախուզական վաշտի դասակի հրամանատար: Մարտերով հասել է Բեռլին: Պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով: «Կարմիր աստղ» շքանշանով են պարգևատրվել նաև ապարանցիներ Գուրգեն Միրզոյանը, Արմեն Սարգսյանը և շատ ուրիշներ:

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

Հայկական 408-րդ դիվիզիայում նույնպես ջոկեր կային, որոնք կազմված էին միայն ապարանցիներից: Ապարանցի Գարուշ Ղազարյանի ջոկի անդամները՝ հրամանատարից սկսած մինչև վերջին զինվորը,1942թ.մայիսին էին ավարտել 10-րդ դասարանը:Տղաներից միայն երկուսն էին գյուղերից՝ Խաչիկ Հովհաննիսյանը (Վարդենիս) և Սուրեն Թորոսյանը (Արագած), մյուսները՝ Գերասիմ Խաչատրյանը, Ինգլիզ Համբարձումյանը, Ավետիք Գասպարյանը, Արտուշ Համբարձումյանը, Հովհաննես Մկրտչյանը, Ապարան ավանից էին: Արմավիրի մոտ Գարուշ Ղազարյանը զոհվել է իսկ մյուսները շարունակել են պատերազմը: Բոլորն էլ տարբեր ժամանակներում պարգևատրվել են«Խիզախության համար» մեդալով:

ՄԿՐՏՉՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

Արծիվները

Թշնամու դեմ քաջաբար կռվել են նաև օդաչուներ ապարանցի Ազատ Իսահակյանը, լուսագյուղցի Ալեքսան Գրիգորյանը, արագածցիներ Արշալույս Թորոսյանը, Ալբերտ Հարությունյանը:

Քյարամ Մելքոնյան(Երնջատափ) Կատարել է մարտական 62 թռիչք ,ոչնչացրել է թշնամու ռազմական օբյեկտներ, տեխնիկա, կենդանի ուժ: Մասնակցել է Բեռլինի գրոհին: Պարգևատրվել է Մարտական կարմիր դրոշի, Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի, «Կարմիր աստղ» շքանշաններով:

Արշալույս Թորոսյանը կռվել է Բրյանսկի ռազմաճակատում: Մասնակցել է Լենինգրադի համար մղված օդային մարտերին: Զոհվել է 1944թ. հուլիսի 19-ին Չեխոսլովակիայում:

Ապարանի դուստրը

ՍԻՄՈՆՅԱՆ ԼԱՐԻՍԱ

Ապարանի հարյուրավոր որդիների հետ թշնամու դեմ կռվել է նաև Լարիսա Սիմոնյանը(Վարդենիս):1943թ. մարտի 11-ին հանձնել է ավարտական քննությունները, ստացել մեխանիկ-վարորդի որակավորում և ուղարկվել ռազմաճակատ՝ որպես տանկի մեխանիկ-վարորդ: 1943թ. Նալչիկի մոտ 19-ամյա Լարիսան առաջին անգամ իր տանկը տարել է գրոհի:Աչքի է ընկել Խարկովի համար մղված մարտերում և արժանացել «Կարմիր աստղ» շքանշանի: Բրեստի գրավման համար նրան հանձնվել է Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշան: 1945թ. սկզբին ծանր վիրավորվելէ: Հաղթանակի մասին իմացել է հոսպիտալում:

Պարտիզանները

Ապարանցի Գրիգոր Ալեքսանյան, կռվում վիրավորվել և մնացել էր թշնամու թիկունքում: Մի խումբ զինվորների հետ նա հասել է բելոռուսական Զապրոգդեյ գյուղը : Իվան Կուլգավինը թաքցրել է նրանց:Նա ապաքինվել է և Իվան Կուլգավինի օգնությամբ կապվել պարտիզանների հետ, դարձել Կիրովի պարտիզանական ջոկատի 2-րդ դասակի հրամանատար: Մասնակցել ճանապարհների ականապատմանը, խորտակել կամուրջներ: 1944թ. մարտին ոչնչացրել է Ուտախովա գյուղի ֆաշիստական կայազորը: Պարգևատրվել է Փառքի 3-րդ աստիճանի Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշաններով:
Ապարանցի պարտիզաններ էին նաև Վահրամ Սարգսյան (Բուժական), Լևոն Տերոյանը (Վարդենուտ), Աթանես Սիմոնյանը (Զովունի): Պարգևատրվել են «Մարտական խաչ» շքանշանով:

Փառքի շքանշանի ասպետները

ՎԱՐԴԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՆԱՐԻԲԵԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԽԱՉԻԿ ՍԵՄԵՆՅԱՆ

Նարիբեկ Ավետիսյանը Փառքի III աստիճանի շքանշանը ստացել է 1943 թ. Կուրսկի մոտ մղվող մարտերից մեկի ժամանակ փոխարինում է վաշտի ծանր վիրավոր հրամանատարին և հաջողությամբ ավարտում գրոհը:Փառքի II աստիճանի շքանշանը ստացել է առաջինը իր ջոկատով Դիսնա քաղաք մտնելու համար:Նույն

խիզախությամբ շարունակել է մարտը Լատվիայի ազատագրման համար:Փառքի I աստիճանի շքանշանը ստացել է 1945թ.:Մահացել է 1995թ:
Վարազդատ Աբրահամյանը Փառքի 3-րդ աստիճանի շքանշանը ստացել է Արևմտյան Ուկրաինայի ազատագրական մարտերում, Վիսլայի գետանցման ժամանակ և Պրագայի օպերացիայի ժամանակ ցուցաբերած արիության համար:
Խաչիկ Մելիքսեթյանը Փառքի 3-րդ աստիճանի շքանշանը ստացել է Լովեց Բլինի գյուղերի, Շաուլյայի ազատագրման համար մղված մարտերում ցուցաբերած քաջության և խիզախության համար:

1941-1945 թթ. ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱՎՈՐՆԵՐԸ

Ավետիսյան Պետրոս.

Պետրոս Ավետիսյանը եղել է 62-րդ բանակի 397-րդ հակատանկային գնդի մարտիկ: Կռվել է Ստալինգրադում, Լենինգրադում, մասնակցել է Կիևի, Լվովի, Լուցկի ազատագրմանը: Պարգևատրվել է Հայրենական պատերազմի 1-ին, 2-րդ, Փառքի 3-րդ աստիճանի, «Կարմիր աստղ» շքանշաններով, «Մարտական ծառայության համար» մեդալով և այլ մեդալներով:

Հարությունյան Մինաս

Մինաս Հարությունյանը 1939թ.զորակոչվել է բանակ, 1941թ.մեկնել է պատերազմ: Կռվել է Բելոռուսում, Լատվիայում, Ուկրաինայում, Լիտվայում և Մոսկվայում: 1945թ. զորացրվել է:

Հմայակ Պողոսյան.

Գևորգ Գրիգորյանը 1941թ զորակոչվել է բանակ,հասել է մինչև Գերմանիա : 1946թ. զորացրվել է:

Մարգյան Սարգիս.

Վարազդատ Անդրեասյանը 1941թ. զորակոչվել է բանակ:Կռվել է Կերչում և այլուր:Հասել է մինչև Բեռլին: Վերադարձել է ծանր վիրավոր:

Գևորգ Գրիգորյան.

Հմայակ Պողոսյանը կռվել է Լվով քաղաքում:Եղել է սակրավոր և վարորդ:

Սաֆար Սարգսյանը 1941թ.զորակոչվում է բանակ:Կռվել է Սևաստոպոլի, Նովոռոսիյսկի և Կերչի տարածքներում:1942թ ծանր վիրավորվում է և ապաքինվելով հոսպիտալում՝ զորացրվում է:

Վարազդատ Անդրեասյան.


Պետրոս Գրիգորյան

Պետրոս Գրիգորյանը 1941-ից մասնակցել է մարտական գործողություններին, Կերչում վիրավորվել է և գերի ընկել: Գերության մեջ կտրել են նրա աջ ոտքը:1945թ. ազատագրվել է և վերադարձել տուն:

Սարգսյան Սարգիսը մեկնել է ռազմաճակատ: 1941թ. կռվել է սկզբում 26-րդ դիվիզիայում, այնուհետև 238-րդ հրաձգային դիվիզիայում ունի բազմաթիվ շքանշաններ և մեդալներ:

ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ



Սարգիս Սարգսյանի գրառումներից

1945թ. մայիսին 9-ին Ռայխստագի վրա ծածանվել է հաղթանակի դրոշը: Հաղթանակած ապարանցիները վերադարձել են տուն: Սակայն շատերը՝ 2541արիասիրտ և քաջակորով ապարանցիներ ընկան քաջի մահով իրենց կյանքը նվիրաբերելով հայրենիքի փրկության սուրբ գործին::

ԱՐՑԱԽՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ ԵՎ ԱՊԱՐԱՆՑԻՆԵՐԸ

1989թ. հունիսին թվով քսան կամավորներ, հավաքվեցին Ապարանի տպարանի վերին հարկի փոքրիկ սենյակում ու որոշեցին մասնակցել Արցախյան ազատամարտին՝ որպես Ապարանի կամավորական ջոկատի ազատամարտիկներ: Ապարանցի կամավորները ջոկատի հրամանատար ընտրեցին Նահապետ Տոնոյանին՝ Ֆեդայիին, տեղակալ՝ Ռազմիկ Պետրոսյանին:

Ազատամարտիկները սկզբում զինվեցին ով ինչով կարող էր: Ջոկատը առաջին մկրտությունը ստացել է 1989թ. Ղափանի, Եղվարդ և Ուժանիստ գյուղերի պաշտպանական մարտերում:

«Հատուկ գնդի»Ապարանի վաշտը

Հահապետ Տոնոյան/Ֆեդյա/
Մայիս Սիրեկանյան
Ռազմիկ Պետրոսյան
Վաչիկ Եղիազարյան
Մերուժան Եղիազարյան
Աշխարհիկ Սաֆարյան
Գեղեոն Ղարիբյան
Աբրահամ Քամալյան
Արամ Պետրոսյան
Հովհաննես Սարգսյան
Արմեն Սահակյան
Վահագն Մովսիսյան
Մակիչ Վարդանյան
Հրաչյա Երեմյան
Վարուժան Տիգրանյան
Քյարամ Ղազարյան
Սամվել Մարտիրոսյան
Տիգրան Հարությունյան
Ավետիս Պետրոսյան
Հովհաննես Հովակիմյան

1990թ. սեպտեմբերի 20-ի թիվ 420 հրամանով Ապարանի ջոկատը որպես դասակ մտավ Հատուկ գնդի էջմիածնի վաշտի կազմի մեջ: Կարճ ժամանակ հետո նոր հրամանով այն վերակազմավորվեց որպես վաշտ: Հրամանատար նշանակվեց Ֆեդյան, տեղակալ՝ Ռազմիկ Պետրոսյանը, շտաբի պետ՝ Վահագն Մովսիսյանը:1990թ. նոյեմբերին վաշտը մեկնեց Վարդենիսի շրջան՝ մարտական հանձնարարություն կատարելու: Ապրիլի 3-ից մայիսի 7-ը այլ ուժերի հետ Ապարանի վաշտը իրականացնում էր Իջևանի Կիրանց, Ոսկեպար, Աջառկուտ գյուղերի պաշտպանությունը:Հունիսի սկզբից վաշտը մարտական գործողությունների է մասնակցում Սիսիանում:

1991թ. օգոստոսին վաշտը մեկնում է Շահումյանի շրջան, մասնակցում Բուզլուխ, Վերիշեն Մանաշիդ գյուղերի համար ծավալված մարտական գործողություններին:1992թ. մայիսին վաշտը Երասխում էր : 3 օր անընդմեջ հակառակորդը գրոհում էր Նախիջևանից:1992թ.-ի գարնանը Ապարանի

վաշտի կազմում ընդգրկվեց Մեծ Մանթաշի ջոկատը:
Մայիսի 14-ից հունիսի 5-ը Ֆեդայի գլխավորությամբ վաշտը իրականացնում էր Լաչինի միջանցքի հարավային կողմի պաշտպանությունը, որը շարունակվեց մինչև հունիսի 25-ը, այս անգամ Ռազմիկի հրամանատարությամբ:Հունիսի 18-ին Ֆեդյան վաշտի 15 մարտիկների ու գնդի այլ վաշտերի մարտիկների հետ միասին մեկնում է Մարտակերտ , մասնակցում տեղի մարտական գործողություններին:
Օգոստոսին Ռազմիկի հրամանատարությամբ մեկնում է Լաչին՝ Ղոչազի բարձրունքը պահելու: 20-ից Ղոչազում Ռազմիկին փոխարինում է Վահագն Մովսիսյանը,որին էլ սեպտեմբերին փոխարինում է Ֆեդյան:Այստեղ էլ զոհվում է լեգենդար Ֆեդյան: Ֆեդյային փոխարինում է Ռազմիկ Պետրոսյանը:
1993թ. ապրիլին Ապարանի վաշտը վերակազմավորվեց որպես ՀՀ ՊՆ Մայրաքաղաքային գնդի 4-րդ պայմանագրային գումարտակ և իր փառավոր ողին շարունակեց՝ մասնակցելով Լաչինի պաշտպանությանը, Ջանբազի գրավմանը, Ջաբրայիլի, Քարվաճառի, Օմարի լեռնանցքի մարտական գործողություններին՝ մինչև հաղթական զինադադար:
1994թ. նոյեմբերին գումարտակը վերակազմավորվեց որպես պայմանագրային զորամաս: Հրամանատար նշանակվեց «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանի ասպետ, գնդապետ Ռազմիկ Պետրոսյանը:

ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾ ԱՊԱՐԱՆՑԻՆԵՐԸ

1960-1992թթ.
Տոնոյան Ֆեդյա
/Սահապետ/

Արցախյան շարժման առաջին օրերից նա մարտական դիրքերում էր:Սկզբում դարձավ Ապարանի ջոկատի, այնուհետև՝ հատուկ գնդի հրամանատարը: Նահապետը մասնակցել է Տավուշի, Վարդենիսի, Իջևանի, Սիսիանի, Շահումյանի, Երասխի, Լաչինի և Մարտակերտի շրջանների պաշտպանական մարտերին: 1992թ. սեպտեմբերին Լաչինի միջանցքի Ղոչաց բարձունքը պաշտպանում էին Ապարանի վաշտի մարտիկները: Սեպտեմբերի 18-ին թշնամին մեծ ուժերով գրոհում է ,այդ ընթացքում վիրավորվում է Գեդեոն Ղարիբյանը: Հրամանատարը նրան ցանկանում է տանել Լաչին: Անտառում դարանակալած թշնամին կրակահերթ է բացում Ֆեդյայի մեքենայի վրա: Գեդեոն Ղարիբյանը զոհվում է: Քաջարի հրամանատարը, հասկանալով, որ անհմաստ պիտի զոհվի, կանգնեցնում է մեքենան, վերցնում է մոտը եղած երկու նռնակները և ցած իջնում:Տասնյակից ավելի ազերիներ օղակում են նրան՝ ցանկանալով գերի վերցնել: Անվեհեր հրամանատարը ձգում է նռնակների օղակները և իր հետ գետին տապալում տասնյակ ազերիների: Այսպես զոհվեց հայ քաջորդին 1992թ. սեպտեմբերի 19-ին:



1961-1992թթ.
Եղիազարյան Վասիլի
/Ռամին/

Ծառայել է Ապարանի վաշտում: Քաջարի մարտիկը մասնակցել է Վարդենիսի, Իջևանի, Սիսիանի,Տավուշի շրջանների պաշտպանական մարտերին: 1991թ. օգոստոսից մինչև 1992թ. ապրիլի 17-ը մասնակցել է Շահումյանի շրջանի Կարաչինար գյուղի պաշտպանական կռիվներին, Բուզլուխ գյուղի «Տամբուս» կոչվող բարձունքի գրավմանը: 1992թ. Ապրիլի 17-ին թշնամին մեծ ուժերով հարձակվում է Աշտարակի ջոկատի պաշտպանած թիվ 13 կետի վրա: Թիվ 12 կետի Ապարանի ջոկատի տղաները հասնում են օգնությանև ուժգին հարվածով հետ շպրտումթշնամուն:Այս մարտում էլ ընկնում է անվեհեր հայորդին:

1968-1992թ.
Սիրեկանյան Մարտ /Սամվել/,
Մասնակից է Մարտերին, Գնաց,
Մրցեցին, Շտաբապետ,Զոհվեց,
Մասնակցություն, Լայնի
աշխատանքային մասնակցին
գնվել է ռազմաճակատի 20-ին
Հայաստանում

1977-1992թ.
Կարապետյան Կարեն.
1993-ին զոհվել է բանակում,
Գնվել է ռազմաճակատի 13-ին
Մարտերդաշտում. ազատելով
ուրիշների գերությունից

1973-1992թ.
Բալասանյան Սամվել,
1994թ. զորակոչվել է բանակ,
Զոհվել է Սոնդոնակերտում,
ապա տեղափոխվել է Վրաստան,
Գնվել է նոյեմբերի 13-ին.

1961-1993թ.
Սարգսյան Վլադիմիր
Եղբայրն ունի մի դստերիկ նոր
ծնված և զոհվել մեր հանդեպ.
Շտաբապետ, Զոհվեց, Լայնի
մասնակիցներ, Լայնի
Գնվել է 1992թ. հունվարի 20-ին
Լաչինում

1973-1994թ.
Սանասարյան Գագիկ
1994 թվականի հունիսի
[illegible]
Գնվել է Մարտակերտի շրջանում
Հայրենիքի համար մեր հերոսներ

1978-1993թ.
Շահինյան Սաս.
1993թ. զորակոչվել է բանակ,
Գնվել է Խոջալուի 13-ին
հրամանատարությունը.

1970-1994թ.
Գնդասյան Միսաքը.
Մասնակցել է Լաչինի
հատար մղող մարտերին.
Վարձել եղ.ուսումնարանի 10-ին
գնվելով ե

1967-1992թ.
Սարգսյան Իշխի.
Գնվել է նոյեմբերի 8-ին
Ռմբեպարամ մարտական
առաջադիմց կատարելիս

1969-1992թ.
Սիմոնյան Վլադ..
1992թ. Հասարակաց է անցել
Վարպետի վնասմ.
Գնվել է հունիսի 12-ին.

1977-1993թ.
Սիրուսյան Հայկ.
1993թ. զորակոչվել է բանակ,
Զոհվել է Հարավում,
ուսում ե գնվել է գրասենյակ 31-ին.

1973-1993թ.
Հակոբյան Գագիկ.
Գնվել է ապրիլի 9-ին
Մարտի դաշտում

1951-1994թ.
Հովսեփյան Հայրենիքս
գնվել է 1994թ.
Մարտակերտում

1973-1993թ.
Բաղասյան Իշխան
1994-զորակոչվել է բանակ.
Զոհվեց է Լաչինի Գայլի.
Գնվել Մարտակերտ գյուղամերձ
Կռվելիս 20-ին Գնվելով է և
մեծարեց ապրիլին

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԵՎ ՎԵՑՈՐԴ ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐԸ

Տ՛ Տ՛ Հովհաննես

Տ՛ Տ՛ Հարությունի

Տեր-Ոսկեյան
քահանա Տեր-Հարությունյան

Տեր
Սկրտիչ

Տեր
Հարություն

Տեր
Վիրաբ

ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ապարանը Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի քաղաքներից է:
Այն զբաղեցնում է շուրջ 435 հա տարածք: Քաղաքը կառուցվել է տարբեր ռելիեֆային հարթությունների վրա:

Ժողովրդագրություն

Համայնքային բնակչության թիվը – 6725 մարդ այդ թվում

- կանայք- 3665
- տղամարդիկ – 3060
- բնակչությա տարիքային կազմը՝
  0-6 տարեկան -560
  7-17 տարեկան -936
  18-65 տարեկան -4459
  65-ից բարձր- 770
- թոշակառուներ- 1401
- փախստականներ – 75
- միակողմանի ծնողազուրկ երեխաներ-29
- Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ-2
- հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ-12
- հաշմանդամներ -350
- աշխատունակներ -4000
- աշխատանք ունեցողներ – 1960
- գործազուրկներ – 110
- ընտանիքների /ծխերի/ թիվը-1860
- «Փարոս» ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ-465
- զոհվածների ընտանիքներ -19
- անօթևան ընտանիքներ -4

Տեղական ինքնակառավարման մարմինները
Համայնքի ավագանու անդամների թիվը 11 է:
Համայնքի ղեկավարի աշխատակազմը բաղկացած է 32 աշխատակից՝
- համայնքի ղեկավարի տեղակալ -1
- աշխատակազմի քարտուղար -1
- համայնքի ղեկավարի օգնական -1
- ֆինանսական և հարկերի հավաքագրման բաժնի պետ-1
- գլխավոր հաշվապահ-1
- գլխավոր մասնագետ -4
- առաջատար մասնագետ-7
- 1-ին կարգի մասնագետ -3
- տեխնիկական աշխատող -13

Համայնքային ենթակայության տակ գործում են 7 հիմնարկներ՝ ընդամենը 87 աշխատակիցներով, այդ թվում՝
Արվեստի դպրոց-1-21 աշխատող
Մարզադպրոց -1-13 աշխատող
Մշակույթի տուն -1-13 աշխատող
ՄՊՍ կենտրոն -12-13 աշխատող
Գրադարան- 1-8 աշխատող
Թիվ 1 մանկապարտեզ 1-10 աշխատող
Թիվ 2 մանկապարտեզ 1-9- աշխատող

Համայնքային ձեռնարկություններ

Համայնքում գործում են հետևյալ ձեռնարկությունները՝

- «Նիգ» ԲԲԸ-արտադրում է էլեկտրոնային միացման դետալներ: Աշխատում է իր հզորության 15%-ի չափով: Ունի 60 աշխատակից:
- Պանրագործարան -արտադրում է կաթնամթերք: Աշխատում է իր հզորության 30%-ի չափով: Ունի 30 աշխատակից:
- Գորգի ֆաբրիկա-Չի գործում
- Ռեզինի գործարան-Չի գործում
- Հացի 5 արտադրամասեր-Արտադրում են հացաբուլկեղեն: Ունեն ընդամենը 40 աշխատակից:
- Եվրոպական տիպի դուռ -պատուհանի 3 արտադրամասեր

Արտադրում են եվրոպական տիպի դռներ, պատուհաններ, այլ ակսեսուարներ:
Ունեն ընդամենը 12 աշխատակից:

- Գործում են նաև փոքր ու միջին շուրջ 70-75 այլ ԱՁ-եր, ՍՊԸ- եր, ՓԲԸ-եր, ԲԲԸ-եր. որոնք ունեն շուրջ 200-220 աշխատակից:

  Համայնքի սեփականություն համարվող գույքի ֆիզիկական վիճակը

  Համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը սահմանվել է ՀՀ կառավարության 14.03.1997թ.թիվ 51 որոշմամբ:

Հողօգտագործում

Համայնքի վարչական տարածքը կազմում է 2815.8 հա, որից՝

- բնակարանային ֆոնդի հողերը 245 հա է, արտադրական նշանակության հողերը՝ 31.8 հա, գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 2202 հա, գերատեսչական հիմնարկների զբաղեցրած հողերը՝ 22.3 հա, հանգստի գոտու հողերը՝ 24.1 հա, հատուկ նշանակության հողերը՝ 4.2 հա, պետական ֆոնդի հողերը՝ 139.89 հա,
- բնակավայրի տարածքը կազմում է 434.87 հա,հողի սեփականաշնորհմանը մասնակցել են 1141 ընտանիք, մեկ հողաբաժնի չափը 0.39 հա է,
- համայնքի սեփականություն համարվող հողերը 1567.17 հա է,
- համայնքի օտարված և օգտագործման տրամադրված հողերը 47.92 հա է:

Գյուղատնտեսություն

Համայնքում գյուղատնտեսության հիմնական ճյուղերն են դաշտավարությունը և անասնապահությունը, որոնցով զբաղվում է բնակչության մոտ 60%, ոռոգելի հողատարածքներ համայնքում չկան, չկա ներտնտեսային ոռոգման համակարգ:
Ցածր են դաշտավարության բերքատվությունը և անասնապահության մթերատվությունը: Հիմնական պատճառներն են արոտների և ջրարբիացման բացակայությունը, բնակլիմայական անբարենպաստ պայմանները:

Բնության և շրջակա բնական միջավայրի պահպանություն

Համայնքի հողերը հիմնականում ենթարկվում են հողատարման և ողողման, որոշ տեղերում էլ՝ ճահճացման: Հողերի, ջրերի և շրջակա միջավայրի աղտոտման պատճառ են դառնում հիմնականում պոլիէթիլենային տոպրակները և տարաները:
Համայնքում քիմիական կամ արդյունաբերական վնասակար արտանետումներ չկան:
Համայնքում անհրաժեշտություն կա հողերի ռեկուլտիվացիայի:
Արոտավայրերը գտնվում են սարային հատվածում, որոնք բավարարում են համայնքում առկա անասունների գլխաքանակին:

Տրանսպորտ և ճանապարհային տնտեսություն

Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը 32 կմ է, մակերեսը՝ 250000քմ:
Կան համայնքային ենթակայության 7 կամուրջներ:
Համայնքի կապը մայրաքաղաքի և այլ քաղաքների հետ իրականացվում է երթուղային տաքսիների միջոցով:
Համայնքի տարածքում գործում են 5 տաքսի ծառայություններ:

Կրթություն

Համայնքում կան 4 հանրակրթական դպրոցներ, որոնցում սովորում է 830 աշակերտ, աշխատում է 140 մարդ:
Համայնքի 2 մանկապարտեզները տեղակայված են հարմարեցված շենքերում հաճախում են 100-120 երեխաներ, աշխատում են 19 մարդ:
Համայնքի ՄՊՍ կենտրոնում գործում են 8 խմբեր՝ 70 երեխաներով, աշխատում են 13 մարդ:

Մշակույթ, սպորտ

Համայնքի արվեստի դպրոցում սովորում են 124 երեխաներ, գործում է երկու բաժին՝ երաժշտական և կերպարվեստի, գործում է 10 խումբ, աշխատում է 21 մարդ:

Մշակույթի տանը գործում է 5 խումբ, հաճախում է 80 երեխաներ, աշխատում է 13 մարդ:
Քաղաքային գրադարանը գտնվում է բազմաբնակարան բնակելի շենքի 1-ին հարկում: Ունի 8 աշխատող, 64000 կտոր գրականություն, 1200 ընթերցող:

Մարզադպրոցում գործում է 6 մարզաձևի 8 խումբ, մարզվում են 128 երեխաներ, ունի 13 աշխատող:
Համայնքում գործում են երիտասարդական միություն և ուսանողական խորհուրդ, որոնք ակտիվ մասնակցություն ունեն քաղաքի հասարակական ու մշակութային կյանքում:

Առողջապահություն

Համայնքում գործում է 1 բժշկական կենտրոն՝ 85 մահճակալով, 170 աշխատողով, որից 19 ը բժիշկներ են:

Հանգստի գոտիներ, խաղահրապարակներ, զբոսայգիներ, բակային տարածքներ

Համայնքի տարածքում կա 1 զբոսայգի, 2 խաղահրապարակ, 4 հանգստի գոտի և 15 բակային տարածքներ:
Համայնքը գտնվում է անտառամերձ գոտում, ունի բազմաթիվ տեսարժան վայրեր՝ հուշարձաններ, սառնորակ աղբյուրներ, մեղմ կլիմա ու մաքուր օդ, ինչը հնարավորություն է տալիս համայնքում զարգացնել տուրիզմը:

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Նիգ-Ապարանը Այրարատ նահանգի 15-րդ գավառն էր և մասամբ համապատասխանում է այժմյան Արագածոտն մարզին, Կոտայքի մարզի որոշ շրջանների,ինչպես նաև Արայի լեռան ստորոտներին: Նիգ-Ապարանի հարևանները արևելքում և հյուսիսում Կոտայք, Մազազ և Վարաժնունիք (այժմ՝ Հրազդան) գավառներն են: Հյուսիս-արևմուտքում Նիգ-Ապարանին հարևան էին Վերին Տաշիր (այժմ՝ Սպիտակ), արևմուտքում ՝ Շիրակ (այժմ՝ Արթիկ)քաղաքները, հարավ-արևմուտքում՝ Արագածոտն (այժմ՝ Աշտարակ) գավառները:
Նիգ-Ապարանի մակերևույթը բարձրադիր է, լեռնոտ:
Հյուսիսային մասը Փամբակի լեռնաշղթայի հարավային թևի ձորակներով կտրտված լանջերն են, արևելյան մասը՝ Ծաղկունյաց լեռների արևմտյան լանջերը, հարավ-արևմուտքում՝ Արագածի լեռնազանգվածը (ամենամեծ բարձրությունը 4090մ): Այդ լեռների միջով հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ձգվում է Քասաղ գետը:Քասաղի հովիտը բաժանվում է հյուսիսարևմտյան բարձրադիր և հարավարևելյան համեմատաբար ցածրադիր շրջանների: Բարձրադիրը կամ Ապարանի սարահարթը ունի մինչև 2100մ միջին բարձրություն, ցածրադիրը կամ Ապարանի դաշտը, որ ծածկված է Արագածի լավային հոսքերով՝ 1800մ բարձրություն:Ապարանի կլիման ցամաքային է, ցուրտ ձմեռներով ու զով ամառներով: Տարեկան միջին ջերմաստիճանը Ապարանում 4.3^{0}C է: Հունվարի միջին ջերմաստիճանը – 9,6^{0}C է (նվազագույնը՝- 33^{0}C), հուլիսինը՝ 16.6^{0}C (առավելագույնը՝ 32^0 C): Ձմեռը տևական է՝ 5-6 ամիս, կայուն ձնածածկույթով: Սառնամանիքային օրերի թիվը 134 է (Արարատյան դաշտում՝ 200 օր): Տեղումները տարեկան կազմում են 550-700մմ (Արարատյան դաշտում՝ 200-350մմ): Տաք եղանակը տևում է 134 օր, արևոտ օրերի թիվը՝ շուրջ 300 օր: Ձմռանը քաղաքի տարածքը ծածկվում է ձյան հաստ շերտով՝ միջինը 100 սմ: Նիգ-Ապարանի տարածքը Հայաստանի համեմատաբար խոնավ շրջաններից է:
Քասաղ գետը հյուսիսից թափվում են Հալավար, Թթուջուր, Մռավյան, աջ կողմից՝ Արագած, Գեղարոտ վտակները:
Նիգ-Ապարանի հարավարևելյան մասում՝ Քասաղ գետի միջին հոսանքում 1962-1967թ. կառուցվել է Ապարանի ջրամբարը: Ջրամբարը զբաղեցնում է նախկին Քասաղ և Զովունի գյուղերի հողերը: Ջրամբարի մակերեսը 8կմ^2 է , պատվարի բարձրությունը՝ 50 մետր, ընդհանուր տարողությունը 90մլ մ^3, օգտակար տարողությունը՝81մլն մ^3: Ջրամբարը սնվում է Քասաղ գետից և մթնոլորտային տեղումներից: Օգտագործվում է ոռոգման նպատակով:Ջրամբարի շնորհիվ ջրովի է դարձել շուրջ 7500 հա հողատարածք: Ջրամբարի ափերը կանաչապատվել ու ծառապատվել են:
Քասաղ գետի վերին հոսանքում Միրաք-Մելիքգյուղ գյուղերի միջև, 1981-84թ. կառուցվել է Հալավարի ջրամբարը:Նոր ջրամբարի ջրերը ոռոգման նպատակով օգտագործում են Արագած և Ապարան քաղաքների հողագործները:
Ապարանի դաշտը հարուստ է սառնորակ աղբյուրներով,որոնք մեծ ծավալ ունեն: Դրանք, տուֆերի,բազալտների,անդեզիտների,պեմզաների,հրաբխային ծագում ունեցող այլ ապարների միջով անցնելով,ֆիլտրվում,զտվում,մաքրվում են կողմնակի մասնիկներից և զուլալ ու վճիտ աղբյուրների ձևով հոսում են ընդերքից դուրս:Հայտնի են Քառասունակն աղբյուրը (այդ աղբյուրի ջրերը այժմ հոսում են Երևան, Արմավիրի մարզ), Յոթնակն, Եզնակի,Լուսաղբյուր,Գոգռան աղբյուրները: Դաշտավայրի տարբեր հատվածներում (Թթուջուր, Զովունի) կան հանքային ջրեր: Ապարանի դաշտավայրը ծածկված է լեռնատափաստանային բուսականությամբ (փետրախոտ, շյուղախոտ, սիզախոտ), հացահատիկի, բանջարեղենի պտղատու ծառերի և անասնակերի ցանքատարածություններով:
Ծաղկունյաց լեռնաբազուկների և Արայի լեռան ստորոտներին տարածված են ոչ խիտ անտառներ:Արագած լեռան արևելյան,հյուսիս-արևմտյան,հարավ-արևմտյան,Ծաղկունյաց լեռնաշղթայի արևմտյան լանջերը հարուստ են օգտակար հանածոներով:Տարածաշրջանի օգտակար հանածոների հիմնական մասը քարանյութերն են՝բազմագույն ու բազմերանգ տուֆերը,բազալտները,անդեզիտները,պեմզաները,պեռլիտները,օբսիդիանները,հրաբխային խարամները,զանազան ավազները:Հազվագյուտ է Լուսագյուղի մարմարի

հանքավայրը,որի տարիքը 540-565մլն տարի է:Նրաարդյունաբերական պաշարները 1080000հազ. խոր.մ. է:
Տորֆի հանքավայրը գտնվում է Ապարան քաղաքից 6կմ դեպի հյուսիս-արևմուտք՝ճլի լճակի շրջակայքում:Հանքանյութի պաշարը մեծ չէ՝41000տ:Հումքի որակը բավարար է,ջերմատվությունը՝14,8-25,6 տոկոս:
Նորաշեն գյուղի մոտ առկա է պեմզայի հանքավայր:
Քուչակ գյուղի արևմտյան կողմում գտնվում է կավի հանքավայր:Հաստատված պաշարները մեծ են՝9660000 խոր.մ:

ԲՈՒՍԱԿԱՆ ԵՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Ապարանի տարածաշրջանի բուսական աշխարհը հարուստ է ու բազմազան:Կան և՛ ծառեր, և՛ թփեր, և՛ խոտաբույսեր,որոնց մեծ մասը համարվում են դեղաբույսեր:

ԱԶՆՎԱՄՈՐԻ-Հայկական տարանունները՝անտառամորի,արքայամորի,ժոխենի,մոռ մոռենի:Վարդազգիների ընտանիքին պատկանող,1-1,5մ բարձրության թուփ է կամ կիսաթուփ: Ծաղկաբույլը ողկույզ է ,ծաղկաթերթիկները սպիտակ են,պտուղը բազմակորիզավոր է:Ազնվամորին աճում է սննդանյութերով հարուստ ու խոնավ հողերում,անտառների բացատներում,հատված անտառամասերում: Կուլտուրական սորտերը աճեցվում են ամենուր:

ԱԼՈՃԵՆԻ- Հայկական տարանունները՝ալոճ,ալոչ,հալոճի,սարի խնձոր,ալնի:
Վարդազգիների ընտանիքի պատկանող թուփ է կամ ոչ մեծ ծառ՝ փշոտ ճյուղերով: Տերևները պարզ են, հերթադիր, կտրտված եզրերով:Ծաղիկները սպիտակ են, երբեմն կարմրավուն, պտուղները մանր են, 8-10մմ տրամագծով, կարմրաբոսոր,ալրանման պտղամսով,3-4սերմերով:Տարածված են անտառային **և մերձանտառային գոտիներում:**

ԱՆԱՆՈՒԽ-անանեխ,անուխ, դաղձ,նանա,քարանուխ
Շրթնածաղկավորների ընտանիքին պատկանող կոճղարմատավոր բազմամյա խոտաբույս է:Բույսը ցրտադիմացկուն է,խոնավասեր և պահանջկոտ լույսի նկատմամբ:

ԱՌՅՈՒԾԱԳԻ- առյուծատունկ,սպիտափառ,սրախոտ
Խուլեղինջազգիների ընտանիքին պատկանող բազմամյա խոտաբույս է,քառանիստ ցողունով,թավոտ,սղոցաձև կտրտված տերևներով:Աճում է աղբուտներում,տնամերձ հողամասերում,այգիներում,բանջարանոցներում:Ունի բնորոշ հոտ և դառը համ:

ԳՆԱՐԲՈՒԿ-գարնանածաղիկ,փլավախոտ,կովացնծուկ
Գնարբուկազգիների ընտանիքին պատկանող 15-30սմ բարձրության բազմամյա խոտաբույս է:Տերևները պարզ են,ձվաձև,կնճռոտ:Ծաղիկները երկսեռ են,պսակը ոսկեդեղին է,հոտավետ:Աճում է անտառի բացատներում,հովիտներում,այգիներում ճամփեզրերին,թփուտներում:

ԵՁԱՆ ԼԵԶՈՒ - գաղտնի,լեզվախոտ, ջղախոտ, մազի լեզու
Ջղախոտազգիների ընտանիքին պատկանող,10-40սմ բարձրությամբ բազմամյա խոտաբույս է,3-9սմ խոշոր, ձվաձև տերևներով:Բույսը բազմանում է սերմերով, աճում է ճամփեզրերին,աղբուտներում,ամայի տեղերում, տնամերձ հողամասերում,մարգագետիններում,ցանքերի մեջ և այլուր:

ԵՂԵՐԴԱԿ ՍՈՎՈՐԱԿԱՆ- կայծախոտ, ճարճատուկ,հեղերդակ,ճարճատ,ցիկորի
Աստղածաղկավորների ընտանիքին պատկանող, 60-120սմ բարձրությամբ բազմամյա խոտաբույս է: Բազմանում է սերմերով:Ծաղկաբույլը զամբյուղ է,ծաղիկները՝ լեզվակաձև,երկնագույն:Վայրի վիճակում աճում է ճամփեզրերին, առուների ու արտերի մերձակայքում,տնամերձ հողամասերում,աղբուտներում:

ԵՂԻՆՋ ԵՐԿՏՈՒՆ-աղինճ,բանջար, մրմնջուկ,կճան,գազգզուկ
Եղինջազգիների ընտանիքին պատկանող 60-170սմ բարձրությամբ բազմամյա խոտաբույս է: Ունի ձվանշտարաձև ատամնաեզր հակադիր տերևներ,որոնք, ինչպես և ցողունը, ծածկված են գեղձային այրող մազիկներով: Ծաղիկները մանր են, միասեռ,

կանաչ: Բույսը աճում է ստվերոտ տեղերում, խոնավ անտառներում, բացատներում, տնամերձերում, ցանկապատների մոտ և այլն:

ԽԱՏՈՒՏԻԿ ԴԵՂԱՏՈՒ-ակլատիզ, խտուտ, պուպու, քոչի խոտ

Աստղածաղկավորների ընտանիքին պատկանող, մինչև 15 սմ բարձրությամբ բազմամյա կոճղարմատավոր խոտաբույս է: Տերևները բազմաթիվ են,կանաչ,նշտարաձև, ատամնավոր եզրերով:Ծաղկաբույլը զամբյուղ է, ծաղիկները՝ լեզվակաձև, վառ դեղին: Մոլախոտ է, աճում է այգիներում, ցանքերում, խամահողերում, արոտավայրերում, մարգագետիններում:

ԿԱՂՆԻ- լողփ, շանկաղին, հոշի, մատնկաղնի,

Հաճարազգիների ընտանիքին պատկանող, 40մ բարձրության վիթխարի պսակով, հզոր բնով տերևաթափ ծառ է: Ունի հերթադիր, կոշտ, կտրտված, թավոտ կամ մերկ տերևներ, մանր, միասեռ ծաղիկներ: Պտուղը կաղին է:

ՀԱԶԱՐԱՆՏԵՐԵՎՈՒԿ- վիրախոտ, գառան տոտիկ, թռցիկ, հազարաթերթիկ, մեռելի ծաղիկ: Աստղածաղկավորների ընտանիքին պատկանող, 20-70սմ ուղղաձիգ ցողունով, սողոցավոր կոճղարմատով, բազմամյա խոտաբույս է: Արմատամերձ տերևները կոթունավոր են, մյուսները՝ նստադիր, նշտարաձև: Լեզվակային ծաղիկները սպիտակ են: Պտուղը մանր սերմիկ է: Աճում է խոշոր բուսուտներով, անտառի բացատներում, մարգագետիններում, թփուտներում, արոտավայրերում, խամահողերում, խոտհարքներում, հին գերեզմանոցներում:

ՄԱՍՐԵՆԻ- ակռվուկ, մասպար, վայրի վարդ, փշավարդ:

Վարդազգիների ընտանիքին պատկանող մինչև 2մ բարձրությամբ թուփ է : Ունի փայտանման ամուր, չոր փշերով ծածկված կանաչ- դարչնագույն, գորշ շիվեր: Տերևները հերթադիր են, բարդ , ծաղիկները խոշոր են, երկսեռ, դուրեկան հոտով, սպիտակ, կարմիր, վարդագույն կամ դեղին: Պտուղը իլիկաձև է, տանձաձև, խակ վիճակում կանաչ, իսկ հասունանալուց հետո՝ կարմիր կամ նարնջագույն: Աճում է անտառներում, թփերի մեջ, արտեզրերին, գետահովիտներում, լեռնալանջերին:

ՉԻՉԽԱՆ ԴԺՆԻԿԱՆՄԱՆ ծովափուշ, ձիափուշ, ձորի փող,ափռի,

Փշատազգիների ընտանիքին պատկանող 0.5-3 մմ բարձրության, խոշոր փշոտ թուփ է, երբեմն էլ՝ ծառ: Մատղաշ ընձյուղները արծաթագույն են, իսկ հետագայում դառնում են գորշ ժանգագույն: Տերևները հերթադիր են, պարզ, երկար, ամբողջաեզր: Բույսը երկտուն է, ծաղիկները՝ միասեռ, պարզ, շատ մանր, դեղին: Պտուղները մսալի են փայլուն, նարնջագույն, ճյուղերին կպած: Աճում է խոնավ տեղերում, գետափերին, ճահճուտներում:

ՍՐՈՀՈՒՆԴ ՍՈՎՈՐԱԿԱՆ- արևքուրիկ, թեյի ծաղիկ,հազարածաղիկ,զվերաբոյ:

Սրոհունդազգիների ընտանիքին պատկանող 20-60 սմ բարձրության, ուղիղ, ողորկ ցողունով բազմամյա խոտաբույս է: Տերևները նստադիր են, հակադիր, ամբողջաեզր: Ծաղիկները բազմաթիվ են, ոսկեդեղնավուն, մանր ծակոտկեն ու դարչնագույն: Աճում է չոր ու լուսառատ տարածքներում, անտառային և անտառատափաստանային գոտիներում՝ հաճախ տալով ցրված բուսուտներ:

ՈՒՐՑ ՍՈՂԱՑՈՂ- դաշտուրց, համեմ,վայրի ծոթրին, մեշ:

Խուլեղինջազգիների ընտանիքին պատկանող, 10-35սմ բարձրության, գետնի վրա փռված, խիստ ճյուղավոր հիմքում փայտացող ցողունով կիսաթուփ է: Ունի ձվաձև տերևներ: Ծաղկաբույլերը գտնվում են ճյուղերի ծայրերին: Հանդիպում է լեռնային և նախալեռնային շրջաններում՝ քարքարոտ, արևշատ լանջերին, քերծերին, բլուրների վրա:

Ապարանում գյուղատնտեսությունը առաջատար ճյուղերից մեկն է: Ապարանի տարածաշրջանի բնական բազմազան պայմանները էկոլոգիապես հնարավոր են դարձնում զբաղվելու թե՛ բուսաբանությամբ, թե՛ անասնապահությամբ:

Անասնապահությունը իր մեջ ընդգրկում է մի շարք ենթաճյուղեր՝ տավարաբուծություն, ոչխարաբուծություն, խոզաբուծություն, թռչնաբուծություն և այլն:

Կենդանիներից Ապարանում տարածված են թե՛ վայրի, թե՛ ընտանի կենդանիներ: Խոշոր եղջերավոր անասունները ընտանի զույգ սմբակավոր, որոճող կենդանիներ են:

II տեղում զբաղեցնում է մանր եղջերավոր անասնաբուծությունը: Պահվող մանր եղջերավորների գլխաքանակը կենտրոնացած է բարձր լեռնային շրջաններում, որտեղ խիստ կարևորվում է համապատասխան ցեղի ընտրությունը հոտում:
Ոչխարները, որոնք ընտելացվել են մարդու կողմից դեռևս 8000 տարի առաջ, ունեցել են նախնիներ՝ մուֆլոններն ու արխարները: Ոչխարաբուծությունը ժողովրդական տնտեսության համար արժեքավոր հումքի աղբյուր է՝ որից ստանում են բուրդ, մորթի, գառներ, ստանում նաև միս, ճարպ, կաթ: Ոչխարաբուծության արտադրանքի մեջ 1-ին տեղը զբաղեցնում է բուրդը:
Գյուղատնտեսության մյուս կենդանիների համեմատությամբ ոչխարներն ավելի լավ են օգտագործում արոտային և կոպիտ կերերը: Ոչ պակաս կարևոր է ոչխարների՝ մոլախոտ սպառելը:
Անասնաբուծության կարևոր ճյուղ է նաև խոզաբուծությունը: Բուծում են միայն ճարպ և կաշի ստանալու համար: Օժտված են բարձր պտղատվությամբ: Թռչնաբուծությունը և ճագարաբուծությունը ևս բնակչության համար կարևոր գյուղատնտեսական ճյուղ է:
Ապարանը հարուստ է նաև վայրի կենդանիների և թռչունների տեսակներով: Տարածքի հյուսիս-արևելյան և արևելյան անտառներում հանդիպում են վարազ, արջ, աղվես, գայլ, վայրի ճագարներ, նապաստակ, ոզնի: Բնությունը հարուստ է նաև թռչունների բազմազանությամբ:Ապարանում հանդիպում են ինչպես ջրլող, այնպես էլ անտառային, դաշտային թռչուններ:

ԹԽԱԿԱՊՈՒՅՏ ԱՂԱՎՆԻ–համարվում է նստակյաց թռչուն, հանդիպում է ինչպես լեռնային գոտում, այնպես էլ գյուղական բնակավայրերում: Ձվադրումը է փետրվարից մինչև հունիս: Համարվում է որսի թռչուն:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԿԿՈՒ- աղավնուց քիչ փոքր թռչուն է փետուրները սպիտակ:Գլուխը կոկորդը և կտնառքը մոխրագույն են:Համարվում է բնադրվող չվող թռչուն:

ԱՆՏԱՌԱԲՈՒ -կարճ պոչով, ագռավից քիչ խոշոր թռչուն է:Համարվում է նստակյաց, մասնակիորեն, քոչվոր թռչուն: Համարվում է անտառաբնակ: Փոքրաքանակ է: Օգտակար թռչուն է և կարիք ունի պաշտպանության:

ՄԵԾ ԽԱՅՏԱԲՂԵՏ ՓԱՅՏՓՈՐԻԿ – համարվում է նստակյաց և քոչվոր թռչուն: Բնադրվում է զգալի բարձրություններում՝ սեփական կտուցով փորած փչակներում: Սովորություն ունի փշատերև ծառերի կոները հավաքել որոշակի տեղում, որը կոչվում է փայտփորի դարբնոց:

ԼՈՐ -հավազգի ամենափոքր թռչունն է: Համարվում է բնադրվող թռչուն: Լայն տարածված է հացահատիկային և բանջարանոցային կուլտուրաների ցանքատարածություններում, փարթամ խոտաբույսերի դաշտերում: Օրվա մեծ մասը անցկացնում է գետնին, թփերում: Համարվում է արժեքավոր որսի թռչուն:

ԼԱՅՆԱԿՏՈՒՑ ԲԱԴ- սակավաթիվ է, հանդիպում է բոլոր ջրախոզաններում համարվում է բնադրվող թռչուն, որսի թռչուն է:

ԿԱՉԱՂԱԿ–նստակյաց թռչուն է: Բնակություն կարող է հաստատել նաև անտառներում: Հաճախ է հանդիպում մեծ ու փոքր խմբերով՝ ագռավների և այլ թռչունների հետ: Համարվում է վնասատու, սնվում է միջատներով, թռչունների ձվերով:

ՃՆՃՂՈՒԿ-թռչունները մեծաքանակ են և տեսակային կազմով գերազանցում են իրենց ցեղակիցների մյուս խմբերին:Անտառաբնակ են կամ ապրում են թփուտներում, այգիներում: Նրանց հաճախ կարելի է հանդիպել նաև քաղաքամերձ պուրակներում:

ԵՐԱՇՏԱՀԱՎ- Նստակյաց թռչուն է, ձմռանը անտառային շրջաններից քոչելով դեպի հովտային և հարավային շրջանները՝ բնակվում է անտառաշրջաններում: Անհանգիստ և շարժուն թռչուն է:

ԱՊԱՐԱՆԻ ԱՎԵԼԻ ՔԱՆ 100-ԱՄՅԱ ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՂԻՇԵ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

1870թ.մայիսի 24-ին Բաշ-Ապարան գյուղի քահանա տեր Հովհաննեսի հարկի տակ արու զավակ է ծնվում : Հայրը երազում էր որդու մեջ տեսնել նվիրյալ հոգևորականի և անձնուրաց հայրենասերի, թերևս այդ պատճառով էլ որդուն անվանակոչում է Եղիշե:

Լեռնային խստաշունչ ու վեհապանծ բնության գրկում՝ ավանդապաշտ ու աստվածավախ ընտանիքում է անցնում նրա մանկությունը: Նախնական կրթությունը ստանում է հոր մոտ: Ապա տեր Հովհաննեսը որդուն էջմիածին է ուղարկում՝ ուսանելու Գևորգյան ճեմարանում:Այդ տարիներին ճեմարանում դասախոսում էր նաև բանաստեղծ Հ. Հովհաննիսյանը, որի դրական ազդեցությունը ուսանողների վրա ակնհայտ էր: Ճեմարանական տարիները բախտորոշ են լինում ուսումնասեր երիտասարդի համար:Այստեղ նա կարող էր ծանոթանալ Խ. Աբովյանի, Պ. Պռոշյանի, Ռաֆֆու, Ղ. Աղայանի, Մ. Նալբանդյանի, Հ. Հովհաննիսյանի ստեղծագործություններին: Այս տարիներին Գևորգյան ճեմարանում սովորել է նաև Ավ. Իսահակյանը:1891թ. ճեմարանում բռնկվում են ուսանողական ընդվզումներ՝ ընդդեմ վերակացուների կամայականությունների:Մասնակցել է արդյոք Եղիշե Տեր-Հովհաննիսյանը այդ ընդվզումներին, դժվար ասել, բայց որ դրանք կենսական մեծ փորձ և ճանաչողություն էին նոր-նոր կյանք մտնող ուսանողների համար, անժխտելի է:1895թ. Եղիշեն վերադառնում է Ապարան: Հայրը երազում էր, որ որդին շարունակի իր գործը, դառնա հոգևորական, սակայն Եղիշեն կտրականապես ընդդիմանում է. ի վերուստ նրան այլ ճակատագիր էր սահմանված: Նա վաղուց փայփայում էր մի երազանք՝ դպրոց բացել հայրենի գյուղում: Անշուշտ, նրա համար ոգեշնչման աղբյուր են եղել իր կողմից անչափ սիրված Խ. Աբովյանի և Ռաֆֆու հայրենասիրական գաղափարները: Օննդավայր վերադառնալու առաջին իսկ օրերից Եղիշեն ձեռնամուխ է լինում իր վաղեմի երազանքի իրականացմանը: Նրա ջանքերով 1899թ. ուշ աշնանը երեք ազդեցիկ ապարանցիներ՝ Օհանյան Աշոտը, Մովսիսյան Սեդրակը և տեր Ավետիսը, գնում են էջմիածին՝ գավառապետին դիմելու Ապարանում դպրոց բացելու խնդրանքով: Վերադառնում են նրանք մի քանի օրից՝ մերժված և թևաթափ: Չի հուսահատվում, սակայն, Եղիշե Տեր-Հովհաննիսյանը, թեև հասկանում է, որ այդ գործի իրագործումը դեռ շատ ջանքեր ու ժամանակ կպահանջի: Ժամանակ չկորցնելու համար նա հենց նույն՝ 1899թ. հավաքում է 10-12 առաջադեմ ապարանցիների զավակների և հենց իրենց օդայում պարապմունքներ է կազմակերպում: Այս գաղտնի դպրոցը գոյատևում է մինչև 1903թ., երբ վերջապես, բազմաթիվ դիմումներին ի պատասխան, Երևանի նահանգապետը պաշտոնապես թույլատրում է Ապարանում բացել երկդասյա պետական դպրոց: Ապարանցիներն այդ լուրն ընդունում են խանդավառությամբ: 7-15 տարեկան 200-250 տղաներ են դիմում՝ ընդունվելու դպրոց: Ցավոք, դպրոցը վարձով էր, և միայն 18 բախտավոր պատանիներ են ընդունվում սովորելու:Եղիշե վարժապետը ազնիվ, հայրենասեր հայ էր, նվիրյալ մանկավարժ, որը ջանք չէր խնայում իր անսպառ գիտելիքները փոխանցել աշակերտներին: Իր աշխատավարձի մեծ մասը նա ծախսում էր դպրոցի կարիքները հոգալու համար. գրենական պիտույքներ էր առնում կարիքավորների համար, վճարում ուսման վարձը:

Սակայն դպրոցի կանոնավոր գոյատևման համար ամենից առաջ առանձին դպրոցական շենք էր հարկավոր: Եղիշե վարժապետի նախաձեռնությամբ նրա և ունևոր գյուղացիների միջոցներով Քասաղ գետի ափին՝ գյուղի հարավարևելյան մասում , 1914թ. կառուցվում է դպրոցական շենք: Այն չորս դասասենյակ ուներ, մեկ ուսուցչանոց, մի փոքրիկ սենյակ գրադարանի համար և ոչ ընդարձակ միջանցք: Շենքի արևելահայաց պատին՝ մի մեծ սալաքարի վրա, Եղիշե վարժապետը փորագրել էր արևի

ժամացույց(մինչև վերջերս կանգուն էր այդ շենքը, որ հիմա թնգարանային արժեք կունենար, եթե ցավալի և աններելի անտարբերությամբ չքանդվեր):
Եղիշե վարժապետը զարմանալի շնորհ ուներ՝ դեպի իրեն ձգելու աշակերտներին: Դպրոցի հիմնադրման տարուց ի վեր բազմաթիվ ուսուցիչներ են աշխատել այնտեղ, սակայն աշակերտների, համագյուղացիների հիշողության մեջ վառ են մնացել հուշերը հատկապես Եղիշե Տեր-Հովհաննիսյանի՝ բոլորի կողմից սիրված և հարգված Եղիշե վարժապետի մասին:
Թերևս այդ փոխադարձ սերն էր պատճառը, որ առաջադիմում էին նրա աշակերտները: Պատմում են, որ նա պարբերաբար միջդպրոցական մրցույթներ՝ օլիմպիադաներ էր անցկացնում: Մոտակա դպրոցը Ջառջառիս գյուղում էր (դա Արագածի շրջանի միակ դպրոցն էր): Նախօրոք որոշվում էր հարցերի շրջանակը.աշակերտները նախապատրաստվում էին, ապա մրցում: Երեք անգամ անցկացված մրցույթներում հաղթում են Եղիշե վարժապետի աշակերտները:
Իբրև Ռաֆֆու մեծ սիրահար և հետևորդ՝ Եղիշե վարժապետը լավ էր հասկանում, որ հայրենասիրությունը սկսվում է ճանաչողությունից: Այդ նպատակով նա հաճախ էր էքսկուրսիաներ կազմակերպում Երևան, Էջմիածին, Աշտարակ. որտեղ որ հնարավոր էր իր սուղ միջոցներով:
Եղիշե Տեր-Հովհաննիսյանը ոչ միայն լավ մանկավարժ էր, նա նաև գյուղացիների ընկերն ու խորհրդատուն էր ամեն հարցում:
Բազմակողմանի զարգացած մարդ էր Եղիշե վարժապետը: Նա աշակերտների ուսուցումը սկսում էր գրաճանաչությունից և հասցնում մինչև 6-7-րդ դասարան՝ պարապելով գրեթե բոլոր առարկաները՝ հայոց լեզու և գրականություն,պատմություն, թվաբանություն, աշխարհագրություն, բնագիտություն, ինչպես նաև ռուսաց լեզու, ֆիզկուլտուրա, նկարչություն:
Հիանալի հռետոր էր, ուներ նախանձելի ձեռագիր, որի մասին հիացմունքով էին հիշում բոլոր նրան ճանաչողները:
1916թ-ից, երբ դպրոցի փակման պատճառով հեռանում է տեսուչը, մինչև 1923թ. դպրոցի բոլոր աշխատանքները փաստորեն վարում էր Եղիշե վարժապետը: Այդ տարիներին նա դպրոցի տեսուչն էր, բոլոր առարկաների ուսուցիչը, տնտեսական հարցեր հոգացողը: Ասում են, որ նա չի ամուսնացել հենց այն պատճառով, որ կարողանա անմնացորդ նվիրվել իր սիրած գործին:
Եղիշե վարժապետի կենսագրության մեջ հերոսական էջ գրվեց 1918թ. օրհասական գարնանը, երբ հայրենիքի կանչով հարկ էր գրչի տեղ զենք առնել:
Երբ արյունարբու թուրքը՝ Ալեքսանդրապոլը հեշտությամբ գրաված, շքերթային տրամադրությամբ դեպի Երևան էր շարժվում երկու ուղղությամբ՝ Սարդարապատի և Բաշ-Ապարանի, մինչև ատամները զինված թշնամու դեմ ելան աշխարհազորայինների սակավաթիվ, հազիվ զինված, սակայն հաղթելու աներկբա վճռականությամբ, նահանջի տեղ ալևս չունենալու պարզ գիտակցությամբ տոգորված ջոկատները:
Աշխարհազորայինների մեջ էր նաև Եղիշե վարժապետը: Նա ջոկատի հրամանատար էր, որի մեջ հիմնականում մտնում էին իր աշակերտները: Ուսուցչի ներկայությունն ու քաջությունը ոգևորում էր սաներին, և ջոկատը կռվում էր առյուծաբար:
Եվ կատարվեց անհնարինը: Կասեցվեց թուրքի առաջխաղացումը այնտեղ, ուր, թվում է, ոչինչ հնարավոր չէր անել:
Երզնկան, Էրզրումը, Սարիղամիշը, Կարսը, Ալեքսանդրապոլը թողած և անգամ Էջմիածինն ու Երևանը թողնել պատրաստվող հայկական զորքի նահանջի ֆոնի վրա ավելի հստակ ու պայծառ է երևում այդ ճակատամարտի կազմակերպիչների ու մասնակիցների սխրանքը: Մենք երախտապարտ ենք այդ առյուծասիրտ քաջերին, նրանց մեջ նաև՝ Եղիշե վարժապետին :
Հայաստանի խորհրդայնացումից հետո Եղիշե վարժապետի նախաձեռնությամբ և ակտիվ մասնակցությամբ նորից սկսում է գործել դպրոցը՝ պետական թույլտվությամբ և ֆինանսավորմամբ:
Թվում էր՝ կանաչ ճանապարհ էր բացվում: Մեծ էին ծրագրերը, երազանքները... Սակայն երկաթե շղթաները գալիս էին գամելու, սպանելու ամեն մի ազատ միտք, գործ: Եղիշե Տեր-Հովհաննիսյանի նման լուսավոր մարտում դրանք չէին կարող շրջանցել:

Նրա ձերբակալման պատճառը Ռաֆֆու արգելված գրքերը պահպանելը, ավելին՝ դրանք կարդալու համար աշակերտներին տալն էր (գիրքը բռնագրավվել էր Չաթանի տղերքից՝ Քյոսի Ադոյից և Քյոսի Օրմանից, որոնք էլ խոստովանել էին, որ այն վերցրել են վարժապետից):
Մեղադրանքը հավանաբար նույնն էր, ինչ որ շատերինը այդ օրերին՝ «հակահեղափոխական, հակախորհրդային, նացիոնալիստական գործունեություն»: Հաջորդում էր բանտի խիստ կանոնակարգը, ամեն տեսակ ստորացումներ, անընդմեջ հարցաքննություններ, կտտանքներ, առերեսումներ: Ըստ անանուն շշուկների՝ նա զոհվել է հենց քննիչի առանձնասենյակում՝ դաժան ծեծի պատճառով:
Ահա այսպես տգետ հավատաքննիչների անօրեն կամքով եղիշե Տեր-Հովհաննիսյանի անուննու գործը «ժողովրդի թշնամու» խարանով դուրս մղվեց իր ժողովրդի տարեգրությունից: Դուրս մղվեց, բայց չմոռացվեց, ապրեց մարդկանց հիշողության մեջ լուռ, անշշուկ, վախով քողարկված, մինչև որ 1954-ից հետո վերադարձվեց նրա մաքուր անունն ու պայծառ հիշատակը իր իսկ ժողովրդին, որին նվիրել էր իր կյանքը անմնացորդ, առանց դույզն-ինչ ակնկալիքի:
Յուրաքանչյուր ապարանցու պարտքն է ճանաչել և խոնարհվել այս լուսավոր մարդու, մեծ մանկավարժի, անմնացորդ նվիրյալ հայի հիշ ատակի առջև:

ԶԱՐԶԱՆԴ ԴԱՐՅԱՆ

20-րդ դարի 2-րդ կեսի հակասական, վայրէջքներով ու վերելքներով լի գրական կյանքում մի ինքնատիպ էջ էլ պատկանում է Զարզանդ Դարյանին, որի հարուստ գրական ժառանգությունը իր ապրած օրերի անմիջական արձագանքն է, հայրենասեր ու սրտացավ մարդու հոգու կանչը: Եթե ողբերգական պատահարը անժամանակ չընդհատեր նրա կյանքը, ո՞վ գիտե,գրական ինչ նոր գանձեր պիտի պարգևեր իր ընթերցողներին: Ինչևէ, գրական այն վաստակը, որ թողել է Զարզանդ Դարյանը, արժանի է ամենայն հարգանքի և ուշադրության:
Համառոտ ներկայացնենք նրա կենսագրությունը:
Զարզանդ Մովսեսի Մովսիսյանը ծնվել է 1912թ. փետրվարի 25-ին Արևմտյան Հայաստանի Տարոն գավառի Կոփ գյուղում: Հնամենի Տարոնը, որ հայոց դպրության օրրանն էր 5-րդ դարից ի վեր, դարձավ մանուկ Զարզանդի անհոգ մանկության բնօրրանը: Աղետալի ժամանակներ էին, և Մովսիսյանների ընտանիքը, մազապուրծ թուրք ջարդարարների արյունոտ յաթաղանից, ապաստան է գտնում Արևելյան Հայաստանում:
«Տասնհինգ թվականի գաղթին,- գրում է հեղինակը «Ասք Նգա» գրքում,- Արաքսն անցնելով պապս մեր սայլի գլուխն ուղղեց Ապարան: Չամռլու-Տղմուտ գյուղում մենք ազգականներ ունեինք, որ գաղթել էին 1877 թվականի ռուս-թուրքական պատերազմի ժամանակ: Մեզ հետ եկան յաթաղանից փախած տասնյակ գերդաստաներ, և Արագածը, ինչպես դարեր շարունակ,սիրով ապաստան էր տալիս նրանց»/ էջ 300/.:
Ահա այսպես Ապարանն է դառնում ապագա գրողի երկրորդ բնօրրանը: Մանուկ Զարզանդը ուշիմ էր ու աչքաբաց, հինգ տարեկանում նա արդեն կարողանում էր գրել և կարդալ: Դպրոց հաճախել է Բաբաքիշի (Բուժական) գյուղում, ապա ընտանիքով տեղափոխվել են Երևան, ուր և սովորել է Խ.Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում:
1929-ին ընդունվել է Երևանի մանկավարժական տեխնիկումը, 1934-ին՝ Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը:
Մինչ համալսարան ընդունվելը, ապա նաև ուսումնառության տարիներին ուսուցչություն է արել Գնդեվազ և Կեչուտ գյուղերում, Երևանի մի շարք երեկոյան դպրոցներում:
Առաջին պատմվածքը գրել է 1925թ.: Նաիրի Զարյանի խմբագրությամբ և Զարզանդ Դարյան ստորագրությամբ »Գրական դիրքերում« ամսագրի 12-րդ համարում տպագրվում է »Թղթակից Սաքոյի պատմությունը« պատմվածքը:

Զ. Դարյանի մասին եղած կենսամատենագրության մեջ չի խոսվում բանաստեղծական փորձերի մասին: Հավանաբար հենց սկզբից նա հաստատպես և իրավամբ որոշել է, որ իր տարերքը արձակն է: Առաջին պատմվածքին հաջորդում են նորերը: Դրանց ոչ բազմաքանակ լինելը անշուշտ խոսում է այն մասին, որ գրչի թեթև հարվածներ չէին այդ գործերը, այլ կյանքի բովից վերցված ու ապրված իրողություններ:
1938թ-ին Հայպետհրատը հրատարակում է Դարյանի պատմվածքների առաջին ժողովածուն, ուր տեղ են գտնում հինգ պատմվածքներ: Հրատարակությանը հաջորդում է Մինաս Հյուսյանի »Զ. Դարյանի պատմվածքները« գրախոսությանը: Գրական կողմնորոշումն ակնհայտ էր: Դարյանի հետագա ողջ գործունեությունը սերտորեն կապված է գրական աշխարհի հետ:Նա երկար տարիներ աշխատել է «Ավանգարդ»,»Գրական թերթ», «Սովետական Հայաստան» թերթերի, «Սովետական գրականություն և արվեստ» ամսագրի խմբագրություններում:
50-ական թվականները արգասավոր էին Դարյանի համար: Մեկը մյուսի հետևից հրատարակվում են «Իմ առավոտ»,«Գարուն», «Աղբյուր» ժողովածուները, «Իմ առավոտ» ժողովածուն՝ ռուսերենով, իսկ «Ձնծաղիկ» կատակերգությունը 1955թ.-ին հանրապետական մրցանակաբաշխությունում արժանանում է 3-րդ մրցանակին: Դարյանը նաև փորձեր է անում՝ գրելու լայնածավալ էպիկական ստեղծագործություններ: Առաջինը «Քննություն» վեպն էր, որին հաջորդում է «Մայիս» վեպը՝ Հայրենական մեծ պատերազմի թիկունքային կյանքի մասին, «Սայաթ-Նովա» վեպը՝ երկու հատորներով, մի փոքր ուշ՝ նաև «Արծիվ Վասպուրականի» վեպը: Դարյանը իր ուժերը փորձեց նաև դրամատիկական ժանրում:Բազմաթիվ պիեսների հեղինակ է, որոնցից շատերը բեմադրվել են: Դրանցից հատկապես հիշարժան է «Հանրապետության նախագահը» պիեսի բեմադրությունը Գ.Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնում (1970թ.) Վ.Աճեմյանի կողմից:Այս ստեղծագործությունը դրամատիկական ներկայացումների համամիութենական մրցույթում արժանանում է 2-րդ կարգի մրցանակի և դիպլոմի:
Ստեղծագործական աշխատանքներին զուգընթաց՝ Դարյանը ակտիվորեն մասնակցել է գրական-հասարակական կյանքի անցուդարձին, բազմաթիվ հոդվածների և գրախոսականների հեղինակ է:
Ակտիվ գրական և հասարակական կյանքով ապրող գրողի վաստակը գնահատվում է ըստ արժանավույն. 1982թ. փետրվարի 24-ին ԽՍՀՄ գերագույն խորհրդի նախագահության հրահանգով գրող Զ.Մ.Մովսիսյանը (Դարյան) սովետական գրականությոանը մատուցված ծառայության համար և ծննդյան 70-ամյակի առթիվ պարգևատրվում է Ժողովուրդների բարեկամության շքանշանով:
Կյանքի վերջին տարիներին Զ.Դարյանը գրում է «Ասք Նգա» գիրքը, «Մեր համր, մեր հազարալեզու հողը» ակնարկների շարքը, «Արևագալ» վեպը՝ միջնադարի հանճարեղ բանաստեղծ Նարեկացու մասին:
Իր հարուստ գրական ժառանգությամբ Զ.Դարյանը իր հաստատուն տեղն ունի հայ գրականության անդաստանում:

Հայոց լեզվի և գրականության
ուսուցչուհի Լ.Քոչարյան

<< ԱՍՔ ՆԳԱ » -ԱՍՔ ՍԻՐՈ ԵՎ ՆՎԻՐՈՒՄԻ

20-րդ դարի 2-րդ կեսի հակասական , վայրէջքներով ու վերելքներով լի գրական կյանքում մի ինքնատիպ էջ էլ պատկանում է Զարգանդ Դարյանին, որի հարուստ գրական ժառանգությունը իր ապրած օրերի անմիջական արձագանքն է , հայրենասեր ու սրտացավ հոգու կանչը :

Իր գրական նախափորձերով իսկ Դարյանը ընթերցողի առջև կանգնեց իբրև ռեալիզմի հողի վրա ամուր կանգնած ,կենսափորձի, կյանքից քաղված դասերի ուշադիր ու անկաշառ վերլուծող : Նա չի սիրում գունազարդել իրականությունը և ոչ էլ այն դարձնել պարզունակ ու մակերեսային : Ամեն դեպքում գրողի ելակետը մարդն է , և նա փորձում է թափանցել իր հերոսների ներաշխարհը ապրեցնել նրանց , այլ ոչ թե պատմել նրանց մասին:
Զարգանդ Դարյանի գրական ժառանգության մեջ հատկապես առանձնանում է մի ստեղծագործություն՝ « Ասք Նգա » գիրքը :Իր բնույթով այն փաստորեն հայերենագիտական ակնարկ է պատմական Հայաստանի գավառներից մեկի՝ Նիգ- Ապարանի մասին : Հեղինակն ինքը հենց սկզբից ներկայանում է ընթերցողին ոչ որպես սառնասիրտ պատմաբան և ոչ էլ իր ստեղծագործությունը՝ որպես պատմաբանի հավաստի շարադրանք : Այն հայրենասեր գրողի ,ազնիվ քաղաքացու պրպտումների, մանրակրկիտ ու քրտնաջան որոնումների արդյունք է և առաջին իսկ տողերից գերում է ընթերցողին իր անկեղծությամբ: Գուցե այս խոսքը հնչի փոքր-ինչ կողմնակալ ,քանզի մանկության բնօրրանը , որի մասին այնքան սիրով խոսում և որի անցյալի մութ էջերը այդպես համառությամբ ուզում է թերթել Դարյանը , նաև մերն է , սակայն անկասկած յուրաքանչյուր հայ , որի համար թանկ է իր Հայաստան հայրենիքը ,սիրով պետք է ընթերցի այս գիրքը:
«Նիգ-Ապարանը քուն թե արթուն կանչում է ինձ, սիրտս չի կտրվում իմ մանկության վայրերից:Տարին մեկ-երկու անգամ գնում եմ Քասաղ (Տղմուտ-Զամռլու) , պտտվում նրա չորս բոլորը, բարձրանում գյուղադեմի Կող լեռան լանջերը , նստում՝ Ծլլան աղբյուրի մոտ , որի շուրջը տարին բոլոր կանաչ էր և որտեղ ես ու հորեղբորս տղա Անդրանիկը ծի էինք արածացնում» (էջ 3):
Այսպես պարզ, կարծես անփույթ սկսում է հեղինակը իր շարադրանքը, և ընթերցողը չի տեսնի ոչ մի արհեստական շեշտ, խոսքը գեղեցկացնելու ճիգ ու ջանք:
Արագածի բարձունքներից ծնունդ առնող առվակների նման ծայր է առնում սիրո խոստովանության նմանվող պատմությունը:

Ձեռքի տակ չունենալով հեղինակի նամակները, նրա կամ նրա մասին եղած հուշերը՝ դժվար է եզրահանգումներ անել, սակայն հենց առաջին տպավորությունը աղերսներ է ձգում նրա ժամանակակցի՝ 20-րդ դարի հայ արձակի մի ինքնատիպ մեծության՝ Գուրգեն Մահարու ստեղծագործությունը: Մահարու պարզ, անմիջական, կենսալից և մարդու նկատմամբ գերմարդկային սիրով լի աշխարհը այնքան հարազատ է թվում Դարյանի աշխարհին:

«Ես միշտ հուզվել եմ իմ մանկության հիշողություններով, միշտ մտածել եմ այդ երազային օրերի մասին հիմա, երբ դեռ երիտասարդ եմ, ուզում եմ գրել այդ, նորից կրկնենք, երազային օրերի մասին: Տարիները աղոտել են շատ բան, օ~, այո՛, շատ գծեր են ջնջվել և շատ պայծառ դեմքեր մշուշվել: Ես ուզում եմ փրկել մնացածն ու հնարավորը իմ մանկության խորասուզվող մակույկից»:

Այսպես է սկսում Մահարին իր «Մանկություն» վիպակը: Դարյանը նույնպես, ափեափ լցված մանկության երազային, բայց մշուշվող ու օրեցօր աղոտացող հուշերով, ուզում է փրկել իր բնօրրանի պատմությունը ժամանակի խորասուզվող մակույկից:

«Ես Արագածի զմրուխտ փեշերին թողեցի իմ անգետ, միամիտ երազ-մանկությունը: Մնացին նրա հուշերը, մտապատկերները:<.... > Ու որքան էլ տարօրինակ թվա՝ առաջացած տարիների մշուշի միջից բոցկլտացող այդ հուշն էլ

հրահրեց, որ ես գրիչ առնեմ ձեռքս, անդրադառնամ Նիգ-Ապարանին, դարավոր մոռացումով ծածկված նրա անցյալին, երբ Արագածի լանջերին նրա գագաթների հետ մրցող վանքեր, ապարանքներ, դղյակներ էին բարձրանում և դրանց բացման կամ օծման տոնախմբությանը լարախաղացներ էին ճախրում օդի մեջ՝ երկնայինն ու երկրայինը միաձուլելով իրար: Ահա գոյացավ թախծալի կարոտով պարուրված այս գրույցը՝ գրական ու գիտական որևէ ժանրի չենթարկվող «Ասք Նգա»-ն (էջ 4):

Գիրքը բաղկացած է չորս գլխից, իսկ «Մուտքը» և «Ելքը» կարծես միավորում, ամբողջացնում են առանձին մասերը՝ ստեղծելով պատմական Հայաստանի մի պատառիկ Նիգի համակողմանի պատկերը:

«Ապարանը քարոտ ա»- այսպես է վերնագրված գրքի առաջին գլուխը, որն անդրադառնում է գավառի ծագումնաբանությանը, նրա մասին պահպանված պատմական հիշատակարաններին, անվան ստուգաբանությանը, գավառի առաջին տերերին ու պայազատներին: Հայտնապես հեղինակը դասեր է քաղել մեծ պատմահորից՝ Մովսես Խորենացուց՝ ձգտելով ստեղծել ամբողջական, քննական հավաստի պատում՝ զուգադրելով այն գեղարվեստական բարձրավեստ ոճի հետ: Առաջին իսկ էջերն ընթերցելով՝ ակամա հիշում ես Մովսես Խորենացու հանրահայտ տողերը հայոց թագավորների անիմաստասեր բարքի մասին.

«Զի թէպետ եւ եմք ածու փոքր եւ թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ եւ զօրութեամբ տկար եւ ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ, սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս եւ արժանի գրոց յիշատակի, զոր եւ ո՞ք ի նոցանէ պէտ յանձին կալաւ մատենագրել»:

Դարեր անց, անհամեմատ փոքր մի ձեռնարկության մեջ նույնպիսի դժգոհություն է հնչում «Ասք Նգա»-ի հեղինակի շուրթերից. *«Հայոց ոստաններին այդքան մոտ և հայոց տարեգրությունից այդքան հեռու» (էջ 9):* Համառ նախանձախնդրությամբ հեղինակը փորձում է պատռել անորոշության քողը, պեղել պատմության շերտերը, լույս աշխարհ հանել «փոքրագոյն գավառաց Արարատայ եւ սակաւայուշ ի պատմութենէ Նիգ կամ Նգատուն» գավառի պատմության անհայտ էջերը: Ահա այստեղ է, որ ընթերցողի աչքի առջև բացվում է մի սքանչելի մարդու՝ պատմական Հայաստանի գրեթե բոլոր նահանգների անխոնջ պատմաբան-տեղագիր-աշխարհագիր, մեծանուն հայագիտակ ու հանրագիտակ Ղևոնդ Ալիշանի անձնուրաց, ազգանվեր գործունեությունը. *«Վերադառնանք Արագածոտն-Նգատանը, որի առաջին տեղագիրը, իրագիրը, պատմիչը իրավամբ կարելի է համարել Ղևոնդ Ալիշանին՝ առանց նրա անվանն ավելացնելու «նգացի» կամ «ապարանցի» հորջորջումը, քանի որ հին ու նոր Հայաստանի ամեն գավառ կարող է իր անունը ի տրիտուր ընծայել նրան» (էջ 19):*

Անկասկած, Ալիշանի կերպարը հիացրել է Դարյանին, և պատահական չէ, որ բավական մանրամասն խոսում է նրա մասին իր ասքում: Անկաշառ ու անձնուրաց հայրենասիրության այս օրինակը սերունդներ կարող է դաստիարակել:

Մանրամասն խոսելով Նիգ և Ապարան տեղանունների ստուգաբանության մասին՝ Դարյանը փորձում է հասնել սկզբին, և պրպտումները Ալիշանի հետքերով նրան հանգեցնում են բիբլիական ծագման գաղափարին: Ասվածի պատմական հավաստիության հաստատումը թողնելով պատմաբաններին՝ ուզում ենք հատկապես կարևորել բարոյահոգեբանական այն հզոր լիցքը, որ հաղորդում է հեղինակը իր ընթերցողին, գուցե հատկապես ապարանցի ընթերցողին. ինչպե՞ս կարելի է չսիրել կամ չհպարտանալ իր ծագումով մինչև բիբլիական հեռուները ձգվող ծննդավայրով:

Երկրորդ գլխում, որ վերնագրված է «Գարուն ա, ձուն ա արել», հեղինակը ձեռնամուխ է լինում գավառը տեղագրելու գործին՝ այն զուգադրելով գեղեցիկ բնաշխարհի բանաստեղծական նկարագրության հետ. *«Մեր խնդիրը չէ հեռուներ գնալ, հնագիտական, երկրաբանական, ճարտարապետական, ատոմագիտական վեճերի խորխորատներ մտնել՝ առանց այնտեղից դուրս գալու նվազագույն հույսի: Վերադառնանք, ուրեմն, գավառը տեղագրելու մեր համեստ գործին... » (էջ 56):*

Նիգ-զովաստանի խստաշունչ, բայց և գեղատեսիլ բնության նկարագրությունից հետո հեղինակը փորձում է պեղել «ժամանակի պղտոր գետի» հորձանուտում կուլ գնացած հինավուրց քարեղարյան քաղաքների, բերդ-ամրոցների, ժայռաքարե կրոմլեխների ու դոլմենների, արքայական ապարանքների և հյուրանոց-ասպնջատների մնացորդները:

«Այսպիսով, Արագածի միայն հյուսիսարևմտյան լանջերին՝ Նիգ-Ապարան գավառի մի անկյունում, շատ բերդեր և երկու քաղաք եղել, մեկը՝ նախապատմական, քարե դարի շրջանից, մյուսը՝ երիտասարդ, ընդամենը ուրարտական ժամանակներից» (էջ 50):

Ուզում ենք հատկապես շեշտել այս բազմանշանակ բառը՝ «ընդամենը»: Դիպուկ ընտրված մեկ-երկու բառով հեղինակը ստեղծում է ծանրակշիռ պատմություն հինավուրց մի գավառի, որի համար ուրարտական ժամանակաշրջանի կառույցը կարող է համարվել երիտասարդ: Եվ, որ շատ կարևոր է, յուրաքանչյուր դատողություն փաստարկվում է գիտնական ուսումնասիրողներից վերցված հին ու նոր փաստերով (Թ. Թորամանյան, Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանց, Ղևոնդ Ալիշան): Առանց հոգնության շրջելով գավառի ողջ տարածքով՝ Դարյանը մեկ առ մեկ նշում է բոլոր մեծ ու փոքր հուշարձանները՝ մեր պատմության այդ լուռ, քարեղեն վկաները, որոնք, ցավոք, ժամանակի ավերիչ շնչից ու մարդու անփույթ վերաբերմունքից օրեցօր քայքայվում, անհետանում են: Օրինակ, խոսելով Ղարանլուղ- Լուսագյուղի մոտ գտնվող կիկլոպյան կրաշաղախ շենքի մասին, Դարյանը ավելացնում է. *«Թորամանյանի հիշատակած ժայռաբեկորներից հետք անգամ չկա: Ոչ էլ հզորության որևէ այլ նշան կարելի է ցույց տալ» (էջ 64):*

Ինչքան-ինչքան այսպիսի հիշատակներ են անհետացել սրտացավ ուսումնասիրողի բացակայության պատճառով. այս հարցը առաջանում է ակամա և կարծես առավել ցայտուն դարձնում Զարգանդ Դարյան գրողի ձեռնարկած գործի կարևորությունն ու անհետաձգելիությունը: Կասկածից վեր է, որ իր ձեռնարկած գործին կարևորության գիտակցումն էլ հենց մղել է նրան այդքան սիրով իրագործելու այդ ոչ դյուրին նախաձեռնությունը:

«Եվ այսպես, բերդ-ամրոցների, քար ու կապանի, բերդանմանլեռների հովանու տակ դար ու դարեր ընթացել է կյանքը, վանքեր, տաճարներ են բարձրացել, անապատներ ու մենաստաններ են հիմնադրվել և լցվել այս ծորը, խնկի ու կնդրուկի ծուխն է խառնվել հազարերանգ ծաղիկների բույրին ու բուրվառել դեպի երկինք: Այդ սրբավայրերից շատերն անհետացել են ժամանակի կամ օտար նվաճողի ամենակործան ձեռքով, մյուսները խոնարհվել են, բեմ ու խորան բաց արել արևին ու անձրևին: Եվ ապրում-հարատևում են այս բարձունքներին, Աստծո ոտքերի տակ, անդնդախոր կիրճերում ու ծմակներում, ամառ թե ձմեռ: Հարատևում են.... Բայց ի՞նչն է հարատև այս հին ճանկռոտված լուսնի տակ: Ուրեմն շտապել այցի գնալ դրանց, քանի դեռ ժամանակի աղորիքն իր գործը չի ավարտել, և քարաքոսն ու մամուռը վերջնականապես չեն մաշել վիմափոր տառերն ու խաչերի ժանյակները, լեռներ բարձրանանք ու ծորերն իջնենք այս շատ ուշ բացված գարնանը» (էջ 68):

Այսպես է ավարտվում երկրորդ գլուխը, որն արդեն նախանշում է հաջորդ գլխի էությունը՝ դառնալ դեպի քարի պաշտամունքը, շրջել քարեղեն հրաշքների աշխարհում, հուզմունքով շոշափել մաշված վիմագրերը, կոտրած խաչքարերի զարդանախշերը, անցել բոլոր մեծ ու փոքր հուշարձանները՝ Ճարճատնա վանքից մինչև Քասաղի բազիլիկա: Եվ յուրաքանչյուրի մասին Դարյանը պատմում է չխամրող հիացմունքով ու սիրով՝ մերթ անցյալի փառքերը ներբողելով, մերթ վերծանելով անցած-գնացած դարերի ամենօրյա եռուզեռը (հիշենք միայն Թեղենյան վանքի անապատի վանահայր Տուրքիկի մասին հատվածը): Հեշտ չէր այդ ամենին իրագործումը՝ լուրջ ուսումնասիրությունների սակավության կամ բացակայության պատճառով:

Խոսելով Քեշիշքենդ (Գեղարոտ) գյուղի մոտ գտնվող անանուն եկեղեցու մասին՝ Դարյանը գրում է. *«Ցավոք, պեղումների արդյունքների վրա խարսխված չեն*

լինելու մեր եզրահանգումները հնության այս բեկորների մասին: Ոչ միայն այստեղ, ողջ Նգա գավառում պեղումներ չեն եղել երբևէ, այլ անհիմն ենթադրությամբ, թե իբր գավառը հնագիտական տեսակետից արժեքավոր քիչ գաղտնիքներ ունի ծածկած իր ընդերքում՝ սակաւայուշ ի պատմութենէ»(էջ 83):

Անշուշտ, այս գեղեցիկ ասքը կիսատ պիտի լիներ, եթե անձեռակերտ ու ձեռակերտ մեծ ու փոքր հրաշալիքների կողքին չհիշվեր այդ ամենի կերտողն ու կենդանացնողը՝ մարդը, որն էլ հենց չորրորդ՝ «Մարդը մարդուն» վերնագրված գլխի կենտրոնական հերոսն է: Դարյանը փորձում է ի մի բերել Նգա սակավահուշ պատմության մեջ հիշատակվող բոլոր մեծերին.

«Նգա մեզ հայտնի ամենահին տերերը, ինչպես տեսանք, Գնթունեիներն են: Իբրև ազդեցիկ նախարարություն՝ հայտնապես նրանք շատ քաջագործություններով էին աչքի ընկել երկրի պաշտպանության մեջ և Արշակունի Տրդատ թագավորը ի տրիտուր Նիգը ընծայել էր նրանց: Ընծայել էր ոչ միայն խոսք-երդումով, այլև արքայական վիմագիր հրովարտակով, որ պատվո ամենաբարձր արտահայտությունն էր ժամանակին» (էջ 222):

Գնթունիներին փոխարինում է Վաչուտյան ոչ պակաս հզոր իշխանական տոհմը՝ հանձին Քուրդ և Վաչե իշխանների, որոնցից առաջինի տանը ժամանակավոր հանգրվանել է Կիլիկյան Հայաստանի թագավոր Հեթումը: Պատմական տարբեր աղբյուրներից հավաքելով ժլատ պատառիկներ՝ Դարյանը փորձում է հյուսել անցյալի հերոսական պատմությունը, որ արժանի է գրով հիշատակելու. Անշուշտ, միայն իշխանական տոհմերով չէր սահմանափակվելու հեղինակը. *«Աշխարհիկ զորեղ նախարարների, շինարար ու ռամիկ իշխանների հետ մեկտեղ Նիգ-Ապարանը հայտնի է եղել և իր հոգևոր մեծերով» (էջ 250):*

Առաջինը հիշատակվում է Դվինի Սուրբ Գրիգոր եկեղեցու փակակալ Եզրը՝ 630թ.՝ խառնակ մի ժամանակաշրջանում ընտրված կաթողիկոս՝ «ի Նիգ գավառէ, Փառաժնակերտ գեղջէ», Սեբեոսի վկայությամբ՝ «այր խոնարհ ու հեզ, որ ոչ կամէր զոք ցասուցանել եւ ոչ ելանէր բերանի նմա բան տգեղ» : Ապա հյուսվում է մի հուզիչ պատմություն աստվածային շնորհով բազում փորձություններ վերապրած և ի վերջո քահանայապետ օծված Եսայի եղիպատրուշեցու մասին:

Այնուհետև հեղինակը շարունակում է.

«Ճիշտ է, պատմական տվյալ հատվածում մատյաններն ու հիշատակարանները Նգա որևէ գործչի, հոգևոր պաշտոնյայի կամ շինականի անուն չեն հիշատակում: Մարդիկ աշխարհ են եկել, գործել, տառապել ու անցել անհետ: Որևէ տեղ չի դաջվել նրանց գործն ու անունը, ոչինչ չի պահպանվել սերունդների հետ խոսող: Երգից, բառ ու բանից բացի» (էջ 299):

Եվ բացվում է որոնումների մի նոր շղթա՝ ապարացին երգ ու բանի մեջ:

Ավարտելով գիրքը՝ Զ. Դարյանը հնօրյա բարձրավեստ կոթողների ու մեծությունների կողքին է դնում, իր իսկ խոսքերով ասած, նոր ժամանակների երկու կերտվածք՝ քարեղեն և մարդեղեն՝ իբրև շարունակություն ու խորհրդանիշ Նգա դարավոր գոյամարտի, դեպի հավերժություն ընթացող նրա անվախճան երթի. մեկը «Վերածնունդ» հուշարձան- համալիրն է՝ քարե մի եռագրություն, որ կենաց ու հարատևության ղողանջ է աշխարհով մեկ, մյուսը՝ բռնության խորհրդանիշ Ռայխստագի պատին արձանագրված չորս բառ՝ «Ապարան- Բեռլին, Բեգլար Վասիլյան»:

Այսպիսի ավարտով հեղինակը ցանկացել է կամուրջ ձգել անցյալի և ներկայի միջև. չէ՞ որ կյանքը շարունակվում է: Գալիք մեծ գործերի հույսով լեցուն՝ հեղինակը վերջակետ է դնում իր հայրենաշունչ ստեղծագործությանը: Եվ քանի որ ոչ ոք այնպես լավ չի կարող բնութագրել այն, ինչպես ինքը՝ հեղինակը, ուստի դարձյալ դիմենք նրան. *«Ընդամենը զրույց է սա՝ հավանական և անհավանական ենթադրություններով, բնաշխարհով տարված մարդու ակնարկ, որ կարող է վրիպել, վերջապես ասք է՝ պատմագրության ու վիպասանության արանքում իրեն տեղ բաց անող գրական մի սեռ, որ չի դիմանա ժամանակակից պատմագրող-տեսագրողի խստադատ հայացքին: Ուստի և հեղինակը նպատակահարմար գտավ նախնյաց ոճով փակել այս գրչությունը. «Աղաչեմ, անմեղադիր լերուք սխալանացն ու խոշորութեանց գրիս, զի կար մեր այս էր....» (էջ 326):*

Ինքնամոռաց նվիրում և դարեր ի վեր հայի մեջ ապրած գրի ու գրչության, հայրենիքի պաշտամունք, որ մենք տեսանք նաև Զարգանդ Դարյանի ասքում:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Հայոց պատմությունը դարեր շարունակ լռությամբ է անցել Արարատյան դաշտավայրից ոչ հեռու, բուն Այրարատ աշխարհի մեջ մտնող այս երկրամասի կողքով. հատուկենտ տեղեկություններ է միայն ավանդել գալոց սերունդներին, մի երկու տեղանուն՝ Արագած, Արա լեռ, Ծաղկունյաց լեռներ, պատմահայր Խորենացու «Հատված գնացեալ»-ի մեջ հիշվող «զՔասաղ գետով», Նիգ կամ Նգատուն գավառ՝ կապված Գրիգոր Մագիստրոսի և Եզր կաթողիկոսի անվան հետ: Ուրիշ գրեթե ոչինչ: Զուր չէ, որ Ղ.Ալիշանը իր «Այրարատ» հատորի «Նիգ-Ապարան» գլուխը սկսում է ափսոսանքի երանգով. «----փոքրագույն գաւառաց Արարատայ և սակաւայուշ ի պատմութենէ Նիգ կամ Նգատուն»:

Սակայն անցյալից մնում է մի շատ կարևոր բան՝ երգը, որին դեռ ջրասույզ չի արել ժամանակի պղտոր հեղեղը:

1901թ. «Մուրճի» 10-րդ համարում կարդում ենք. «Ապարանի երգում մարմնավորված է ողջ հայրենին, դարերով տառապած հայ ոգին, և բիբլիական ջրհեղեղի արձագանքը չէր խանգարում, որ այն հնչեր պատանեկան թարմությամբ ու հախուռն և վշտի հետ մեկտեղ աշխարհի առաջ բաց աներ ապագայի իր երազները:

Զարմանալի է ապարանցու մեղեդիական ընդունակությունը. շատ ժողովրդական ու ընտիր երգեր ու լեգենդներ, որոնք այժմ այլևայլ վարիանտներով երգում են ժողովրդի մեջ, Ապարանից են դուրս եկել: Օրինակ՝ «Բերդիցը դուրս ելա», «Ծամերդ», «Արի, սիրուն», «Ես սարեն կուգայի» և այլն: Այդ լեգենդների մի մասը հավաքել է Գարեգին վ. Հովսեփյանը, իսկ մի քանիսը ձայնագրել է Կոմիտաս վարդապետը:

Ապարանցու երգերի թեման գլխավորապես վիշտն է ու բողոքը կյանքի հասցեին: Այն կյանքի, որ այժմ վառում է նրա մեջ կրքի լեզուն՝ իր հող-գլուխը ողբալու, և դուրս պոկում նրա մրրկվող կրծքից մղկտուն գալարումներ և կլկլոցներ: (Մուրճ, 1901 №10 էջ 150):

Ավելորդ չէ նշել, որ Գ.Սրվանձտյանից և Մ.Աբեղյանից հետո «Սասնա ծռեր»-ի միանգամից 5 տարբերակ գրի առած Գ.Հովսեփյանը դրանցից մեկն էլ գրի է առել հենց Ապարանում:

Ցավոք, Նիգ-Ապարանի երգերը, պարերգերը, ժողովրդական բառն ու բանը մինչև այսօր էլ հատուկ վերաբերմունքի և գնահատության են կարոտ:

Ապարանը քարոտ ա,
Յարը յարին կարոտ ա...

Առաջին հայացքից կարող է սովորական բառահանգ թվալ, սակայն այն, ինչպես արևը մի կաթիլ ջրում, ցոլացնում է մի կողմից բնաշխարհի պատկերը, մյուս կողմից՝ այդ բնաշխարհի ծոցում ապրող ծանր վիճակը:

Ահա մի այլ սրտաճմլիկ իրական պատմություն:

20-րդ դարի սկզբներին Ապարանի Չամռլու գյուղում Աղեկ անունով մի շինական է ապրելիս եղել: Մի տարի իր հողակտորում սահմանի պատճառով հակառակություն է առաջանում նրա ու տանուտերի միջև: Գարնանը տանուտերը վարել է տալիս Աղեկի հողակտորի մասը, իսկ նրան դիմադրելու, հայհոյելու համար մի լավ ծեծում ու տանում է Երևանի բերդ:

Աղեկն այլևս չի վերադառնում գյուղ: Վերջին անգամ նրա աչքը Արագածին է ընկնում, երբ բերդից հանում են՝ Սիբիր քշելու: Այս սրտաճմլիկ պատմությունը դառնում է երգի նյութ:

Բերդիցը դուրս ելա, Ալագյազ տեսա,
Խանում Եվա ջան,
Արագած աշխարհը դրախտի պես ա
Դուն կեցիր բարով,
Ես կերթամ տարով,
Լալով ողբալով
Քոչ ու բարխանով:
Ոչխարն էս դին կարծես, էն դին՝ գառները,
Կանաչել են ծաղիկները, ծառերը:

Արի երթանք քո ման գալած արտերը
Քեզի տեսա՝ թազացան իմ դարդերը:
Ես Աղեկն եմ, չամռլեցի մեկ Ջիվան
Խանում Եվա ջան,
Դուտսաղ (բանտարկյալ) եղա ըստուց չուր Երևան,
Դուն կեցիր բարով...

Ապարանցի շատ երիտասարդներ տուն ու տեղ թողնում էին,դառնում «պանդխտագրական» զոհ, գնում էին Բաքու կամ Թիֆլիս՝ բախտ որոնելու: Շատերը չէին վերադառնում: Օտարությունը քամում էր նրանց ուժը, հալումաշ անում, և Արագածի կարոտը սրտներում՝ մեռնում էին անշիրիմ, անհետ:Մոր գոգնոցը չէր չորանում այլևս, քունը փախչում էր սիրած աղջկա աչքերից:

Ջաղացս մանի-մանի,
Քունս անուշ կտանի,
Իմ յարը չոլում, սարում,
Իմ քունը ո՞նց կտանի...

Բաքվի ու Թիֆլիսի փողոցներով անցնում էր ապարանցի գործավորը՝ իր սառն աղբյուրների շշունջը հոգում, թախծալի երգը շուրթին: Իսկ երգը ծնվում է ինքնաբերաբար, կարոտի, թելադրանքով, որ օտար երկրում զորավիգ դառնա սրտին: Երգով նա աշխարհին պատմում է, թե ով է ինքը, որ անտուն, անհայրենիք չհամարեն:

Եղբայր, կուզես լավ իմանալ՝
Մեր նահանգը Երևան է,
Սարը բարձր, ջուրը քաղցր՝
Մեր երկիրը Ապարանն է:

Երևան ասվում է Կավկազ,
Մեր սարին կասեն Ալագյազ,
Մայիս, հունիս այնտեղ ման գաս
Օդը մարդուն բալասան է:

Ալագյազի ծաղիկը շատ,
Ամառը լավ, ձմեռը վատ,
Սառն աղբյուրներ մեջը առատ,
Լիճը բարձր ու գովական է:

Մեր Ալագյազ սարի մածուն,
Կաթի սերը լավ է մարդուն,
Շատ անուշ է շվաքի քուն,
Գովեստս նրան արժան է:

Թումասօղլի Գևորգի բան,
Եթե ամբողջ Բաքուն ինձ տան,
Դարձյալ կասեմ՝ ախ, Ապարան,
Նա պապերիս գերեզմանն է:

Այս Թումասյան Գևորգը երկար տարիներ բանվորություն է արել Բաքվում ու այնտեղ էլ մեռել է 1918թ.:

Ապարանցի շատ երիտասարդների էր բաժին ընկնում Գևորգի ճակատագիրը: Նրա նման Բաքվի ճանապարհն է բռնել Գյուլավտի-Գյուլափլու (այժմ՝ Ջորագլուխ) գյուղացի նորապսակ մի երիտասարդ՝ Աբրեի Արշակը: Տանը նա թողել է հորը և մորը, աչքերն արցունք կտրած նորահարս Սալաթին:

Սակայն պանդխտության ճանապարհին նավը խորտակվում է, իսկ երիտասարդը՝ զոհվում:

Արշակն եկավ ծովը գնաց,
Խեղճ Սալաթին դավեր մնաց,
Խաբար տարեք խեղճ Թամամին՝

Աբրեի տուն ավեր մնաց:

Շորորա, Սալաթ, շորորա,
Լոդկեն Արշակին կօրորա:

Քամին ելավ երան-երան,
Լոդկեն զարկեց ծովու բերան,
Խաբար տարեք իմ մայրիկին,
Մեր տուն ու տեղ մնաց վերան,

Երկինք ամպեց, քամին առավ,
Ծովու երես ջուրը առավ,
Թիակ զարկի, ինչ-որ արի,
Լոդկեն տեղեն ետ չդառավ:

Ես Արշակն եմ գյուլափլեցի
Գիշեր-ցերեկ ծովին կացի,
Խաբար տարեք իմ Սալաթին,
Հնար չեղավ՝ նստա լացի,

Շորորա, Սալաթ, շորորա
Լոդկեն Արշակին կօրորա:

Այս խաղի ձայնագրումը կատարել է Կոմիտաս վարդապետը: Մթին ծորերում հյուսված մեղեդին հասել էր հանճարեղ վարդապետին, շառագունել նրա հոգու լույսով: Ապարանի ուրիշ շատ խաղ ու տաղի է դիպել նրա ձեռքը: Գետնափոր խուղերի միջից վարդապետը հավաքում էր ադամանդի բեկորներ, սրբում նրանց վրայի փոշին, իր սրտի կրակով ջերմացնում, որ հետո տանի Եվրոպայի լուսազարդ դահլիճները, զնգացնի Արագածի փոթորկոտ շնչով: Կոմիտասն է ձայնագրել «Խանում Եվա ջան», «Այ հևա, հևա սիրտս», «Կանգել եմ, գալ չեմ կարող», «Իմալ էնեմ», «Ես սիրեցի՝ ուրիշն առավ», «Գութանը հաց եմ բերել», «Ես սարեն կուգայի» և շատ այլ խաղեր:
Այս փոքրիկ զրույցը ապարանյան բառ ու խաղի մասին ավարտենք անհագուրդ սիրո մի դրամայով:

Աման, ադե, դուն արեցիր,
Էս քոռ գյադեն ո՞ւստ ճարեցիր,
Թամահ արիր հարուրնոցին,
Ընձի տվիր գրկանոցին:

Իրիկուն է, ճրագկպոց,
Պստիկ էրիկս դնեմ օրրոց,
Կտրիճ չունեմ, որ տեղ գցեմ,
Երկեն գիշեր քաղցրիկ խոսեմ:

Քըզի մեռնեմ, խաթուն կեսուր,
Քու ծուռ տղին խրատ մի տուր,
Չերթա պառկի գոմշի մսուր,
Ճերմակ ծոցում ի՞նչ կա խսուր:

Էրիկ մ'ունիմ դեղին-մեղին,
Ով որ տեսնի՝ պատռի լեղին,
Ձեռնեն բռնեմ տամ գրողին,
Թողնիմ երթամ հետ սիրողին:

Իմա՞լ էնիմ ես քու դարդեն,
Իմ երեսիս պատռավ փարդեն,

Նոր եմ եկել յարոջ մոտեն,
Չեմ կշտացել անուշ հոտեն:

Հրամգահ ա, բերի գախ ա,
Բերի կճուճ թևես կախ ա,
Էկան ըսին էրկան մահ ա,
Աչքս կուլա, սիրտս ուրախ ա...

***

Յուրաքանչյուր ժողովուրդ, իր գոյատևման ընթացքում ստեղծելով իրեն հատուկ արժեքներ, փորձում է հաջորդ սերունդներին փոխանցել իր կողմից ստեղծած, արարած, կառուցած կամ ձեռք բերած այն ամենը, ինչը բնորոշ է իրեն: Սերնդեսերունդ հասցվող արժեքներից երաժշտական մշակույթը ժողովրդի բնավորությունը» կամքն ու աշխարհընկալմանը ներկայացնող բնութագրիչներից է:
Ապարան աշխարհի թե՛ աշխարհագրական դիրքը» թե՛ պատմական իրադարձությունները խորապես ազդել են ազգային երաժշտության կազմավորման վրա: Ապարանում զարգացած է հատկապես ֆոլկլորային երաժշտությունը: Ժողովրդականություն են վայելում հատկապես օրորոցային երգերը, կատակերգերը, պարեղանակները: Հարսանեկան երգերը հարսանեկան ծեսերի ժամանակ երգվում էր «Հարս եմ գնում տանից հեռանում...» հուզիչ երգը /երգվում է որպես հարսի լաց հարազատներից հեռանալիս:

Հարս եմ գնում տանից հեռանում,
Հարս եմ գնում տանից հեռանում,
Կաթնատու մայրիկ ջան
Քեզ չեմ մոռանում:
Կաթնատու մայրիկ ջան
Քեզ չեմ մոռանում:

Հարսանիքի ժամանակ հարսի ծածկոց տանից դուրս բերելիս կատարել են հայտնի «Յարմ գորանի» պարերգը:

Եկել են ու կտանեն,
Յարմ գորանի
Յարմ գորանի, յարմ գորանի,
Յարմ գորանի, վայ լո
Մշո գորանի

Ապարանում մինչև օրս շատ տարածված են գովնդի պարեղանակները: Գովնդը ըստ տարածված կարգի իրար միացված պարեղանակներն են՝ իրենց ուրույն երգային բովանդակությամբ: Գովնդի մասնակիցները միաժամանակ և՛ երգում են, և՛ պարում /շուրջպարի տեսքով/: Դրանք նույնպես կատարվում են հարսանեկան ծեսերի ժամանակ:
Ժողովրդի շրջանում լայն տարածում ունի «Հելնեմ սարը, բռնեմ բոլորի պարը» պարերգը:

Հելնեմ սարը,
Բռնեմ բոլորի պարը,
Սարեր ջան, հետ գնացեք,
Տեսնեմ իմ յարը

Յարս գնաց, ուշացավ
Յարս, յարա.
Հեռու երկրին մոտացավ,
Վառիր ջանս...

«Մարգերի օլորը» երգ- երկխոսության ձևով ներկայացվող ամենատարածված երգերից է:

Մարգերի օլորը,
Մարգերի օլորը,
Թելով է նախշուգ յար
Իմ դայրի բոլորը:

Սարից եկավ ձիավոր
Մարգերի օլորը,
Չարի էր, կանեմ քավոր,
Մարգերի օլորը ...

***

Մարդ կա՝ զարդարված է ոսկով, արծաթով,
Մարդ կա, որ մերկ կաշվե քյամար էլ չունի:
Մարդ կա հոտեր ունի անթիվ, անհամար
Մարդ կա, որ մեկ ավուր ոչխար էլ չունի:

Սպահեն էր երկիրը բնական, բնական,
Անտեր մնաց այգիս, պարտեզ , բուրաստան
Ասլուս եմ կորցրել, նրան ման կուգամ,
Ասլին քրիստոնյա էր, ես՝ մահմեդական,
Դինա դնեն չեկավ, ես ինչպես անեմ...

***

Տերը քեզ պարգևեց հարյուր տարի կյանք,
Խելոք որդի լինես ծնողաց պաշտպան,
Մի՛ տուր քնիդ, միջին ինձի չարչարանք,
Դե քնիր, որդյակ, ասում եմ՝ լա~յ-լա~յ

Տերտեր կանչի՛ բերի, որդուս կնքեցի,
Օրիս միջին այդքան ես ծախս չարեցի,
Ոսկե ապարանջան նվեր գնեցի,
Դե ննջիր ,որդյա՛կս, ասում եմ՝ լա~յ-լա~լ:

Իստանբուլից բերված ականջիդ օղը
Տասնհինգ տարեկան էր նրա գործողը:
Դե ննջիր որդյա՛կ, ասում եմ՝ լա~յ- լա~յ
Անուշ-անուշ օրոր, իմ անուշ բալիկ.
Հաջողություն լինի ամբողջ աշխարհին ,
Կյանք ու արև լինի հայոց մայրերին:

Ոսկե ապարանջան նվեր գնեցի,
Դե ննջիր որդյակս, ասում եմ՝ լա~յ-լա~լ:

***

Ասի մտնեմ Ախուրյան գետ,
Մի քիչ խաղամ ձկների հետ,
Ձեռքս տարա, որ ձուկ բռնեմ ,
Ձարթնա, տեսա, որ երազ էր,
Առնեմ ու հելնեմ Ալագյազ,
Ծաղիկը փնջեմ, ջուրը խմեմ,
Պար գամ, լանջիդ, իջնիմ ցած:

ԱՊԱՐԱՆԻ ԳՈՒՍԱՆՆԵՐԸ

ՆԻԳ-ԱՊԱՐԱՆԻ ԳՈՒՍԱՆՆԵՐԸ, ԱՇՈՒՂ-ՏԱՂԱՍԱՑՆԵՐԸ ԵՎ ԵՐԳԻՉ-ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ: Հայ գուսանական արվեստի անդաստանում Շիրակից հետո ամենածանրակշիռ ավանդը ունի Նիգ-Ապարանի տարածքը:

Մինչև 19-րդ դարը ապարանցի գուսանների մասին տեղեկությունները բացակայում են: 1829-1830 թվականներին Նիգ-Ապարանում հաստատված և այնուհետև տարածքի բնակավայրերը շենացնող բնակիչների թվում սկսեցին մեծ թիվ կազմել գուսանները, աշուղ-տաղերգուները և երգիչ-կատարողները:

19-րդ դարի առաջին կեսին են գործել *Բաղդասարը* (Քուչակ), *Սեյրանը, Բանգին* (Եղիպատրուշ), *Սինասը* (Տեր Գրիգոր, Քասաղ): Նույն դարի երկրորդ կեսից հայտնի է *Հալաջյանի* (Գալուստ Ավետիսյան, Չքնաղ), *Զուլալի* (Ավետիս), Մեհրամի (Գրիգոր, Եղիպատրուշ), *Տեր Մելքոնի*, Սաղոյի (Ապարան), Կնյազի (Հարթավան), Փիրքյան Արամի (Եղիպատրուշ), Հունանի, Մակարի, Հարությունի, մյուս Բաղդասարի անունները: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբներին են ստեղծագործել *Սանասը* (Ապարան), Հովակը, *Մահուբի Գևորգը* (Գևորգ Մանուկյան, Երնջատափ), *Գուսան Աշխույժը* (Արագած), *Թումասը* (Քասաղ), Մուշեղը (Շենավան): 20-րդ դարի առաջին կեսին և 50-60-ական թվականներին հայտնի են կին աշուղ Զեբեդը (Հարթավան), *Սամիկոն Յակրոմյանը* (Ծաղկաշեն), *Սեդրակ Համբարձումյանը* (Եղիպատրուշ), Անդրանիկ Ստեփանյանը (Քասաղ), Անդրանիկ Խաչատրյանը, *Դավիթ և Գևորգ Մանուկյանները* (Երնջատափ), Արարատը, Սարգիսը, *Սամսոն Մուրադյանը* (Մուրոյի Սամսոն, Ափնա):

Ապարանցի գուսանների, աշուղ-տաղերգուների և երգիչ-կատարողների ստեղծագործություններից օրինակներ տպագրվել են «Հայ աշուղներ» (Ե., 1937 թ.), «Հայ գուսաններ» (Ե., 1957 թ.), «Հայ գուսանական երգեր» (Ե., 1976 թ.) ժողովածուներում, Վ. Մելքոնյանի «Արագած բարով արա» գրքույկում, Ապարանի շրջանային «Ծաղկունք» թերթի տարբեր տարիների համարներում:

Ապարանցի գուսաններից առանձին գրքերով հրատարակվել են միայն Մահուբի Գևորգի «Երգարան» (Թիֆլիս, 1912 թ.), «Զուքակ» (Ե., 1957 թ.), «Աշուղի աշխարհը» (Ե., 1991թ.) և Գուսան Աշխույժի «Աշուղական» (Ե., 1947 թ.), «Քնար» (Ե., 1955 թ.), «Աղբյուր» (Ե., 1958 թ.) ժողովածուները:

ԲԱՂԴԱՍԱՐ

ԲԱՂԴԱՍԱՐ (ԲԱՂԴԱՍԱՐ ԱՇՈՒՂԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ), գուսան:

Ծնվել է 1790-ական թվականներին, Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի գավառի Գյուլասար գյուղում:

1829 թվականին գաղթել և հաստատվել է Ապարանի շրջանի Քուչակ գյուղում:

Ունեցել է ձայնային հիանալի տվյալներ: Հորինել է հայերեն, պարսկերեն, թուրքերեն, քրդերեն երգեր, նվագել բլամանի վրա: Շրջել է Հայաստանի բնակավայրերով, մրցել ճանաչված աշուղների հետ: Երեք փուլով հաղթել է Երևանի սարդարի աշուղներին:

Պահպանված երգերը շոշափում են կրոնաբարոյախոսական, սոցիալական թեմաներ, շատ են սիրային բնույթի երգերը:

Մահացել է 1850-ական թվականներին:

Երգերից մեկ օրինակ հրատարակվել է «Հ ա յ ա շ ու ղ ն ե ր» (1937 թ.), մեկը՝ «Հայ գուսանական երգեր» (1976 թ.) գրքերում:

ԱՅՍՕՐ ՄԻ ԳՅՈՂԱԼ ԵՄ ՏԵՍԵ

Այսօր մի գյոզալ եմ տեսե, նոր բազա մահմուդ ջիվան ա,
Խելք ու ֆայմը աստծուց առե, մտին բամալ ու նիգան ա,
Ծամերը ծալ-ծալ աբրեշում, տրդամարդ կանե դիվանա,
Անգրջեռն օսկե գրնդերով, ակունքը բերան Դաղբստանա:
Էդ քո մարմար ճակատն ասեմ, բազում կըտրըշի դալխան ա,
Ընքներդ դալամով բաշած՝ թարթափ դրբրնգի ջրան ա,
Մայիլ եմ չալ-չալ աչքերիդ, մին-մին ֆարֆուրի ֆինջան ա,
Մին երեսդ աղբրանց արուն՝ սարն ա, կըտրըշի սեյրան ա,
Մին երեսդ բաֆուր վարդ ա, բոլորը բաղ ու բոստան ա,
Մուրաթդ չիմացել դալամ, ալբզտի բիթ, չունիս մրհանա,
Վերին պռունկ շամշ ու դամար ա, ներքին պլբոնկին տայան ա,
Կասեն քո լեզուն անուշ ա, շաքար շարբաթի մենան ա,
Ատամներդ լալ ու մարգրիտ, աղրուտ զրմրուտի շարան ա,
Բոխսխըդ գարնան ծաղիկ ա, ծալ վլը իդար ընդիջան ա,
Ոչ կերած ասեմ, ոչ խաղած, ջամալ գոված, որ ուրյանա,
Դառնամ սիվտակ դռշրդ բանամ, բազա ձյուն ա Քուրդիստանա,
Ծրծերդ երկու ասրի նրման, միջի շուռ գալող ասլան ա,
Բոյըդ ծառ չինարի նրման, թևերդ բազա ֆիդան ա,
Մատներդդ բարակ մոմեդենն ծաղկունյաց ասեղ դաստան ա,
Խրտ կլոր փաչիդ ուրյան ա, խալ-խաթի տակ բուխ մաքան ա,
Ոտուցդդ մանդդ ստաքֆին, հրեղեն ձրկան ասլան ա,
ԸՍտամբոլս բարձած կուգա՝ էդ բու խավնած բարավան ա,
Չիմացանք բեռներդ ինչ էր, խումաշներ կըտրե՝ դուրան ա:
Բեչարա դու Բաղդասար կուլա, թե էս դունչեն ինձի մընա,
Էսպես գոգալներ գովալով՝ կինամ, որ հոգուս զիան ա:

ՄԱՀՈՒԲԻ ԳԵՎՈՐԳ

ՄԱՀՈՒԲԻ Գ Ե Վ Ո Ր Գ (ԳԵՎՈՐԳ ՄԱՆՈՒԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ), գուսան:

Ծնվել է 1857 թվականին Ապարանի շրջանի Երնջատափ գյուղում: Տառաճանաչություն սովորել է Ենոք Խաչատրյանի մոտ:

1871-1882 թվականներին աշխատել է ունևոր գյուղացիների մոտ, կատարել տարբեր աշխատանքներ:

Քսանհինգամյա երիտասարդը մանկությունից տարվել է ժողովրդական երգերով, գյուղի հարսանիքների ու քեֆերի սրահներում երգել է, հեքիաթներ ու առակներ պատմել:

Նրա կյանքում ճակատագրական է եղել 1882 թվականը: Երնջատափ է եկել Սուրմալու գավառի Կողբ գյուղացի, ժամանակին հռչակ վայելող աշուղ Մահջաբին իր խմբով: Ծանոթանալով Գևորգի ձայնային տվյալներին, աշուղական ակնհայտ կարողություններին, երգեր հորինելու ձիրքին՝ ընդգրկել է նրան իր խմբի մեջ և տարել իր հետ: Բավական շրջագայելուց հետո նա իր խմբով կրկին եկել է Երնջատափ, որտեղ գուսանական աշխարհում ընդունված հրապարակային բնությունձիսկատարությունից հետո, «ապտակել» է Գևորգին և նրան շնորհել Սահուբի գուսանական պատվանունը, որը արաբերեն բան է և նշանակում է ուշիմ:

Բավական փորձ ձեռք բերած գուսանը 1890-ական թվականների կեսերին շրջագայության է մեկնել Արևմտյան Հայաստան, այցելել Մշո Սուրբ Կարապետ վանքը, որ աշուղների ավանդական ուխտատեղի է եղել իր ժամանակին: Արևմտյան Հայաստանում շրջագայելիս առաջին անգամ հանդիպել և շփվել է մեծատաղանդ գուսան Ջիվանու հետ: Շրջագայության ընթացքում երեք անգամ վեճի է բռնվել նշանավոր աշուղների հետ և երեքին էլ հաղթել: Ամենից ուշագրավ մրցույթը գրանցվել է Գյումրիի սրճարաններից մեկում, որի աշտակալ երգիչը գուսան Ջիվանին էր իր խմբով: Մահուբի Գևորգը մրցել է ճանաչված գուսան Ֆիզայիի հետ: Ֆիզային ինքն է մրցույթի հրավիրել Մահուբի Գևորգին, ինքն է սկսել մրցույթը, սակայն չի կարողացել պատասխանել Մահուբի Գևորգի առաջարկած հանելուկին: Ջիվանին նրան պարտված է ճանաչել և ստացված ամբողջ նվերները հանձնել է Մահուբի Գևորգին ու ճանապարհել Կարս:

Արևմտյան Հայաստանում շրջագայելուց հետո 1904 թվականին վերադարձել է Ապարան և հայրենի Երնջատափ գյուղում նվիրվել սիրած գործին:

Մահացել է 1935 թվականին և թաղվել Երնջատափ գյուղի գերեզմանոցում:

Կենդանության օրոք, 1912 թվականին, հրատարակել է «Երգարան» գրքույկը: Բանասիրական գիտությունների թեկնածու, ապարանցի Աղասի Մահակյանը չորս տասնամյակ հավաքել, հնարավորինս ամբողջացրել և հրատարակել է Մահուբի Գևորգի «Զուքակ» (1957թ.), «Աշուղի աշխարհը» (1991թ.) ժողովածուները, «Մահուբի Գևորգ» ուսումնասիրությունը:

Հայ գուսանական երգարվեստում Մահուբի Գևորգը խոհա-փիլիսոփայական ստեղծագործող է: Նրա ստեղծած շուրջ 1000 ստեղծագործություններից պահպանվել ու գրառվել է մոտ 100-ը:

ԳՆԴԱՊԵՏՆԵՐ

Զինվորական, ոստիկանական, արդարադատության

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՀԵՆՈՒԼ ՀՐԱՆՏԻ, զինծառայող, գնդապետ (1995 թ.):

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԳՈՌ ԲԵՆԻԱՄԻՆԻ, ոստիկանության գնդապետ (1998 թ.):

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ ՍԵԳՐԱԿԻ, զինծառայող, գնդապետ (1970 թ.):

ԱՎԴԱԼՅԱՆ ՄԱՅԻՍ ԵՂԻՇԻ, ոստիկանության գնդապետ (1981 թ.), ՀԽՍՀ ներքին գործերի համակարգի վաստակավոր իրավաբան (1978 թ.):

ԱՐՇԱԿՅԱՆ ԱՐՇԱԿ, գնդապետ:

ԱՍԱՏՐՅԱՆ ՀԱՅԿ ՂԵՎՈՆԴԻ, 1-ին կարգի նախագահ (գնդապետ, 2000 թ.):

ԲԱԲԽԵՂՅԱՆ ՍԱՐԳԻՍ ՎԱՂԻՆԱԿԻ, ՀԽՍՀ արդարադատության 1-ին դասի խորհրդական:

ԲՐՈՅԱՆ ԹԵՄՈՒՐ ԼԵՇՈՅԻ, ՀԽՍՀ արդարադատության 1-ին դասի խորհրդական (գնդապետ), ՀԽՍՀ վաստակավոր իրավաբան (1972 թ.), ԽՍՀՄ դատախազության վաստակավոր աշխատող (1982 թ.):

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՌԱՉՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ, պահեստի գնդապետ (1981 թ.):

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈԲԵՐՏ ՀԱՅԿԱՐԱՄԻ, զինծառայող, գնդապետ (1994 թ.): Հետմահու պարգևատրվել է ՀՀ Մարտական խաչ 1-ին աստիճանի շքանշանով (1996 թ.):

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՇՈՏ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ, զինծառայող, գնդապետ:

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌՈՒԲԻԿ ԱՐՇԱԿԻ, ոստիկանության գնդապետ (2002 թ.):

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԽԱՉԻԿ ՄՈՎՍԵՍԻ, ոստիկանության գնդապետ:

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ ԽԱՉԻԿԻ, ոստիկանության գնդապետ:

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՍԻՄՈՆ ԵԳՈՐԻ, ոստիկանության գնդապետ, ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության միլիցիայի վաստակավոր աշխատող, Հայրենական մեծ պատերազմի մասնակից:

ԵՐԵՄՅԱՆ ԳԵՎՈՐԳ ԽԱՉԻԿԻ, արդարադատության 1-ին դասի խորհրդական (գնդապետ):

ԶԱՔԱՐՅԱՆ ՎԱՆԻԿ ՕՀԱՆԻ, գնդապետ (2002 թ.):

ԹԱԳԵՎՈՍՅԱՆ ՋԵԼԻՄ ԱՏՈՄԻ, ՀՀ արդարադատության 1-ին դասի խորհրդական (գնդապետ), պրոֆեսոր:

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱԳԻԿ ԽԱՉԻԿԻ, ոստիկանության գնդապետ:

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ, զինծառայող, գնդապետ (2000 թ.):

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ ԽԱՉԻԿԻ, ազատամարտիկ, ՀՀ բանակի պահեստի մայոր, կազակական զորքերի գնդապետ (1999 թ.):

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՉԻՋ ՍԱՄՍՈՆԻ, ԽՍՀՄ ԶՈՒ գնդապետ (1942 թ.):

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍԻ, ոստիկանության գնդապետ (1991թ.)

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԵՐԳԵՅ ԴԱՎԻԹԻ, ոստիկանության գնդապետ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ, գնդապետ:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԽԱՉԻԿ ՄԿՐՏԻՉԻ, ոստիկանության գնդապետ (1970 թ.):

ՂԱՐԻԲՅԱՆ ՄԱՐԱՏ ՍԻՄՈՆԻ, ՀՀ բանակի գնդապետ:

ՄԱՆՎԵԼՅԱՆ ՀՐԱՆՏ ԶԱՔԱՐԻ, զինծառայող, գնդապետ:

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ ԱՐԱՄԱՅԻՍԻ, ոստիկանության գնդապետ (1995 թ.):

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՐԻՇԱ ՌԱՖԻԿԻ, ՀՀ արդարադատության 1-ին դասի խորհրդական (գնդապետ):

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՏԻԳՐԱՆ, զինծառայող, գնդապետ (2001 թ.):

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԼՅՈՎԱ ԼՅՈՒԴՎԻԳԻ, ոստիկանության գնդապետ (1999 թ.):

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԼԵՈՆԻԴ ՆԵՐՍԵՍԻ, պետական-կուսակցական գործիչ, Հայրենական մեծ պատերազմի մասնակից, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր (1967-1979 թվականներին), ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր (1979-1989 թվականներին), պահեստի գնդապետ (1978 թ.):

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՌԱՉՄԻԿ ՎԱՂԱՐՇԱԿԻ, ՀՀ բանակի գնդապետ (1998թ.), Ապարանի քաղաքապետ:

ՍԱՐԳՍՅԱՆ ՄՆԱՑԱԿԱՆ ՊԱՊԻԿԻ, ՀՀ արդարադատության 1-ին դասի խորհրդական (գնդապետ, 2000 թ.), իրավաբանական գիտությունների թեկնածու, Բնության և հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիայի անդամ (2002 թ.):

ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ ՔԵՐՈԲԻ, իրավաբան, ՀՀ արդարադատության 1-ին դասի խորհրդական (գնդապետ):

ՕՀԱՆՅԱՆ ՄԱՐԳԱՐ ՄՆԱՑԱԿԱՆԻ, ոստիկանության գնդապետ:

ԱԿԱԴԵՄԻԿՈՍՆԵՐ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՖԵԼԻՔՍ ԱԼԲԵՐՏԻ, տեխնիկական գիտությունների դոկտոր, ակադեմիկոս:

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ ԵՐՎԱՆԴԻ, մեխանիկ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր (1978 թ.), պրոֆեսոր (1983 թ.), ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս (1994 թ.):

ԳԱԼՍՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ ՄԵՍՐՈՊԻ [ՀԱՅՐՈ ՄԻԽԱՅԼՈՎԻՉ], բժիշկ-ուռուցքաբան, բժշկական գիտությունների դոկտոր (1975 թ.), պրոֆեսոր (1990 թ.), ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից-անդամ (2000 թ.), ՀՀ բժշկական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս (1997 թ.), Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս (1998 թ.), Ռուսաստանի բժշկատեխնիկական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս (2001 թ.), Գիտությունների ակադեմիաների միջազգային ակադեմիական խորհրդի պատվավոր անդամ (1998 թ.), Բնության և հասարակական գիտությունների միջազգային ակադեմիայի պատվավոր անդամ (1999 թ.), ԱՄՆ-ի միջազգային գիտական հետազոտությունների խորհրդի անդամ (1999 թ.):

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԵՂԱՄ ԳՐԻԳՈՐԻ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից-անդամ:

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԻՀՐԴԱՏ ՀՄԱՅԱԿԻ, Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս:

ԹՈՐՈՍՅԱՆ ՆՎԵՐ ՍՈՒՐԵՆԻ, գործարար, գեներալ-մայոր (1999 թ., շնորհվել է Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքի ազգային անվտանգության հիմնախնդիրների միջազգային ակադեմիան), Աշխարհի ժողովուրդների հոգևոր միասնության միջազգային ակադեմիայի ակադեմիկոս (2001 թ.):

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ, կենսաբանական գիտությունների թեկնածու, Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս (1998թ.):

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ ԱՐՏԱՇԵՍԻ, մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի բնագավառի գիտական, մանկավարժական գիտությունների դոկտոր (1986 թ.), պրոֆեսոր (1988 թ.), ՀՀ մանկավարժահոգեբանական (1997 թ.) և Ռուսաստանի Դաշնության մանկավարժական կրթության միջազգային գիտական (1998թ.) ակադեմիաների ակադեմիկոս:

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՀՈՎԻԿ ՀԱՅԿԱԿԻ, մաթեմատիկական գիտությունների դոկտոր (1994 թ.), Ֆրանսիայի մաթեմատիկական համալսարանի ակադեմիկոս (1996 թ.):

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԴՄԻՏՐԻ ՌՈԲԵՐՏԻ, ՀՀ արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար (24.07.1997 թ.), տեխնիկական գիտությունների թեկնածու (10.11.1989 թ.), Բնապահպանության և կենսագործունեության անվտանգության միջազգային ակադեմիայի թղթակից-անդամ (20.04.1995 թ.), գիտության և տեխնիկայի գծով Համլկեմ մրցանակի դափնեկիր (1987 թ.):

ՄՀՈՅԱՆ ԳԵՈՐԳԻ ԽՈՒԴՈՅԻ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ բժշկական գիտությունների ակադեմիայի անդամ:

ՄՀՈՅԱՆ ՇԱՔՐՈ ԽՈՒԴՈՅԻ, պատմաբան, լրագրող, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս:

ՍԱՐԳՍՅԱՆ ՄՆԱՑԱԿԱՆ ՊԱՊԻԿԻ, իրավաբանական գիտությունների թեկնածու, ՀՀ արդարադատության 1-ին դասի խորհրդական (գնդապետ, 2000 թ.), Բնության և հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիայի անդամ (2002 թ.):

ՆԻԳ_ԱՊԱՐԱՆԻ ՊԱՏՄԱՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Ապարան

ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ (II-I հազարամյակ մ.թ. ա.): Գտնվում է հնագույն բնակավայրի կենտրոնական մասում, ներկայիս Ապարան-Սպիտակ մայրուղու ձախ կողմում՝ «Վերածնունդ» հուշարձանի շրջապատում: Այն ընդգրկում է մոտ 0,5կմ լայնությամբ և 1,5կմ երկարությամբ տարածություն:

Արտաքինից դամբարանները լավ տեսանելի են: Դրանք հիմնականում կրոմլեխներ են, վերգետնյա մասում ունեն քարով շարված կլոր շրջանակներ, որոնց տրամագիծը հասնում է 3-15մ:

1957թ. հունիսին բացվել է խեցեղենի մի խիստ հետաքրքրական հավաքածու: Հայտնաբերվել են սև փայլեցված և գունավոր նկարազարդ ամաններ: Սև փայլեցված խեցեղենը ներկայացված է երեք ամբողջական ամաններով և ութ կտորներով: Դրանցից մեկը՝ բաց կճուճը ունի դուրս ճկված շուրթեր /տրամագիծը 25սմ, բարձրությունը՝ 14սմ/: Շուրթի տակ քաշված է 4 զուգահեռ, ալիքանման զարդագծեր: Կենտրոնական մասի ուռուցիկ հատվածը գոտևորում է 1սմ լայնությամբ ակոսը:
Խեցեղենի մյուս խումբը կազմում են նկարազարդ ամանները: Դրանց մեջ է մտնում կարմիր կավից պատրաստված թասը: Շուրթի տակ քաշված են զիգզագաձև գիծ, որից դեպի ներքև են իջնում պարույրներ: Ուսումնասիրողները նշում են, որ այդպիսի հարուստ նկարազարդումներ ունեցող անոթ մինչ այդ չի գտնվել: Գիտնականները, համեմատելով Ապարանի և առաջավոր Ասիայի ու Հայաստանի տարբեր հնավայրերից հայտնաբերված կավե ամանները, գտել են, որ Ապարանում հայտնաբերված ամանները ժամանակագրական առումով կապված են Թազաքենդի ամանների հետ (մ.թ.ա. 2-րդ դար):
ԲԵՐԴ: Գտնվում է Դամբարանադաշտի ձախակողմյան անառի բլրի վրա: Երկու կողմից երիզվում է Քասաղի անդնդախոր ձորով: Հյուսիսային կողմում, որտեղ մի բարակ տափարակով միանում են բերդի գլխամասային հարթությունը և դիմացի լեռնազանգվածը, կառուցված են հզոր պարիսպներ:Այդ կողմում պատերը շարված են տեղական մեծածավալ, կոպտատաշ երկշարք որձաքարով : Պատերի մեջ լցված են անմշակ փոքր քարեր և հող (հաստությունը 6-7 մ է):
Բերդը կառուցողական արվեստով հայկական վաղ շրջանի՝ մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջի կամ 1-ին հազարամյակի սկզբի կառույց է: Հետագայում բլրի շուրջն աճել է բավական ընդարձակ քաղաք: Շինությունների հիմքեր են պահպանվում թե՛ Քասաղի ձորահայաց թեք լանջին, թե՛ հարավային կողմի հարթ տարածությունում: Բերդը նույնպես ընդարձակվել է: Այն իր մեջ է առել այժմյան ավանի ամբողջ արևմտյան մասը՝ Բաղալի աղբյուր-ավազահանք-հին բերդ եռանկյունին: Մեր թվագրության առաջին դարում արդեն այստեղ գոյություն ուներ մեծ քաղաք: Ահա այդ քաղաքն է մ.թ. առաջին դարում Տրդատ Առաջինը պարգևել Գնթունի տոհմին: Ապարանի հունարեն արձանագրության համաձայն՝ քաղաքը կոչվել է Արտա...ա: Արձանագրություն կրող քարը նախապես գտնվել է միջնաբերդում, հետագայում Ապարան գյուղի բնակիչները իջեցրել են ներքև:
1979 թ. բերդատարածքի արևելյան եզրին՝ ավազահանքի մոտ, փոքրիկ փլուզումից հետո գտնվել է XII-XIV դարերի շուրջ հարյուր պղնձադրամ, որոնց մի մասը պատկանել է Թամար թագուհուն: Նոր գտածոն թույլ է տալիս ասելու, որ միջնադարում նույնպես բերդի տարածքում զարգացում է ապրել կյանքը:
ԱՊԱՐԱՆԻ ՀՈՒՆԱՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ: 1908 թ. Բաշ-Ապարան գյուղում հայտնաբերել է Գարեգին Հովսեփյանցը: Այժմ պահվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում: Քարի՝ արձանագրությունը կրող մասը եզրերից կոտրված, հողմահարված է, և որոշ տառեր արդեն չեն երևում:

ՔԱՍԱՂԻ«ՍՈՒՐԲ ԽԱՉ » ԲԱԶԻԼԻԿ ԵԿԵՂԵՑԻՆ: Ապարան ավանի զարդն է: Այն հայկական ճարտարապետության հանգուցային կառույցներից և գլուխգործոցներից մեկն է: Եկեղեցին ունի ուղղանկյուն հատագիծ, կառուցված է արևելք- արևմուտք առանցքով, ներսից՝ պայտաձև, արտաքինից՝ հնգանիստ բեմի աբսիդով: Կառույցը վեցամույթ եռանավ բազիլիկայի հորինվածքով կերտված ճարտարապետական հուշարձան է: Աղոթասրահի չափերն են 9,9x19,8մ: Աղոթասրահի և աբսիդի բոլոր պատերը լավ պահպանվել են ու ամբողջական վիճակում են: Շինությունն ունի 4 մուտք, որոնցից երեքը՝ շքամուտքով, իսկ չորրորդը բացվում է դեպի հյուսիսային կից կառույցը: Պատուհանները գտնվում են աբսիդի, հարավային և արևմտյան ճակատների վրա: Հետաքրքիր լուծում ունեն հարավային ճակատի պատուհանները. դրանք երեքն են և տեղադրված են տարբեր բարձրությամբ: Բավական հետաքրքիր ու շքեղ են հարդարված շքամուտքերի բարավորները: Արևմտյան մուտքի բարավորի վրա քանդակված է խաղողի ողկույզներով շրջանակ, որի ներսում պատկերված է հավասարաթև խաչ, իսկ վերջինիս երկու կողմերում՝ մեկական եղջերու: Յուրաքանչյուր եղջերուի հետևում պատկերված է փոքրիկ արմավենի, մնացած ազատ տեղը լրացված է ոլորապտույտ որթով ու ողկույզներով: Նույնպիսի պատկեր ունի հարավային ճակատի աջակողմյան շքամուտքի բարավորը: Հյուսիսային պատի վրա եղած փոքրիկ արձանագրությունից իմացվում է, որ 1877 թ. եկեղեցու բեմը նորոգվել է, կտուրը՝ փայտով ծածկվել: Սակայն հետագայում կրկին քանդվել է: 1984 թ. ճարտարապետ Ալեքսանդր Սահինյանի ղեկավարությամբ եկեղեցու շրջապատը մաքրվեց, կատարվեցին մասնակի պեղումներ, բացվեցին հյուսիսային կից կառույցը և նրանից հյուսիս ընկած միանավ բազիլիկ եկեղեցին: Բազմակողմանի ուսումնասիրությունները հիմնավորեցին այն տեսակետը, որ Քասաղի բազիլիկը «...պետք է ստեղծված լինի Հայաստանում քրիստոնեական կրոնը պետական հռչակելու սկզբնական շրջանում, այսինքն՝ ոչ ուշ, քան 4-րդ դարի սկզբներին»: Ա. Սահինյանը միաժամանակ կրկնեց այն միտքը, որ դեռևս դարասկզբին հայտնել էր բազմավաստակ Թ. Թորամանյանը, և որի համաձայն բազիլիկը «...թերևս եղած լինի եկեղեցու փոխակերպված հեթանոսական տաճար»:

Պեղումների ժամանակ Սուրբ Խաչից գտնվել էր Սելևկյան թագավոր Անտիոքոս 7-րդ Էվերգետոսի /մ.թ.ա. 198-129/ ոսկե տետրադրախմա:

Մեծ արժեք են ներկայացնում եկեղեցու շրջապատում գտնվող **խոյակների ու կոթողների պատվանդանների** վրա դրվագված քանդակները: Դրվագված մի խոյակ այժմ ցուցադրվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում: 50սմ բարձրությամբ խոյակի երեք կողմերին քանդակված են դափնու ճյուղ, ուռուցիկ շրջանակի մեջ հավասարաթև խաչ, խոզի կերպարանք ընդունած Տրդատ Գ թագավորը: Եկեղեցու շրջապատում մնում են հնագույն խաչարձանների, քառակող սյունաքարերի բեկորներ:

«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ»: Բազիլիկ եկեղեցուց 200մ հյուսիս - արևելք ընկած հատվածում 19-րդ դարի վերջին կառուցվել է **միանավ եկեղեցի՝«Սուրբ Աստվածածին»**: Շինության համար օգտագործվել է տեղական մշակված որձաքար: Շինաքարերից մի քանիսը կրում են հնագույն զարդաքանդակներ, մուտքի դռան վերնամասում դրված է քառակող սյունաքար:



«ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» ***ՀՈՒՇԱՐՁԱՆ-ԿՈԹՈՂ:***

Կառուցված է 1979թ. Ապարանի հյուսիսարևմտյան մասում՝ տաղանդավոր ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանի նախագծով: Եռաթեմա հորինվածքով հրաշակերտ կոթող է՝ նվիրված 1915թ. Մեծ եղեռնի զոհերի,1918թ. Բաշ-Ապարանի հերոսամարտի քաջամարտիկների և Հայրենական մեծ պատերազմում զոհված

ապարանցի մարտիկների հիշատակին:
«ԳՈԳՈԱՆ ԱՂԲՅՈՒՐ»: Ապարանի հարավ-արևմուտքում կառուցված է մի գեղեցիկ հուշաղբյուր, որը նվիրված է Հայրենական մեծ պատերազմի զոհերի հիշատակին (1946թ., ճարտարապետ՝ Ռաֆայել Իսրայելյան):

ԱՍՏՎԱԾԸՆԿԱԼ

ԱՍՏՎԱԾԸՆԿԱԼ: Երնջատափ գյուղից 1կմ արևմուտք՝ Քասաղի կիրճի աջակողմյան բարձր բլրի վրա, վեհորեն կանգնած է Աստվածընկալի վանական համալիրը: Ձեռակերտ շինությունները գրեթե ծուլվել են բնությանը, հարազատ ու համահունչ են նրան: Բանաստեղծական է համալիրի դիրքը: Աջ կողմում գահավեժ լեռնալանջեր են, ձախում՝ ձորակներով կտրտված, մինչև ձորը իջնող լեռնալանջեր, ներքևում՝ ձորը, որտեղով հոսում է Քասաղ գետը:
Համալիրն իր մեջ առել է 5-րդ դարում կառուցված բազիլիկ տիպի եկեղեցին և միջնադարյան վեհաշուք եկեղեցին ու գավիթը:
5-ՐԴ ԴԱՐԻ ԵԿԵՂԵՑԻ: Համալիրի հարավային կողմի միանավ եկեղեցին կառուցված է տեղական գորշավուն տուֆի սրբատաշ քարով: Եկեղեցու որմնասյուները, դրանց խոյակներն ու խարիսխները նման են Տեկորի, Զովունի սորբ Վարդան և Թուխ Մանուկ եկեղեցիների համանման մանրամասներին:
Եկեղեցին ունի երկու դուռ՝ հյուսիսային և հարավային կողմերից: Հարավային կողմից եկեղեցուն կցված են պայտաձև աբսիդով մատուռ ու մի փոքր սենյակ: Մատուռը խորանակից է բուն եկեղեցուն, իսկ սենյակը հարավարևմտյան անկյունում ցածր դռնով հաղորդակցվում է եկեղեցու դահլիճին:
ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻ: Կառուցվել է հնագույն բազիլիկ եկեղեցու հյուսիսային կողմում և իր կառուցվածքի մեջ է առել հին եկեղեցու հյուսիսային պատը: Կաթողիկեն գմբեթավոր դահլիճ է՝ մեկ զույգ որմնամույթերով, աբսիդի երկու կողմերում կառուցված կրկնահարկ ավանդատներով:
Եկեղեցին գրեթե ամբողջական պահպանվել է, քանդված է միայն գմբեթը: Կաթողիկե եկեղեցու կառուցումն ավարտելուց հետո, արևմուտքից նրան կից կառուցվել է **գավիթը**: Այն շատ ավելի ընդարձակ է, քառասյուն, գմբեթը զարդարված է ստալակտիտներով և իր տիպի մեջ լավագույններից է: Գավթի ներքին տեսքը զուսպ է: Սյուների խոյակները խաչազարդ են: Արևելյան կողմի երկու որմնասյուների վրա քանդակված են դուրս ցցված գեղաքանդակ խաչեր:
Գավիթը կառուցել է Յոհաննես ճարտարապետը: Նրա ստորագրությունը «ՁՅոհանէս յաղագս յիշեցեք», փորագրված է գավթի հարավարևելյան սյան վրա:
ՁՈՒՅԳ ԽԱՉՔԱՐ: Կանգնեցված են վանական համալիրի հարավային կողմում՝ երկաստիճան պատվանդանի վրա: Խաչքարերի բարձրությունը 190 սմ է, յուրաքանչյուրի լայնությունը՝ 90 սմ: Խաչքարերը պատրաստել է նույն քարագործ վարպետը: Չնայած դրան՝ խաչքարի վրա ոչ մի մանրամասն չի կրկնվել: Աջակողմյան խաչքարի ներքևի գոտու վրա փորագրված է. «Քրիստո՛ս, յիշէա քաղցրութեամբ զՏալիթ»:
ԲԵՐԴ: Գտնվում է Աստվածընկալի վանական համալիրի դիմաց՝ Քասաղ գետի ձախ ափի՝ երեք կողմից անմատչելի եռանկյունաձև հարթության վրա: Ճակատային կողմից, որտեղ ելուստը միացած է դիմացի հարթության հետ, կառուցված է 84 մ երկարությամբ հզոր պարիսպ, որի հիմքի լայնությունը 2,3- 3 մ է: Եռանկյունաձև տարածության հյուսիսային կողմում կառուցված է ամրոց, որի կողմերի երկարությունն է համապատասխանաբար 40 և 42 մ, իսկ լայնությունները՝ 32 և 35 մ: Ամրոցի չորս անկյուններում կառուցված են կլոր աշտարակներ: Պարիսպների հաստությունը 1-1,5 մ է: Երկշարք պատերի մեջ լցված են քարեր և հող:
ԱՐԱՅԻ: Գյուղը գտնվում է Նիգ-Ապարանի հարավային կողմում՝ Արագած սարի ստորոտին, Ապարան- Երևան մայրուղու աջ կողմում:

ՔԱՐԱՎԱՆԱՏՈՒՆ: Արայի գյուղից 1 կմ հարավ՝ Արայի և Նիգատուն գյուղերի միջնամասում, ոչ բարձր բլրի վրա պահպանվել են Քարավանատան ավերակները: Այն կառուցված է Արարատյան դաշտ- Նիգ- Վրաստան պատմական ճանապարհի վրա: Այս երբեմնի ընդարձակ շինությունն անբողջապես ավերված է, կանգուն է միայն արևելյան պատի կրային մասը:
Թ. Թորամանյանը գրում է. «Այս ավերակ գյուղի մեջ կա մի մեծ իջևանատուն՝ քարաշեն, որուն տանիքը փլված է: Պատերը կանգուն են, և դուռը հյուսիսային կողմից է, որուն վրա հայերեն արձանագրություն եղած է, բայց քանդված լինելով՝ մնացել է միայն 1213 (ՈԿԲ)թվականը»: 1213 թվականը հուշում է, որ Քարավանատունը կառուցվել է Վաչուտյան իշխանների օրոք և, իհարկե, նրանց հովանավորությամբ:

ԱՓՆԱԳՅՈՒՂ

Գտնվում է Նիգ-Ապարանի հարավամտյան կողմում՝ Ապարան- Երևան ավտոմայրուղու ձախ կողմում: Գյուղի Ափնա անունը հիշատակվում է XIII դարից: XIII դարի կեսերին Սաղմոսավանքի գրատան ներսի պատին փորագրված արձանագրության համաձայն՝ ափնագյուղացի Սասնե, Վաչե, Գրիգոր եղբայրները վանքին հող են նվիրել: Ըստ Սահակ գրչի 1644թ. հիշատակարանում ևս գյուղը Ափնա անունով է հիշվում:
Գյուղի արևելյան կողմում՝ ձորի եզրին, իրարից մոտ 200 մ հեռավորությամբ պահպանվել են IV_V դարերի երկու ոչ մեծ չափի միանավ **բազիլիկ եկեղեցիներ**, որոնց պատերի վրա փորագրված են հավասարաթև խաչեր, վաղ միջնադարյան քանդականախշեր, համանման Քասաղի բազիլիկի, Զովունիի, Աստվածընկալի նույն ժամանակշրջանի կառույցների համապատասխան մանրամասներ: Հարավային եկեղեցու պատի շարաքարերից մեկի վրա կա եղնիկի պատկերաքանդակ: Այս մանրամասնը ենթադրել է տալիս, որ եղնիկը եղել է Գնթունիների տոհմական նշանը և քանդակվել է նրանց տիրույթում կառուցված շինությունների վրա:

ԵՐՆՋԱՏԱՓ

Գյուղը գտնվում է Թեղենիս լեռան հարավարևմտյան լանջին:
Երնջատափ անունն առաջին անգամ հիշատակվում է 1644 թ. Սահակ գրչի ցուցակում: Սակայն գյուղն ավելի հին է:
XIX դարի վերջին գյուղի կենտրոնում կառուցվել է **եռանավ բազիլիկ հորինվածքով եկեղեցի**: Շինության համար օգտագործվել է տեղական սև տուֆ: Պատերի շարվածքում կան հնագույն շինության բեկորներ: Աբսիդի երկու կողքերին կան ուղղանկյուն ավանդատներ: Ընդարձակ դահլիճը երկու շարք փայտե սյուներով (յուրաքանչյուր շարքում՝ 3- ական) բաժանվում է երեք նավի:
ՋԱՆԳԻԼԻ ԲՆԱԿԱՎԱՅՐ: Արայի լեռան հարավային լանջին՝ Քասաղի կիրճի ձախակողմյան եզրին, Երնջատափ գյուղից 2,5 կմ հարավ արևմուտք պահպանվել են մի հին բնակավայրի ավերակներ: Ձորալանջին՝ ժայռի տակ, սառնորակ աղբյուրի աջ կողմում կա փոքրիկ եկեղեցի: Կանգուն է միայն աբսիդի մասը: Երեսպատման համար այստեղ օգտագործվել է կարմիր գույնի սրբատաշ տուֆ:
Արայի լեռան ստորոտի այս նախկին բնակավայրում 1827թ. հունիսի 1-ից սեպտեմբերի 6-ը եղել է գեներալ Ա. Ի. Կրասովսկու բանակի ճամբարը: Ձեկուցագրերում և աղբյուրներում ճամբարատեղը անվանվում է Ջանգիլի:

ԶՈՎՈՒՆԻ

Գյուղը գտնվում էր Ապարանի կիրճի սկզբնամասում՝ Քասաղ գետի ձախ ափին, ներկայիս Ապարանի ջրամբարի ամբարտակից 1,5 կմ հյուսիս: 1967թ. գյուղի տարածքը ծածկվել է Ապարանի ջրամբարի ջրերով: Զովունին հարուստ է

պատմաճարտարապետական հուշարձաններով: IV- V դարերում այստեղ կառուցվել է երեք եկեղեցի, վաղ միջնադարյան և միջնադարյան գերեզմանատներում կանգնեցված են քանդակազարդ սյուներ, խաչքարեր, գեղազարդ տապանաքարեր:

ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ .Տարածվում է Քասաղի կիրճի թեք ստորոտին և գյուղին զուգահեռ ձորակի ափին: Պահպանվել են մի քանի կրոմլեխների արտաքին շարաքարերը:

Դամբարաններում եղած սև կավից պատրաստված ամանները գրեթե ամբողջովին քայքայված են: Սափորներից մեկը կիսով ամրացվել- հավաքվել է: Այն երկար-բարակ վիզ ունի, շուրթերը ճկված են դեպի դուրս: Վզի ներքնամասից մինչև գնդաձև իրանի կեսը իջնում են իրար զուգահեռ ակոսներ, որոնք լցված են սպիտակ մածուկով:

Բավական հետաքրքիր են գտնված զարդերը: Սարդիոնից պատրաստված 5 ուլունգահատիկ ունեն 20-50 դրամների մեծություն և լավ հղկված են: Բրոնզե հերակալը, որը ներքնամասում ուռուցիկ է, վերին մի ոտքին ամրացված է բրոնզե ձողիկ, իսկ մյուս ոտքի ծայրը կեռված է՝ ձողիկը պահելու համար, մինչև օրս աշխատում է: Գտնվել են կավից պատրաստված սպիտակ և կապույտ ուլունգներ, կավե խոշոր բաժանարար ուլունգ, բրոնզե ականջօղի կտոր, երկաթից պատրաստված սանձի մասեր:

Նույնանման զարդեր գտնվել են Աշտարակի շրջանի Շամիրամի դամբարանադաշտից և թվագրվում են մ. թ. ա. VIII-VII դարերում: Ամենայն հավանականությամբ, Զովունիի դամբարանադաշտից գտնված առարկաները ևս նույն ժամանակաշրջանին են պատկանում:

ՊՈՂՈՍ - ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻ: Ուղղանկյուն դահլիճ է (արտաքին չափերն են 9,06 x 14,33 մ), որի երկայնական պատերին կից որմնամույթերը կրել են գմբեթը: Հուշարձանը հայկական ճարտարապետության « գմբեթավոր սրահ» տիպի շինության առաջին օրինակն է և ստացվել է հնագույն բազիլիկ եկեղեցու վերակառուցումից:

Ըստ Ա. Սահինյանի՝ Պողոս- Պետրոս եկեղեցին նախապես եղել է հեթանոսական մեհյան, ապա III դարի վերջին կամ IV դարի սկզբներին « սրբագործվել է» ու վերածվել քրիստոնեական պաշտամունքի աղոթասրահի, և միայն դրանից հետո՝ V դարի վերջին կամ VI դարի սկզբին Գրիգոր Գնթունի իշխանի միջոցներով ու պահանջով վերածվել է գմբեթավոր սրահի: Գրիգոր Գնթունու շինարարական արձանագրությունը փորագրված է ձախակողմյան պատի խորանի կողմից առաջին մույթի վրա. « Ք (րիստո) ս Ա (ստուա)ծ, յիշեա զԳրիգոր Գնթունեաց տեր»: Եկեղեցին ունի երկու մուտք՝ արևմտյան և հարավային ճակատներից:

ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ: Միանավ, պայտաձև աբսիդով եկեղեցի է (IV-V դարեր)՝ կառուցված տեղական տուֆի բավական խոշոր սրբատաշ քարերով: Ունի երկու դուռ՝ հյուսիսային և հարավային պատերին: Եկեղեցու մոտ կատարված պեղումների ընթացքում գտնված կղմինդրները հաստատեցին, որ եկեղեցին ունեցել է թաղածածկ կտուր և ծածկված է եղել կղմինդրով:

1862 թ. Մահտեսի Հակոբն ու իր որդի Սարգիսը նորոգում են Թուխ Մանուկ եկեղեցին: Թափված քարերի փոխարեն շարվածքի համար օգտագործվում են ավելի փոքր քարեր:

ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆ ԵԿԵՂԵՑԻ: Միանավ, պայտաձև աբսիդով կառույց է, որի հարավային պատին կից է կրկնահարկ դամբարանը: Դամբարանի առաջին հարկը, որ փորված է եղել գետնի մեջ, լավ պահպանված է: Այն երեսպատված է տեղական անմշակ գետաքարերով և ունի 2,8 մ խորություն: Դամբարան կարելի է իջնել աստիճաններով, եկեղեցու և դամբարանի մուտքերը գտնվում են միևնույն հրապարակի վրա: Եկեղեցին կառուցված է տեղական կարմրավուն սրբատաշ քարերով: Պահպանվել է միայն եկեղեցու պատերի առաջին շարքը:

Սուրբ Վարդան եկեղեցին հորինվածքով առնչվում է էջմիածնի Հռիփսիմե տաճարի այժմյան կառույցի տակ պահպանված դամբարանի հետ և ամենայն հավանականությամբ V դարի կեսերի գործ է: Ավանդաբար հաղորդվել է, որ Սուրբ Վարդան եկեղեցին կառուցվել է 451 թ. Ավարայրի ճակատամարտում զոհված հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանի հիշատակին, իսկ դամբարանում թաղվել է Նիգ-Ապարանի տեր Տաճատ Գնթունին, որը նույնպես նահատակվել է Ապարանում:

Ապարանի ջրամբարի ստեղծման հետ կապված՝ Հայաստանի կառավարությունը, որոշում ընդունեց, ջրի տակ մնացող Զովունի գյուղի տարածքից տեղափոխել հայկական արվեստի պատմության համար խիստ կարևոր երեք հուշարձան: Թուխ Մանուկը և Սուրբ Վարդանը վերաշարվեցին գյուղի արևելյան՝ Խաչեր կոչվող բարձունքում, իսկ Պողոս- Պետրոս բազիլիկ եկեղեցին մնաց տեղում:

ԽԱՉԱՐՁԱՆ: Պատրաստված է տեղական սև տուֆից: Սալաքարի երեսին փորագրված է կրկնակի թևերով խաչ: Վերևի թևերը վերջնամասում մի փոքր լայնանում են, իսկ ներքևի թևերը վերջնամասում բավական լայն են: Հնավանդ ձևերով խաչարձանը հայկական քանդակագործության լավագույն օրինակներից մեկն է:

ԽԱՉՔԱՐԵՐ: Երկուսն են և ընկած են գյուղի հյուսիսային կողմում՝ ձորաբերանին: Երկուսն էլ փորագրված են տուֆի բավական մեծ, ձվաձև կտորների վրա: Խաչերը հավասարաթև են, անպաճույճ: Քարերի եզրերով անցնում են ալիքաձև քանդակագծեր, որոնք շրջափակում են հավասարաթև խաչերը: Ամենայն հավանականությամբ, այս խաչքարերը պատրաստվել են VI- VII դարերում:

ՔԱՌԱԿՈՂ ՍՅՈՒՆԱՔԱՐԵՐ: Գյուղի տարածքում պահպանվել են երկու քառակող սյունաքարեր կամ մահարձաններ:

Դրանցից մեկը, որ այժմ դրված է Խաչեր կոչվող բարձունքում՝ տեղափոխված հուշարձանների հարևանությամբ, ունի գոգավոր եզրեր և բոլոր եզրերին մինչև վերջ չիջնող երկուական ուղիղ ակոսներ: Պատվանդանը ներքևից վեր նեղացող քառակուսի հիմք ունի, լավ պահպանված է:

Երկրորդ քառակող հուշարձանը գտնվում է Խաչեր կոչվող բարձունքից մոտ 100 մ հարավ-արևմուտք՝ հնագույն գերեզմանոցում: Պատրաստված է նույն սկզբունքով, ինչ և նախորդը, սակայն այստեղ քարի երեսներին ակոսների փոխարեն քանդակված են նուռ և նռնենու ճյուղեր:

ՔԱՆԴԱԿԱԶԱՐԴ ՔԻՎ: Սուրբ Վարդան եկեղեցու մոտ դրված է մի հրաշագեղ քիվ: Քարի ճակատային մասում՝ վերևի ուղիղ գոտու վրա, քանդակված են երկուական ալիքաձև գծեր, որոնք, ներքևից և վերևից իրար փաթաթվելով, առաջացրել են գրեթե կլոր շրջանակներ: Յուրաքանչյուր շրջանակի մեջ պատրաստված է մի փոքրիկ կիսագունդ: Քարի վրա ալիքաձև գծերի առաջացրած ձվաձև տարածքում քանդակված են խաղողի բավականին մեծ ու ընդգծված հատիկներով ողկույզներ և տերևներ: Քիվի երկարությունը 1,3 մ է, բարձրությունը՝ 36 սմ: Դժվար է ասել՝ երեք կառույցներից որին է պատկանել այս քիվը:

ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՏԱՊԱՆԱՔԱՐ: Նախապես դրված է եղել գյուղի հարավարևելյան կողմում գտնվող ժայռերից մեկի մեջ փորված բավական խոր գերեզմանի վրա: Այժմ գտնվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում: Երկթեք տապանաքար-կափարիչի երեսներից մեկին ամենաուշը VII դարի կեսերին փորագրվել է. «Այս է հանգիստ Դաւթի Գրիգուենաց տ(եառ)ն որդո (յ) Վասակա բարէպա (շտի)»:

ՂՈՒՇՉԻ: Գտնվել է Ապարանի ջրամբարի ամբարտակի շրջապատում՝ Զովունի գյուղից 1,5 կմ հարավ: XVI դարի վերջին Ղուշչի գյուղում ապրել ու ստեղծագործել է քարգործ վարպետ Հանեսը (գուցե Հովհաննես): Հանեսի պատրաստած հնագույն տապանաքարը գտնվում է Ղուշչի գյուղի գերեզմանոցում: Նրա վրա փորագրված պատկերը չափազանց հետաքրքիր է. մի զույգ լծկան եզները քաշում են արորը, որի ետևից քայլում է երկու հողագործ: Աշխատանքային թեմայով այս պատկերը հնագույներից է Հայաստանում: Տապանաքարի վրա՝ քանդակից վերև արձանագրված է. «Թվին ՌԽԷ (1598) ես՝ Հանէս, շինէցի սուրբ խաչս բարէխաւս Գրիքորին»:

Հանեսի լավագույն աշխատանքներից մեկն էլ գտնվում է Զովունի գյուղի գերեզմանոցում: Զովունիի տապանաքարի վրա պատկերված է եկեղեցական, որի կրծքին խաչ է կախված, իսկ աջ ձեռքին պահում է վարդապետական գավազան: Եկեղեցականի ձախ ձեռքում գրիչ կա, նույն կողմում քանդակված է գրակալ՝ վրան գիրք: Հանեսի զարդաքանդակները աչքի են ընկնում նրբությամբ, փորագրելու վարպետությամբ: Նրա ձեռագրի կատարելությունը թույլ է տալիս նրան արժանիորեն դասել հայ քարգործ վարպետների շարքին:

ԹԹՈՒՋՈՒՐ

Գտնվում է Ծաղկունյաց լեռնաբազուկներից մեկի ստորոտում՝ համանուն գետակի ափին, Ջորագլուխ գյուղից 1 կմ արևմուտք:
XIX դարի վերջին գյուղի կենտրոնում կառուցվել է թաղակապ եկեղեցի:
Գյուղից 0,5 կմ հարավ՝ անտառի փեշին, թեքության վրա մնում են ինչ-որ շինության ավերակներ: Հավանաբար միանավ եկեղեցի է: Կառուցված է կարմիր տուֆի լավ մշակված քարերով: Արևելյան պատը տեղանքի սողքի հետևանքով թեքվել է: Շինության շրջապատում կան միջնադարյան տապանաքարեր: Տեղում գտնված խեցեղենի կտորները նույնպես միջնադարի կնիքն են կրում:

ԼՈՒՍԱԳՅՈՒՂ

Ծաղկունյաց լեռնաբազուկներից մեկի լանջին՝ Ապարան ավանի դիմաց, 1,5 կմ հեռավորությամբ գտնվում է Լուսագյուղը (Ղարանլուղ):
Գյուղի կենտրոնում՝ թեք տեղանքի վրա, կանգուն է XIX դարի երկրորդ կեսում կառուցված մի եկեղեցի, որը հատակագծի որոշ մանրամասներով տարբերվում է նույն դարում Նիգ-Ապարանում կառուցված նույնատիպ եկեղեցիներից:
Այն եռանավ բազիլիկա է՝ և թեք տանիքով: Դահլիճը (ներսի չափերն են 15,15x 6,32 մ) երկու զույգ քարե սյուներով բաժանվում է երեք նավի, կամարները նստում են սյուների և որմնասյուների վրա, որոնք կից են արևելյան և արևմտյան պատերին: Սյուները գրեթե քառակուսի կտրվածք ունեն (58 x 57 սմ): Մեծ նավի լայնությունը (3,75 մ) զգալի գերազանցում է կողայինների լայնությանը (հյուսիսայինը՝ 0,75մ, հարավայինը՝ 0,68 մ): Աբսիդը պայտաձև է, նրա երկու կողմերում ուղղանկյուն ավանդատներն են, որոնցից հյուսիսայինը՝ ի հաշիվ եկեղեցու պատերի՝ ուղղանկյուն պարագծից հյուսիսային պատի 60 սմ դուրս դրվելու, ավելի մեծ է հարավային ավանդատնից:
Եկեղեցու մուտքը հարավային կողմից է: Մուտքի վերևում՝ խաչի վերին մասում, փորագրված է շինարարական արձանագրությունը՝ «Յիշատակ է սուրբ խաչս Պետրոս Տէր Մկրտչեանին, 1887»:
ՔԱՐԻ ԴԱՐԻ ԲՆԱԿԱՏԵՂԻ: 1969թ. գյուղից 1 կմ հեռավորությամբ և շուրջ 500մ բարձրությամբ լեռան լերկ լանջին հայտնաբերվեց քարի դարի բնակատեղի: Այն հայատնաբերել է հնագետ Ս. Բարխուդարյանը: Այստեղ հողի երեսին թափված են մշակված ու անմշակ օբսիդաքարերի, ուշ շրջանի խեցեղենի կտորներ: Բնակավայրը դեռևս հնագիտորեն լրիվ ուսումնասիրված չէ:
ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ ԵԿԵՂԵՑԻ: Հնադարյան բնակավայրից 100մ հարավ գտնվում է Թուխ Մանուկ խաչաձև եկեղեցին: Կանգուն են մնացել հարավարևելյան և հարավարևմտյան պատերի անկյունային հատվածները: Վերջինս կանգուն է մինչև թմբուկի վերին քիվը: Եկեղեցին կառուցված է ապարանյան սև տուֆի ոչ այնքան մեծ սրբատաշ քարերով, կանոնավոր շարքերով:
Արևմտյան խորանը գմբեթատակ հիմքի անկյուններից հեռացված է թաղածածկ նախախորանով: Որմնախարիսխի վրա բարձրացող չորս խաչաթևերն էլ արտաքինից ուղղանկյուն են: Գմբեթատակ ուղղանկյուն հիմք ունեցող մյուս կառույցներին (Դորբանտավանք, Թալին, Նալբանդ, Ջրառատ) նման այստեղ ևս անկյունային չորս տրոմպները հիմքը չեն բաժանում ութ հավասար մասերի, որի հետևանքով թմբուկի հիմքերն անհավասար են, իսկ գմբեթը հիմքում ոչ թե շրջանաձև է, այլ ձվածիր՝ հյուսիս-հարավ առանցքի նկատմամբ:
Եկեղեցու դեկորատիվ զարդերից պահպանվել են քիվերը. վերնամասում դրանք խոշոր օղակներ են, ներքևում՝ ավելի խոշոր գնդօղակներ: Պահպանված մի քանի քարերի վրա երևում են ալիքաձև զարդեր:
Թ. Թորոմանյանը, եկեղեցու քիվերի զարդանախշերի ձևերից ելնելով, այն համարում է VII դարի գործ:
ՄԽԵԻ ՎԱՆՔ: Լուսագյուղի արևելյան կողմում՝ մոտ կես կմ հեռավորությամբ, անտառափեշին մնում է մեկ ուրիշ կառույցի ավերակ: Գյուղացիները այդ ավերակը կոչում են Մխեի վանք: Կանգուն է արևելյան կողմի պատ- կամրջակը: 1983 թ. այստեղ

հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից կատարված մասնակի պեղումների շնորհիվ բացվել է նաև պատ- կամրջակի երկու կողմերում գտնված խորանատիպ շինությունների հիմքերը: Կառույցը արտաքինից ուղղանկյուն շինություն է: Ներսում բացի արևելյան կողմում գտնվող պատ- կամրջակից և նրան կից շինություններից ուրիշ մանրամասներ չեն բացվել: Պատ-կամրջակի և կից կառույցների եզրաքարերն ու ներքին շարքերի քարերը սրբատաշ տուֆից են, մյուս մասերում, հատկապես արտաքինից, օգտագործվել է անմշակ հրաբխաքար: Մուտքը գտնվել է արևմտյան կողմում, որտեղ պատը մոտ 2 մ բարձրությամբ նույնպես բացվել է: Պատ-կամրջակի ներսի պատերը ծեփված են եղել: Պեղումների ժամանակ բացված հատվածներում կան հնագույն շրջանի (Ք.ա IV_ VI դարեր) կնիքը կրող զարդանախշերով քարեր:

<u>ԱՎԵՐ ԲԵՐԴ:</u> Գյուղից 2 կմ հյուսիս՝ Ձախի ձոր կոչվող տարածության վերջնամասում, ծովի մակերևույթից մոտ 2700 մ բարձրության վրա, Ծաղկունյաց լեռնաբազուկներից մեկի սրածայր գագաթին մնում են բերդի մնացորդներ, որին շրջակա բնակչությունը « Ավեր բերդ» անունն է տվել:

Լեռան կոնաձև գագաթը 3 կողմից դժվարամատչելի ու անառիկ է. համեմատաբար վատ է պաշտպանված արևելյան հատվածը, որը մի փոքր թեքությամբ միանում է ընդհանուր լեռնազանգվածի հետ: Հենց այս մասում էլ կառուցված են բավականին հզոր կրկնակի պարիսպներ: Պարիսպների առաջին շարքից պահպանվել է մոտ 100 մ երկարությամբ մի հատված՝ 1,5 մ բարձրությամբ: Պատի հաստությունը 3-3,5 մ է: Ներսից պարսպին անմիջապես կից երևում են տարբեր չափերի կացարանների ու շինությունների հետքեր: Առաջին պարսպաշարքից 30 մ հեռու՝ լեռան գագաթի շուրջը, ձգվում է երկրորդ շարքը: Այժմ այդ պարսպից պահպանվել է մոտ 70 մ երկարության հատվածը, որոշ մասերում 2-2,5 մ բարձրությամբ: Պատերն ունեն 2-2,5 մ հաստություն: Բերդի կառուցման ժամանակը դժվար է ճշտորեն որոշել: Այն կառուցված է կիկլոպյան ամրոցի սկզբունքով: Պատերի երկու կողմերից շարված են խոշոր ժայռաբեկորներ, իսկ դրանց միջև լցված են ավելի մանր ժայռաքարեր: Բերդի մի քանի հատվածներում առկա են միջնադարյան խեցիների կտորներ, որը հիմք է տալիս ասելու, որ այն եթե անգամ միջնադարից էլ վաղ է կառուցված, ապա այդ ժամանակներում ևս ծառայել է տեղի բնակչության պաշտպանության համար:

<u>ՃԱՆՃԻԿ ԳՅՈՒՂ:</u> Ապարան- Լուսագյուղ ճանապարհի ձախ կողմում՝ Ծաղկունյաց լեռնաբազուկներից մեկի թեքության վրա, կան միջնադարյան բնակավայրի մնացորդներ: Տեղում մնում են գերեզմանոցի մի մասը՝ միջնադարյան տապանաքարերով, տարբեր կառույցների սրբատաշ քարեր և ինչ–որ շինության քիվերի բեկորներ:

Այս բնակավայրը մատենագրության մեջ հիշատակված Ճանճիկ գյուղն է: Դ. Ալիշանն իր «Այրարատ» գրքում, խոսելով Լուսագյուղի մասին, նրան մոտիկ նշում է նաև Ճանճիկ գյուղը. «երեւի ամայի գիւղատեղին Ճանճիկ, զոր իբրեւ Սիմէոն կաթողիկոս ընդ այլ գեօղեան վիճակին»: Սիմեոն Ա Երևանցին կաթողիկոս էր 1763-1780 թթ.:Ճանճիկն իր այդ անունով հիշվում է նաև Սահակ գրչի 1644 թ. հիշատակարանում: Ամենայն հավանականությամբ Ճանճիկն ավերվել է 1800-ական թթ. սկզբին՝ ռուս- պարսկական պատերազմների տարիներին, երբ պարսիկներն ավերեցին, այրեցին Նիգ- Ապարանի գյուղերը, որպեսզի դրանով խանգարեն ռուսների մուտքը Արարատյան դաշտ: 1830-ական թթ. հետո Ճանճիկը չի վերականգնվել ու վերջնականապես ամայացել է:

<u>ՀԱՐԹԱՎԱՆ</u>

Գտնվում է Ապարան ավանից 15 կմ հարավ արևմուտք՝ Ապարան-Երևան ավտոմայրուղու ձախ կողմում: Գյուղի մուտքի մոտ՝ ձախակողմյան բլրի վրա, կառուցված է փոքր, միանավ բազիլիկ եկեղեցի (հատակագծի չափերն են 3,16 x4,23 մ): Կառուցված է սև տուֆի սրբատաշ քարերով: Կտուրը երկթեք է, քարածածկ: Արևելյան կողմում փոքրիկ խորանն է, որի կենտրոնական մասում բավական նեղ բացվածքով պատուհան կա: Պատուհանի վրա հետաքրքիր պսակ է քանդակված: Եկեղեցին կիսավեր վիճակում է:

Միջնադարյան այս գողտրիկ հուշարձանը գրեթե նույն չափերն ունի, ինչ Սաղմոսավանքի միանավ փոքր բազիլիկը և ամենայն հավանականությամբ կառուցվել է Վաչուտյան Քուրդ Ա իշխանի օրոք, XIII դարի առաջին կեսում:
XIX դարի կեսերին գյուղի կենտրոնում կառուցվել է եռանավ բազիլիկ եկեղեցի: կառույցի համար օգտագործվում է տեղական սև տուֆ: Աբսիդի երկու կողքերին կան ավանդատներ: Բավականին մեծ դահլիճը երկու շարք փայտե սյուներով բաժանվում է երեք նավի:

ՁՈՐԱԳԼՈՒԽ

Ձորագլուխը (Գյուլափլու) գտնվում է Ծաղկունյաց երկու զուգահեռ լեռնաբազուկների ստորոտին և փակում է դեպի լեռների խորքը գնացող կիրճի մուտքը:
Գյուղի տարածքը Նիգ- Ապարանի հնագույն բնակավայրերից մեկն է:
Անցած դարի 30- ական թթ. Պարսկաստանի տարբեր շրջաններից այստեղ հաստատված հայերը դարի վերջին գյուղի կենտրոնում կառուցել են եռանավ բազիլիկ հորինվածքով եկեղեցի: Շինության համար օգտագործվել է տեղական սև տուֆ: Խորանի երկու կողմում կան ավանդատներ: Եկեղեցին ըստ մուտքի բարավորի վրա եղած արձանագրության, կոչվել է **Քսանմեկ կետ Սուրբ Խաչ** և կառուցվել է 1897 թ.:
ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐ : Պահպանվել են գյուղից 2 կմ դեպի արևելք ընկած Ծաղկունյաց լեռնալանջի բավական ընդարձակ հարթության վրա: Դամբարաններից գտնվել են բրոնզե առարկաներ՝ հիմնականում կանանցի զարդեր՝ ապարանջաններ, մատանիներ, քորոցներ: Գտածոների մեջ մեծ թիվ են կազմում սև փայլեցված ամաններ՝ մեծ ու փոքր կճուճներ, լայնաբերան թասեր: Ձորագլխի դամբարանադաշտից գտնված խեցեղենը ժամանակագրական կարգով մոտ է Ապարանի դամբարանադաշտից գտնված առարկաներին: Ձորագլխի դամբարանադաշտը ևս պատկանում է մ. թ. ա. II հազարամյակի կեսերին:
ԿԻԿԼՈՊՅԱՆ ԲԵՐԴ: Գյուղի հյուսիսային կողմում՝ մոտ 300 մ բարձրությամբ լեռնաբազուկի վրա, պարզ երևում են Կիկլոպյան բերդի պարսպի հետքերը: Լեռնաբազուկի գագաթը ուղղանկյուն է, և բերդի պարիսպները կրկնում են այդ ձևը: Շարվածքի համար օգտագործվել են խոշոր, անմշակ լեռնային ողորկ քարեր: Պարսպապատերը երկու կողմից շարված են, միջնամասում լցված են ավելի մանր, անմշակ քարեր:Ժամանակին փորված է եղել 6 մ լայնությամբ առու, որը մնում է մինչև այսօր: Այդ կողմում եղել է հզոր քառանկյուն աշտարակ (5x5մ), որի 7-8 շարք բարձրության պատերը դեռևս կանգուն են: Մեկ ուրիշ աշտարակի հիմքը պահպանվել է հարավային կողմում: Դռան բացվածքը եղել է արևմտյան կողմում: Պաշտպանական փոսին զուգահեռ շարված է եղել նեղ պարիսպ, որը չի միացել ընդհանուր պարսպի հետ: Բերդապարսպի երկարությունը մոտ 200 մ է, լայնությունը՝ 45-50 մ: Բերդը իշխել է շրջապատին և փակել է դեպի կիրճի խորքը տանող ճանապարհը: Հավանաբար մ.թ. ա. X-VIII դարերի կառույց է:
ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔ: Գտնվում է գյուղից դեպի արևելք՝ մոտ երեք կմ հեռու, անտառի բարձրադիր, գեղատեսիլ բացատում: Փոքր միանավ եկեղեցի է (դրսի չափերն են 6,6/ 4,69 մ):
Արևելյան կողմում ունի պայտաձև աբսիդ, դուռը արևմտյան ճակատում է: Պատերը շարված են կարմրավուն տուֆի մաքուր տաշված քարերով, պատերի մեջ լցված է կրաշաղախ: Ամենալավ պահպանված հատվածը աբսիդի մասն է: Պատերը հատկապես մուտքի կողմից կիսով քանդված են: Շինության ձևը հուշում է, որ եկեղեցին ունեցել է թաղածածկ կտուր:
ԳԵՂԱՔԱՆԴԱԿ ԽԱՉՔԱՐ: Գտնվում է Կարմիր վանքի մոտ: Թեև խաչքարի ստորին մասը կոտրված է, բայց պահպանված հատվածը լիովին թույլ է տալիս ասելու, որ այն քանդակագործական հոյակապ աշխատանք է: Խաչի վերնամասը գոտևորող ժապավենի վրա փորագրված է. «... ողորմի Ք(իիստո)ս: Եւ Ովասափ կազմողին ամէն»:
Օվասափը ապրել և ստեղծագործել է XII դարի վերջին և XIII սկզբներին:

Ամենայն հավանականությամբ Կարմիր վանք եկեղեցին կառուցել է Օվասափը, ինչպես նաև քանդակել է խաչքար:

ԵՂԻՊԱՏՐՈՒՇ

Մռավյան գյուղը Նիգ-Ապարանի հնագույն բնակավայրերից է, գտնվում է Ծաղկունյաց լեռնաբազուկներից մեկի ստորոտին՝ լեռնային գետակի աջ կողմում: Այստեղ է ծնվել Եսայի Ա Եղիպատրուշեցի կաթողիկոսը (775-788):

ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ: Ընկած է գյուղի արևելյան կողմում՝ ներկայիս գերեզմանատան շրջակայքում: Դամբարանադաշտը ուսումնասիրված չէ: Առաջին գտածոները պատահականորեն հայտնաբերվել են 1952 թ.: Դրանք մասնագետների կարծիքով մ. թ. ա. 1-ին հազարամյակի զարդեր և սափորներ էին:

ԲԱԶԻԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ: Կանգուն է գյուղի հին գերեզմանոցում: Պահպանվել է հյուսիսային պատի և արևելյան կողմի աբսիդի մի հատվածը: Կառուցված է տեղական գորշ քարով: Քիվը ձևավորված է տերևաձև զարդով: Թ. Թորոմանյանը, պսակի ոճից ելնելով, կարծում է, որ եկեղեցին V դարից ուշ չէր կարող կառուցվել:
XIII դարի սկզբին բազիլիկ եկեղեցուց մոտ 100 մ հեռու՝ արևմտյան կողմում, հիմնադրվել է եկեղեցական նոր համալիր, կառուցվել են Կաթողիկե եկեղեցին և գավիթը:

ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻ: Բավական ընդարձակ, դրսից քառակուսի, ներսից խաչաձև, չորս անկյուններում կրկնահարկ ավանդատներով գմբեթավոր կառույց է: Գմբեթի սրածայր վեղարը քանդված է: Եկեղեցու ներսի պատերին եղել են որմնանկարներ, որոնցից մի փոքրիկ հատված պահպանվել է արևմտյան պատին:

Գավիթ: Արևմուտքից եկեղեցուն կից կառուցվել է ընդարձակ գավիթը, որի ծածկը և հարավային պատն ամբողջովին քանդված են, կանգուն են միայն հյուսիսային և արևմտյան շքադռան պատերը: Պահպանված մասերը թույլ են տալիս ասելու, որ այն պատկանում է քառասյուն գավիթների տիպին:
XIII դարի գավիթներից Եղիպատրուշի գավիթը տարբերվում է աչքի ընկնող հավելումով. նրա և Կաթողիկե եկեղեցու միացման մասում՝ գավիթի ծածկի երկու անկյուններում, կրկնահարկ ավանդատների ծածկի վրա, կառուցված են երկու փոքր մատուռներ:
Մատենագրության մեջ եկեղեցական այս համալիրի մասին ոչ մի տեղեկություն չի պահպանվել: XIX դարի սկզբներին Հովհ. Շահխաթունյանցի արտագրած, բայց այժմ կորած արձանագրության համաձայն՝ եկեղեցին կոչվել է Աստվածածին: Ահա այդ արձանագրությունը. «Ես՝ Սոզկ աշտարակեցի ետու զիմ այգիս յԱ(ստուա)ծածնիս և սպասաւորք սորին հաստատեցին ի տարին Ե (5) աւր պատարագել զՔ(րիստո)ս»:
Թ. Թորամանյանի՝ Ա. Քալանթարյանին ուղղված նամակից իմանում ենք, որ գյուղացիները որոշել են պատերից թափված քարերը օգտագործել եկեղեցու սեղանը սալահատակելու համար: Կոմիտեի ուշադրությունը հրավիրելով այդ հանգամանքի վրա, Թ. Թորամանյանը զգուշացնում է, որ դա միանգամայն անթույլատրելի է, քանի որ պատերից թափված քարերի մեջ կարող են լինել նաև արձանագրված քարեր: Թերևս այդ պատճառով էլ անհետացել են ինչպես Սոզկի, այնպես էլ Մխիթարի արձանագրության վերջին հատվածը կրող քարերը: ՀՍՍՀ պատմական հուշարձանների պահպանության ընկերության միջոցներով Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Պատմական հուշարձանների պահպանման և օգտագործման վարչությունը 1976թ. սկսել է միջնադարյան այս համալիրի վերանորոգման-ամրացման աշխատանքները: Կաթողիկեի պատերը ամրացվել են, թափված քարերը վերաշարվել:
Գավթի պատերին արձանագրություններ են թողել Ոտնամուրը, Գրիչը: Եկեղեցու մոտակայքում և ներսում եղած խաչքարերը նվիրված են Վարդան Երեցին(1551), Հեղնարին (1621), Ավագին, Խամիկին, Առաքելին, Դավիթին:

Որմնափակ խաչքար: Գյուղի հին գերեզմանոցում վեհորեն կանգնած են մոտ 3.5 մ բարձրությամբ 2 որմնափակ խաչքարեր: Խաչքարերից յուրաքանչյուրի նախշերը տարբեր են, դրանց փոսիկները լցված են եղել գորշ կարմիր գույնով: Որմնափակ

խաչքարի գլխամասային կապող քարի վրա փորագրված է. «զՄխիթարիչս Աւշականեցի որ ձևայցուց յիշէ»:
«Ձևայցուց» բառը այստեղ գործածվել է նախագծող, ձևող,քանդակողի իմաստով:

ՆԻԳԱՏՈՒՆ

Նիգ-Ապարանի պաշտպանական կառույցներից նշանավոր է նախկին Նիգատուն (նախասովետական շրջանում՝ Դալաչա) գյուղի մոտ գտնվող հզոր բերդը: Այն գտնվում է Ապարանի և Աշտարակի սահմանագծում: Արայի գյուղի մոտ՝ Արագած սարի ստորոտի անառիկ լեռնաբազուկների մեկի երեք, տերրասաձև դասավորված սարահարթերի վրա: Ստորին,միջին հարթակները բոլոր կողմերից դժվարամատչելի են, միայն Արագած սարի կողմից մի նեղ լեզվակով միանում է լեռնաբազուկին:Այդ մասը պաշտպանվել է, տեղական հսկայական որձաքարերով կառուցված 6-7 մ հաստությամբ պարիսպը, որը պահպանվել է մոտ 3-3,5 մ բարձրությամբ:
Բերդը կարևոր պաշտպանական կառույց է: Նրա դիրքը թույլ է տալիս իշխելու Արագած-Արայի լեռ տարածությանը և փակել գավառի մուտքը Արագածոտն- Աշտարակի կողմից: Նիգատուն գյուղի բերդը կառուցողական ձևերով կարելի է թվագրել մ. թ. ա. X-VIII դարերին:

ՆՈՐԱՇԵՆ

Երնջատափից հյուսիս-արևելք՝ Ծաղկունյաց լեռնալանջի ստորոտում, տարածվում է այս փոքրիկ գյուղը: Բնակիչների հիմնական մասը վերաբնակվել է Երևան քաղաքում: Այժմ այնտեղ ապրում է միայն մի քանի ընտանիք:
Գյուղի արևելյան կողմում՝գերեզմանոցում, գտնվում է XIX դարի կեսերին կառուցված կիսավեր եկեղեցի: Այն ուշագրավ է նրանով, որ այստեղ որպես պատերի շինաքար օգտագործվել են ավելի հին շինության քարեր, որոնք ունեն քառակուսի հատակաձև և 1-1,5 մ երկարություն: Քարերի 4 անկյուններում փորված են ակոսներ: Քարերից մեկի վրա պարզ երևում է մարդու պատկեր, մյուսների վրա փորագրված են խաչելության, հավերժության և այլ պատկերներ: Քարերի մշակման այս եղանակը հատուկ է V-VII դարերին (Ապարանի, Զովունիի, Վարդենիսի քարակող մահարձաններ, սյունաքարեր):
Նոր եկեղեցու արևմտյան կողմում՝ գետնի մակերեսին հավասար, երևում են ուղղանկյան տեսք ունեցող բավական ընդարձակ շինության հիմքեր: Մի քանի տեղ կրաշաղախի բարձրությունը հասնում է 50-70 սմ: Երեսպատման ոչ մի քար չի պահպանվել: Հավանաբար հենց այդ շենքի քարերն են օգտագործվել XIX դարում կառուցված եկեղեցում: Հին շենքի ներսում և շրջապատում կան XI-XIII դարերի տապանաքարեր:

ՇԵՆԱՎԱՆ

Գտնվում է Ապարանից 15 կմ հարավ՝ Ապարան- Երևան ավտոճանապարհի աջ կողմում:
Գյուղը մատենագիտության մեջ հիշատակվում է երկու անգամ: 1644 թ. Սահակ գրչի ցուցակում այն կրում է Խոտավիտ անունը: Երկրորդ անգամ հիշվում է Զաքարիա Քանաքեռցու պատմության մեջ:
1957թ. գյուղում շինարարական աշխատանքներ կատարելիս գտնվել է արծաթե դրամների գանձ: Ողջ գանձը բաղկացած է եղել Օմայական (արաբական) դրամներից, որոնք կտրվել են հիջրայի 87-119 թթ. (արաբական ժամանակագրությամբ, 705-706-737 թթ. քրիստոնեական ժամանակագրությամբ) միջև Տիգրիսի ստորին հոսանքի մոտ հայտնի Վասիտ քաղաքում, ինչպես նաև Սուկ-Մին-ալ-Ահվազում և Քիրմանում: Դրամներից 12-ը պահվում են Հայաստանի պետական թանգարանում:
XIX դարի վերջին շենավանցիները գյուղի կենտրոնում կառուցել են եկեղեցի, որի կառուցմանը 1900 թ. նյութական միջոցներով օգնել է Խրիմյան Հայրիկը: Եկեղեցին չի պահպանվել:

ՉՔՆԱՂ

2002թ. սկսվեց կառուցվել «Սուրբ Ստեփանոս» եկեղեցին: Եկեղեցաշինության նախաձեռնողներն էին Հրաչ, Աղվան, Ռուբիկ Հովսեփյան եղբայրները, իրենց ծնողների՝

Գառնիկ և Անժելա Հովսեփյանների պատվին:
Եկեղեցու ճարտարապետներն են Հովհաննես Սանոսյանը և Գրիգոր Նալբանդյանը:
2004թ. հունիսի 20-ին եկեղեցին օծվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ի կողմից:
77-ամյա Գառնիկ Հովսեփյանը և 76-ամյա Անժելա Հովսեփյանը արժանացել են Հայ Առաքելական եկեղեցու բարձրագույն՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշանի:

ՎԱՐԴԵՆԻՍ

Քասաղ գետի ոլորապտույտներից մեկի վրա՝ Ապարանից 5 կմ հարավ, գտնվում է Վարդենիս գյուղը: Բնակավայրի հարավային կողմում՝ Յոթվերքի աղբյուրաշարքի դիմաց, երեք կողմից դժվարամատչելի բարձրության վրա մնում են ոչ մեծ դղյակի հիմքեր: Պահպանված հատվածներից երևում է, որ պարիսպները շարված են տեղական անմշակ և տաշված որձաքարով: Որոշ հատվածներում պարիսպն ունեցել է 3-4 մ հաստություն: Պարիսպների ներսում, ինչպես նաև նրանցից դուրս կան շինությունների հիմքեր: Պատահական աշխատանքների ժամանակ այստեղից գտնվել են միջնադարյան խեցեղեն, XIII դարի վրացական դրամ: Կառուցողական արվեստով հուշարձանը կարելի է թվագրել XII- XIII դարերին:

Գյուղատեղ: Գտնվում է գյուղի տարածքի արևմտյան ծայրում՝Արագած սարի ստորոտին, երկու կողմից ձորակներով շրջապատից անջատված մոտ մեկ կմ երկարությամբ լեզվակի վրա: Տեղում այժմ պահպանվում են շղթայաձև իրար միացած շինությունների հիմքեր: Այստեղից է Վարդենիս բերվել և որպես գերեզմանաքար օգտագործվել 1,14 մ երկարությամբ քառակող սյունաքարը: Քարի չորս եզրերին կլոր կիսասյուներ են հանված, մոտավորապես այն նույն ձևով, ինչպես Թալինի քառակող մահարձանների վրա: Քարի երեսներից մեկը հարթ է, մյուս երեսի վրա երկու ակոս է հանված և միջնամասում ստացվել է գոգավոր կիսասյուն: Երրորդ երեսին Քասաղի բազիլիկից լավ հայտնի պատկերն է. քանդակված է հավասարաթև խաչ, որի թևամիջյան տարածություններում պատկերված է չորս պսակաթերթ ունեցող ծաղիկ: Ինչպես Ապարանի կոթողներում, խաչը հենված է պարսկական ատրուշան հիշեցնող ոտքի վրա: Այստեղ միակ տարբերությունն այն է, որ խաչը շրջանակի մեջ չի վերցված: Բոլոր դեպքերում բնակատեղիից բերված քառակող սյունաքարը ժամանակակից է Քասաղի պատվանդաններին, որով և կարելի է որոշել բնակավայրի գոյության ժամանակը (IV-VI դարեր):

ՎԱՐԴԵՆՈՒՏ

Գյուղը գտնվում է Արագածի ստորոտին՝ Արայի լեռան դիմաց: Այդ գյուղը 1250-ական թթ. Քուրդ Ա Վաչուտյանի իշխանանիստ հիշված Վարդենիսն է:
Գյուղը հարուստ է միջնադարյան շինություններով: Դրանցից մեկը արևմտյան կողմում մոտ 70 մ երկարության պարիսպն է, որ երբեմնի հզոր բերդի հատվածներից մեկն է: Շարվածքի համար օգտագործված են տեղական անմշակ որձաքարեր: Պարսպով շրջապատված տարածության ներսում՝ ամենաբարձր կետում, կառուցված է փոքրիկ եկեղեցի: Հուշարձանը լավ պահպանված է, ունի երկթեք քարե սալերով ծածկ: Կառուցված է սև տուֆի սրբատաշ քարերով: 1907 թվին գյուղի բնակիչները այս փոքրիկ եկեղեցու առաջ կառուցել են բավական ընդարձակ, թաղածածկ դահլիճ, որի հետևանքով հնագույն եկեղեցին վերածվել է նոր շինության աբսիդի և չի առանձնանում:

Խաչաքար գյուղատեղ: Ընկած է գյուղից 1,5 կմ հյուսիս- արևմուտք:Պահպանվել են միջնադարյան կացարանների մնացորդներ: Գյուղը բավականին մեծ է եղել, այդ են վկայում ավերակները:

Գյուղատեղի հյուսիսային ծայրին՝աղբյուրից 50-60 մ արևելք, երևում են միանավ եկեղեցու հիմքեր: Թեև շինությունն ավերված է, հողով ծածկված, բայց տեսանելի են թե՛ խորանը և թե՛ սեղանի կողքի փոքրիկ ավանդատները:
1979 թ. գյուղատեղում գտնվել է պարթևական դրամների գանձ: Դրամական այդ գանձի հայտնվելը Արագածի ստորոտին հաստատումն է այն բանի, որ հնագույն շրջանում ևս Նիգ-Ապարանով է անցել Արարատյան դաշտ-Հյուսիսային Հայաստան-Վրաստան առևտրատնտեսական ճանապարհը: Միաժամանակ այն ապացույցն է այս բնակավայրի՝ դեռ մ. թ. ա. առաջին դարում գոյություն ունենալու փաստի:
Բեռդ: Գտնվում է գերեզմանոցից մոտ 250 մ արևմուտք: Զբաղեցնում է երեք կողմից դժվարամատչելի բարձրության գլխամասային հատվածը՝ մոտավորապես կես հեկտար տարածություն: Պարիսպները շարված են անմշակ քարով: Վերին պարիսպը ունի գրեթե ուղղանկյուն հատակագիծ, մուտքը արևելյան կողմից է: Պատերի երկրորդ շարքը ձգվում է բարձունքի ստորոտին զուգահեռ և փակում է միայն բերդի հարավային և արևելյան ավելի վատ պաշտպանված հատվածները: Մասնավոր պեղումներից 20-30 սմ խորությունից գտնվեցին միջնադարյան խեցեղենի կտորներ, որոնցից մի քանիսը կրում են տարբեր զարդագծեր:

ՔԱՍԱՂԻ ԲՆԱԿԱՏԵՂԻ

Քասաղ գյուղը գտնվում է Վարդենիսից 3 կմ հարավ՝ Քասաղ գետի աջ ափին: Գյուղից 1 կմ հյուսիս-արևելք՝ Եղիպատրուշի կամրջի դիմաց, պահպանվում են հնագույն ժամանակներից մինչև ուշ միջնադար գոյատևած բնակատեղիի հետքեր:
Բնակատեղին տարածվում է քառանկյուն բարձրավանդակի վրա և գրավում է շուրջ 2,5 հեկտար տարածություն: Հնագույն ժամանակներում բնակատեղին շրջափակված է եղել կիկլոպյան տիպի պարսպով, որի մի փոքրիկ հատվածը պահպանվել է բարձրավանդակի հարավային եզրին: Պատը շարված է անմշակ, ահռելի մեծության իրար վրա հարմարեցված քարերով: Պատի մեջ լցված են ավելի մանր քարեր:Հետագայում բնակատեղին շրջափակվել է նոր պարսպով: Շրջապարսպի ներսում մնում են շղթայաձև իրար միացած կացարանների մի քանի համակարգեր: 1981թ. աշնանը բնակատեղիի հյուսիսային մասում շինարարական աշխատանքներ կատարվեցին: Բնակատեղիի տարածքում բացված մոտ 80 մ երկարությամբ ջրմուղի և նրան ուղղահայաց եռաշարք առուների մեջ, կացարանների տեղում թափված էին սև, փայլուն, ինչպես նաև կենցաղային խեցեղենի մեծ թվով բեկորներ, բրոնզից առարկաներ, քարից աղամաններ, կոկիչ, կավից և սարդիոնից պատրաստված ուլունքահատիկներ:
Բնակատեղիի արևմտյան կողմում՝պարիսպներից դուրս, կան 2-5 մ տրամագծով դամբարաններ, որոնք եզերված են քարե օղակներով:
ՄԻԱՆԱՎ ԵԿԵՂԵՑԻ. Գտնվում է բնակատեղիի հարավային կողմում՝ բարձրավանդակի ելուստներից մեկի տակ, մի կողմից հպված է բնական ժայռին: Ուղղանկյուն (6,4x 16 մ)միանավ շինություն է, որի պայտաձև խորանը կառուցված է միջին մեծության, պայտաձև մշակված քարերով, սրահի պատերը լավ հարթեցված են տեղական խոշոր որձաքարով: Հողի տարբեր շերտերից գտնվել են ջնարակված ու հասարակ խեցեղենի կտորներ, XVIII դարի տառաձևերով արձանագրված խաչքարի բեկոր, վրացական պղնձադրամ (կտրված Թամար թագուհու օրոք): Այժմ եկեղեցու հիմնապատերը գետնի երեսից բարձր են 1- 2,2 մ:
ԿՈԹՈՂ: Նախապես գտնվել է բնակատեղիի տարածքում:Այժմ այս խիստ արժեքավոր կոթողի բեկորը տեղափոխվել է իր նախկին տեղից ու դրվել Քասաղ գյուղի հարավային կողմում: Հետաքրքրական պատկեր է քանդակված սյան վրա:
Քասաղի սյունաքարի մասին Բ.Առաքելյանը գրել է. « Այս դժվար բացատրելի քանդակը, հավանաբար, առասպելական կամ կուլտուրային նշանակություն ունի: Կոթողի ձևը, ինչպես և ինքը՝ քանդակը բավականաչափ արխաիկ է, թերևս IV- V դարերի գործ է»:

ՔՈՒՉԱԿ

Քուչակ գյուղը (պատմական անունը՝ Ճերմակ վանք, 1610թթ.՝Ալա- Քուչակ)գտնվում է Արագած սարի ստորոտին՝Ապարանից 10 կմ հարավ, Ապարան-Երևան ավտոճանապարհի երկու կողմում:

ՄԻԱՆԱՎ ԿԱՌՈՒՅՑ: Գտնվում է Լուսաղբյուրի մոտ՝ հայրենիքի համար զոհված քուչակցիների հուշարձանի հարավային կողմում: Կառուցված է մաքուր տաշված կարմրավուն տուֆից և տեղական անմշակ որձաքարից:

ԽԱՉՔԱՐ: Կանգնեցված է միանավ կառույցից մի փոքր ավելի ձախ՝ Լուսաղբյուրի վերևում: Կերտված է մեծ վարպետությամբ, բարձր ճաշակով: Սակայն կարծում ենք, որ խաչքարի այժմյան տեղը նախնական տեղը չէ այն մեր օրերում է դրվել Լուսաղբյուրի բարձունքում:

Լուսաղբյուրի մոտ՝ գյուղի կենտրոնում, մնում են միջնադարյան գերեզմանատներ՝ միջնադարյան տապանաքարերով, խաչքարերի պատվանդաններով, խաչքարերով:

ԲԵՐԴ : Գտնվում է գյուղի հարավարևմտյան կողմում, Քուչակ- Արագած ճանապարհի աջ կողմում: Կառուցված է բավականին դժվարամատչելի բարձրության վրա: Այն երեք կողմից անառիկ է, իսկ հյուսիսարևմուտքում մի փոքրիկ լեզվակով միանում է դիմացի բարձունքներին: Հենց այս մասում էլ կառուցված է ամուր ու հզոր պարիսպ՝ հսկա քարերով, առանց շաղախի: Պատի հաստությունը կազմում է 3-4 մ: Ցավոք, ամբողջական պարսպից միայն այդ հատվածն է որոշ չափով պահպանվել: Բայց ինչպես այդտեղ, այնպես էլ արևելյան կողմում, պարսպից դուրս՝ հողի երեսին, թափված են օբսիդաքարեր, հնագույն խեցեղենի կտորներ:

ԳՅՈՒՂԱՏԵՂ: Քուչակից 1,5 կմ դեպի արևմուտք՝ Արագածի բարձրաբերձ ստորոտին, եղել է միջնադարյան բնակավայր: Այստեղից սկիզբ են առնում մի շարք աղբյուրներ, որոնց սառնորակ ջրերը այժմ հոսում են քուչակցիների տները:

Աղբյուրաշարից ներքև երևում են տասնյակ կացարանների հիմքեր: Աղբյուրներից վեր՝ արևմտյան և հարավային կողմից դժվարամատչելի բարձրության եռանկյունաձև տարածքում, կառուցված է բավական ամուր, իրար մեջ բացվող սենյակներով ամրոց-դղյակ: Տեղում 1-1,3 մ բարձրությամբ երևում են 10 մեծ ու փոքր շինությունների հիմքեր: Արտաքին պատերի հաստությունը 1,8-2,7 մ է: Պատերը շարված են միջին մեծության անմշակ որձաքարով, շարվածքի մեջ լցված են մանր քարեր ու հող:

Միջնադարում կառուցված ամրոց- դղյակը ուսումնասիրված չէ:

ԱՊԱՐԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ

ԱՊԱՐԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ: Ապարանի շրջանը պատմական Նիգ գավառը, համակողմանիորեն ներկայացված է Հայաստանի պատմության պետական թանգարանում:

Առաջին ցուցանմուշը Տրդատ Առաջին թագավորի վիմագիր հրովարտակն է, որ գրվել է մեր թվարկության 67 կամ 68 թվականներին:

Այս քարը ժամանակին Ապարան գյուղի բնակիչներն իջեցրել են գյուղի հյուսիսային բարձունքում գտնվող բերդից և վերածել սանդի: 1908 թվականին այն հայտնաբերել է Գարեգին Հովսեփյանցը: Նիկողայոս Մառի պահանջով գավառապետ Լեմերմանը մեծարժեք հուշարձանը տեղափոխել է Էջմիածին, որտեղից էլ խորհրդային իշխանության հաստատումից հետո այն տեղափոխվել ու այժմ ցուցադրվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում: Արձանագիր քարը ցուցադրվում է առաջին հարկի վիմագիր քարերի բաժնում:

1950-ական թվականներին ճարտարապետ Ա. Սահինյանը պեղել է Ապարանի Քասաղի բազիլիկ եկեղեցին: Այդ պեղումներից հետո, բազիլիկ եկեղեցու խոյակներից մեկը, որի վրա փորագրված է շնագլուխ մարդու պատկեր, տեղափոխվել է Հայաստանի պատմության պետական թանգարան: Քանդակը հայկական վաղ քանդակագործության նմուշներից է և կատարված է մոտավորապես 340-350-ական թվականներին: Այն այժմ ցուցադրվում է թանգարանի առաջին հարկի «Զվարթնոց» դահլիճում:

Նույն պեղումներից հայտնաբերվել և Հայաստանի պատմության պետական թանգարան է տեղափոխվել 10-րդ դարի բյուզանդական 4 ոսկեղրամ:

Թանգարանի ցուցանմուշների մեջ է Զովունիից տարված գերեզմանի կափարիչը: Ըստ կափարիչի վրա փորված արձանագրության՝ այն պատկանել է Վասակի որդի Դավիթ Գնթունի իշխանին: Ժամանակի մեծանուն ճարտարապետ Թորոս Թորամանյանը, հետազոտելով Զովունիի ժայռերի մեջ փորված գերեզմանը, նկատել է, որ կափարիչը տեղում չէ:

Հետագայում կափարիչն անհայտ ճանապարհով ընկել է Հայաստանի պատմության պետական թանգարան: Վաստակաշատ գիտնական, վիմագետ Սեդրակ Բարխուդարյանը, տառաձևերից ելնելով, կափարիչը թվագրել է 6-րդ դարի առաջին քառորդով:

Կափարիչի վրա փորագրված է. «Այս է հանգիստ Դաւթի Գր(ն)թունեաց տ(եառ) ն որդոյ Վասակա բարէպաշ(տի)»:

Թանգարանի երկրորդ հարկի «Կիրառական արվեստ» բաժնում ցուցադրվում է Ապարան ավանից տարված մի շատ գեղեցիկ, կանացիակերպ աղամա: Աղամանը բաց դարչնագույն է, նրա վրա եղած զնդիկներից կազմված զոտիները կարմիր, կանաչ, կապույտ երանգ ունեն և մի առանձին շուք են հաղորդում աղամանին: Այս աղամանը, ի թիվս կիրառական արվեստի շատ արժեքավոր գործերի, մտել է «Ավրորա» հրատարակչության (Սանկտ Պետերբուրգ) պատրաստած «Կերամիկա» բացիկների հավաքածուի մեջ: Հավաքածուն տպագրվել է գունավոր, շքեղ հրատարակությամբ, 55 հազար տպաքանակով, անգլերեն ու ռուսերեն մակագրություններով և վաճառվել է Խորհրդային Միությունում և արտասահմանում:

Թանգարանի ֆոնդում են պահվում ապարանցի եզր կաթողիկոսի (7-րդ դար) Ավանի արձանագրությունը և Նիգի տերերից Վաչուտյան իշխանների (13-14-րդ դարեր) զինանշանը, վարդենիսցի Լարիսա Սիմոնյանի «1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Առաջաբան ----------3
2. Պատմական ակնարկ ----------4
3. Համայնքի իրավիճակի վերլուծություն ----------18
4. Աշխարհագրական ակնարկ ----------21
5. Բուսական և կենդանական աշխարհը ----------22
6. Ապարանի ավելի քան 100-ամյա դպրոցի հիմնադիր Եղիշե Տեր-Հովհաննիսյան ----------25
7. Զարգանդ Դարյան ----------27
8. «Ասք Նգա» - ասք սիրո և նվիրումի ----------29
9. Ապարանի բանահյուսություն ----------33
10. Ապարանի գուսաններ ----------38
11. Գնդապետներ և ակադեմիկոսներ ----------39
12. Նիգ-Ապարանի պատմաճարտարապետական հուշարձանները ----------40
13. Ապարանը Հայաստանի պատմության թանգարանին ----------54